ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

ԼՍԵՑԻՆ – Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Միշա Վարուժանի Թադևոսյանի ***«Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում»*** խորագրով թեկնածուական ատենախոսության նախնական պաշտպանությունը:

Թադևոսյան Մ.-*«Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում»* *թեմայով* հետազոտության **արդիականությունը** բխում է այն հանգամանքից, որ քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման գործընթացը, որի հիմքում ընկած են անձի կրթության իրավունքի իրացման, ցկյանս ուսումնառության, լրացուցիչ և շարունակական կրթության հայեցակարգերը, հումանիստական մանկավարժության հարացույցը, բոլորի համար կրթության հասանելիության և մատչելիության գաղափարներն ու սկզբունքները, մեծահասակների կրթության կարևոր, սակայն, քիչ ուսումնասիրված ոլորտներից է՝ չնայած, որ անձի կրթադաստիարակչական ճանապարհով վերափոխումը դեռևս վաղ ժամանակներից գտնվել է անտիկ փիլիսոփաների, անձի զարգացման հիմնախնդրով զբաղվող հոգեբանների, մանկավարժների, սոցիոլոգների ուշադրության կենտրոնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատությունից զրկված անձանց վերադաստիարակությունն ու կրթությունը բարդ և երկարատև սոցիալ-մանկավարժական գործընթացներ են, սակայն պատմական տարբեր ժամանակահատվածներում առկա փորձառությունը հնարավորություն է տալիս դիտարկել կրթությունը՝ որպես պատիժ կրող անձանց արդյունավետ ուղղման միջոց, կրկնահանցագործության կանխարգելման կարևոր գործոն: Ներկայումս քրեակատարողական համակարգում կրթության զարգացման միտումները և այդ ոլորտի նկատմամբ շարունակաբար մեծացող հումանացման պահանջն առաջադրում են մի շարք նոր մարտահրավերներ, որոնք ընդհանուր առմամբ միտված են հանցանք կատարած անձի վերադաստիարակությանն ու վերասոցիալականացմանը, դրանց ուղղված հմտությունների ձեռքբերմանը, անհրաժեշտ մեխանիզմների և պայմանների ապահովմանը: Նշվածների շարքում առանձնահատուկ դերակատարում է ստանում կրթության կազմակերպումը:

ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման անհրաժեշտությունը բխում է ինչպես դատապարտյալների և կալանավորված անձանց, այնպես էլ հասարակության և պետության շահերից: Այսպես, պետության համար թիրախային այս խմբի կրթության կազմակերպումը հասարակության հումանացան, հանրային անվտանգության ապահովման, սոցիալապես առողջ քաղաքացու ձևավորման,

կրկնահանցագործությունների կանխարգելման և իրավախախտումների ընդհանուր սոցիալական պատկերի բարելավման երաշխիք և հնարավորություն է: ՔԿՀ-ներում պատիժ կրող անձի համար՝ հասարակություն ինտեգրվելու կարողությունների զարգացման, մարդու իրավունքների կարևորման, իրավունքը որպես սոցիալական արժեք գիտակցելու, ազատության գաղափարը արժևորելու և ապագայի նկատմամբ դրական կողմնորոշում ձևավորելու, ինչպես նաև ինքնակրթման և ինքնադաստիարակության միջոց և հնարավորություն է:

Այս գաղափարներն իրենց արտացոլումն են գտել նաև կրթության իրավունքն ամրագրող միջազգային հիմնարար, հռչակագրային և պարտադիր բնույթ կրող ուղենիշներում՝ կարևորելով պետությունների կողմից յուրաքանչյուրի համար կրթության իրավունքի իրացման հանձնառությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հայաստանյան իրականության հետևյալ առաջնահերթություններով.

- Հայաստանյան իրականության մեջ բազմիցս շեշտադրվում է կրթության ներառականության և հասանելիության կարևորությունը բոլորի համար: ՀՀ-ում կրթության իրավունքի և դրա իրացման, հավասար հնարավորությունների, հասանելիության և մատչելիության վերաբերյալ ամրագրված են մի շարք իրավական կարգավորումներ: Անձի կրթության իրավունքի ապահովումը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով (2014-2015թթ.), ՀՀ Կառավարության տարեկան գործունեության ծրագրերով (2019-2022թթ.), իսկ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքը ՀՀ-ում ամրագրված է արդարադատության բնագավառի քաղաքականության մեջ:
- ՀՀ արդարադատության բնագավառի բարեփոխումներում առանձնակի կարևորվում է քրեակատարողական համակարգում կրթության միջոցով պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցման հիմնախնդիրը:
- ՔԿՀ-ում պատիժ կրող անձանց վերասոցիալականացումը ՀՀ-ում սահմանված է որպես ռազմավարական ուղղություն «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ.-ների ռազմավարության» համաձայն:

Այս ամենը պահանջում է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման և կառավարման գործում ցուցաբերել միջգերատեսչական համագործակցություն, իրականացվող աշխատանքների մանկավարժականացում, նրանցում դասավանդող կադրերի պրոֆեսիոնալացում և մանկավարժական գործընթացի հումանացում:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախացումից հետո ՀՀ ՔԿՀ-ներում առկա կրթական գործընթացները և գործող իրավիճակը գրեթե ուսումնասիրված չեն գիտական մանկավարժների կողմից, անհրաժեշտություն է առաջանում մասնագիտական մակարդակով ուսումնասիրել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման գործընթացը և գործող պրակտիկան, վերհանել առկա հիմնախնդիրները և մշակել հիմնախնդիրների լուծման գիտականորեն հիմնավորված համակարգ։

Հետազոտության նպատակը ՀՀ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման առկա վիճակի ուսումնասիրությունն է, հիմնախնդիրների բացահայտումն ու կրթության կառավարման և կազմակերպման ժամանակակից համակարգի մշակումն է։

Հետազոտության օբյեկտը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման գործընթացն է։

Հետազոտության առարկան ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման համակարգն է։

Հետազոտության վարկածն այն ենթադրության մեջ է, որ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման գործընթացն առավել արդյունավետ կլինի եթե.

1. Ուսումնասիրվեն ՔԿՀ-ներում կրթության կազմակերպմանն առնչվող միջազգային և ներպետական կարգավորումները, մանկավարժական գաղափարներն ու մոտեցումները, եվրոպական և հետխորհրդային երկրների փորձը։
2. Բացահայտվեն և վերլուծվեն ՔԿՀ-ում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման հիմնախնդիրներն ու մարտահրավերները։
3. Մշակվի ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ հետևյալ բաղադրիչներով՝
    - քրեակատարողական համակարգում կրթության կառավարման մոդել,
    - ՔԿՀ-ներում կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթների շրջանակ,
    - ՔԿՀ-ներում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերն արտացոլող մոդել և դրա իրականացման մանկավարժական պայմաններ,
    - ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաներ ու սովորողների (պատիժ կրող անձանց) կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչը,
    - ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշներ։

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպմանն առնչվող մոտեցումները, դրանք կարգավորող ազգային և միջազգային օրենսդրությունը, առկա միջազգային փորձը,
- բացահայտել ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման հիմնախնդիրները,
- մշակել արդի պայմաններում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ։

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ.

1. հայրենական մանկավարժական գիտության մեջ մասնագիտական մակարդակով առաջին անգամ ուսումնասիրվել է ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակը, անկախացումից ի վեր ձևավորվող պրակտիկան պատմական զարգացման համատեքստում,
2. վեր են հանվել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա հիմնախնդիրներն ու խոչընդոտները՝ քաղաքականության և պրակտիկայի մակարդակում, ուսումնասիրվել է եվրոպական և հետխորհրդային երկրների փորձն այդ ուղղությամբ,
3. մշակվել է ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ, որի բաղադրիչներն են՝ քրեակատարողական համակարգում կրթության կառավարման մոդելն ու կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթները, ՔԿՀ-ում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերը արտացոլող մոդելն ու դրա իրականացման մանկավարժական պայմանները, ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաներն ու սովորողների (պատիժ կրող անձանց) կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչը, ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշները։

Հետազոտության տեսական նշանակությունը ձևավորվում է ատենախոսության արդյունքներից, որոնք կարող են՝

1. նպաստել ՔԿՀ-ներում իրականացվող ողջ աշխատանքի մանկավարժականացմանը և մասնագիտացմանը,
2. հարստացնել ընդհանրապես մանկավարժության և մասնավորապես մեծահասակների կրթության (անդրագոգիկայի), պենիտենցիար մանկավարժության տեսությունն ու պրակտիկան,

3. հարստացնել հայ մանկավարժության տեսության պատմությունը՝ ներկայացնելով ՀՀ-ում անկախացումից ի վեր քրեակատարողական համակարգում կրթության իրականացման պատմական զարգացումը,
4. նպաստել համեմատական մանկավարժության զարգացմանը՝ ներկայացնելով հետխորհրդային երկրների և միջազգային փորձը այս բնագավառում:

Հետազոտության գործնական նշանակությունը ամփոփված է ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներում ու կատարված հետազոտության արդյունքներից, որոնք կարող են՝

1. գիտական հասարակության ուշադրությունը հրավիրել ՀՀ նորագույն պատմության ՔԿՀ-ներում մեր կողմից բացահայտված կրթության հիմնախնդիրների վրա,
2. օգտագործվել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության քաղաքականության մշակման աշխատանքներում՝ ապահովելով գիտականորեն հիմնավորված փաստահենքություն,
3. օգտակար լինել ՀՀ ՔԿՀ-ներում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերի, դասընթացների պլանավորման, մշակման, իրականացման և գնահատման պատասխանատուներին, ՔԿՀ-ում դասավանդողներին,
4. օգտակար լինել դասախոսներին, ասպիրանտներին, պենիտենցիար մանկավարժություն, անդրագոգիկա, կրթության փիլիսոփայություն, մանկավարժության պատմություն, իրավաբանական հոգեբանություն, քրեակատարողական իրավունք դասավանդելիս, համապատասխան հատուկ դասընթացներ վարելիս, այդ թեմայով ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ մշակելիս:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

- ՔԿՀ-ներում կրթության նպատակի վերանայումը, պատժողական քաղաքականությունից հրաժարվելն ու վերականգնողական սկզբունքների ներդրման քաղաքականության անցնելը հասարակության հումանացման և պետության անվտանգության ապահովման կայուն երաշխիք են:
- Պենիտենցիար մանկավարժության ոլորտում ՀՀ և միջազգային փորձի ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը մեծապես նպաստում են մեծահասակների կրթության բնագավառի հարստացմանը, առկա հիմնախնդիրների և մարտահրավերների բացահայտմանն ու լուծման արդյունավետ ուղիների մշակմանը:

- ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել ՀՀ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացման մակարդակը՝ մարդու իրավունքների միջազգային ուղենիշային համատեքստում։
- ՔԿՀ-ներում կրթության արդիականացումը մեծապես կախված է կրթության կառավարման և կազմակերպման այնպիսի համակարգի առկայությունից, որի բաղադրիչները կապահովեն.
  - միջգերատեսչական համագործակցություն կառավարման գործընթացում,
  - համապատասխան բովանդակություն, մեթոդաբանական գործիքակազմ, մանկավարժական պայմաններ ուսուցման գործընթացում,
  - չափելի վերջնարդյունքներ մանկավարժական գործընթացի հիմնական սուբյեկտների (դասավանդողների և ունկնդիրների) աշխատանքը գնահատելիս։

<u>**Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը:**</u> Երաշխավորվում է մանկավարժահոգեբանական գիտությունների արդի նվաճումների վերլուծությամբ, հարցումների արդյունքների վիճակագրական վերլուծությամբ, մաթեմատիկական մշակմամբ։ Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմք են հանդիսանում՝

1. ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ քրեակատարողական ծառայության, ՔԿՀ-ների 2015-2019թթ-ների պաշտոնական վիճակագրական տվյալները,
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական վիճակագրական տվյալները,
3. «Արթիկ երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի, «Աբովյանի N2 հատուկ արհեստագործական պետական ուսումնարան» կրթահամալիր ՊՈԱԿ-ի, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվետվություններն ու արխիվային փաստաթղթերը,
4. ՀՀ 5 ՔԿՀ-ներում («Աբովյան», «Արմավիր», «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Սևան») 2019-2020թթ-ներին իրականացվող կրթական ծրագրեր մասնակից, ազատազրկման դատապարտված *70* անձանց և նշված ՔԿՀ-ներում դասավանդող *15* ուսուցիչների հարցաթերթիկավորման արդյունքում ստացված տվյալները,
5. ՔԿՀ-ներում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերը սահմանելու նպատակով մանկավարժության բնագավառի գիտնականների հետ իրականացված հարցազրույցների արդյունքները,

6. փորձնական տվյալները, որոնք ստացվել են հեղինակի կողմից ՀՀ ՔԿՀ-ներում 2017-2020թթ.-ներին դասավանդման, ինչպես նաև ուսումնասիրությունների իրականացման փուլում[1]:

Հետազոտության արդյունքները քննարկվել են «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի Մանկավարժության ամբիոնի 28.04.2021-ին և 23.06.2021-ին կայացած սեմինարներում, ներկայացվել «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի 26.04.2021-ին կայացած «Լեզու, մշակույթ, կրթություն» խորագրով միջազգային գիտաժողովում:

Հետազոտության բազա են հանդիսացել ՀՀ 5 ՔԿՀ-ները՝ «Աբովյան», «Արմավիր», «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Սևան»:

Հետազոտությունն իրականացվել է երկու փուլով.

Առաջին փուլում /2019-2020/ ուսումնասիրվել, հավաքագրվել և համակարգվել է թեմային առնչվող գրականությունը, ազգային և միջազգային օրենսդրությունն ու դրանց առնչվող իրավական փաստաթղթերը, ինչպես նաև ՔԿՀ-ներում կրթության միջազգային, տարածաշրջանային և ազգային պրակտիկան:

Երկրորդ փուլում /2020-2021/ հստակեցվել է հետազոտության բովանդակությունը, մշակվել են հարցաթերթիկները, որոնց հիման վրա իրականացվել են սոցիոլոգիական ուսումնասիրություններ: Իրականացված աշխատանքների հիման վրա շարադրվել է ատենախոսությունն ըստ համապատասխան պահանջվող կառուցվածքի, տպագրվել են 7 հոդվածներ, ձևակերպվել են եզրակացություններն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Աշխատանքը բերվել է ամբողջական և վերջնական տեսքի:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 142 էջ:

Օգտագործվել է 152 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է **«Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացումը»,** բաղկացած է հետևյալ երեք ենթագլուխներից.

[1] Հեղինակը ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում 2017-2020թթ.-ում աշխատել է որպես ՔԿՀ-ում դասավանդող, ուսումնական մասի մասնագետ:

- «ՔԿՀ-ներում կրթության նպատակի հիմնախնդիրը»,
- «ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթությունը մարդու իրավունքների միջազգային ուղենիշներում»,
- «ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման իրավական հիմքերը ՀՀ-ում»:

Ատենախոսության երկրորդ՝ **«Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման պրակտիկան»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից .

- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպումը սկանդինավյան որոշ երկրներում (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա)»,
- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպումը հետխորհրդային որոշ երկրներում (Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա)»,
- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկան ՀՀ-ում»:

Հաշվի առնելով ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման մոդելների բազմազանությունը՝ սույն գլխում ներկայացվել է քրեակատարողական համակարգում միջազգային առաջադիմական ուղենիշներ սահմանողներ, ինչպես նաև օրինակելի մոդել հանդիսացող երկրների (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա) ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկան: Վերջինիս շրջանակում անդրադարձ է կատարվել նաև դեռևս 1969թ.-ին պրոֆեսոր Ն. Քրիստինի կողմից առանձնացված ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հինգ հիմնական մոդելներին (արտահանման, ներմուծման, ինքնաբավության, պայմանագրային և խառը): Մյուս կողմից, անդրադարձ է կատարվել նաև նախախորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման քաղաքականությանը և պրակտիկային, ինչպես նաև առանձնահատուկ կարևորվել և ներկայացվել է հետխորհրդային երկրներից Բելառուսի, Մոլդովայի, Ուկրաինայի փորձառությունը: **Այս գլխում ուսումնասիրվել և վերլուծվել է անկախությունից սկսած ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման և իրականացման գործընթացը:**

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է **«ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման առաջարկվող համակարգը»,** բաղկացած է երկու ենթավերնագրերից.

- «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակի ուսումնասիրություն ու գնահատում»,

- «ՔԿՀ-ներում կրթության կառավարման և կազմակերպման մշակված համակարգ»։

ՀՀ 5 ՔԿՀ-ներում («Արմավիր», «Աբովյան», «Կոշ», «Սևան», «Վարդաշեն») նպատակային սկզբունքով ընտրված ընդհանուր առմամբ 85 անձանց (70-ը՝ դատապարտյալներ, 15-ը՝ դասավանդողներ) շրջանում իրականացված հարցաթերթիկային հարցումների արդյունքների հիման վրա վեր են հանվել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հիմնախնդիրները։ ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա իրավիճակի, այն կարգավորող ազգային և միջազգային քաղաքականության, գործող պրակտիկայի և զարգացման միտումների վերաբերյալ մեր հետազոտության արդյունքներից ելնելով մենք եկել ենք այն եզրահանգման, որ ՀՀ-ում ներկայումս ձևավորվել է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման բավականին փորձ, սակայն գործող համակարգն արդիականացման անհրաժեշտություն ունի։

Այդ նպատակով մշակվել է ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգ, որի բաղադրիչներն են՝ քրեակատարողական համակարգում կրթության կառավարման մոդելն ու կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթները, ՔԿՀ-ում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերը արտացոլող մոդելն ու դրա իրականացման մանկավարժական պայմանները, ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաներն ու սովորողների (պատիժ կրող անձանց) կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչը, ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշները։

Շնորհակալություն ուշադրության համար:

մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյան: Աշխատանքի եզրակացությունների մեջ կիրառվող «պատիժ կրող անձ» տերմինի կիրառման և պատժիչ քաղաքականությունից վերականգնողականի անցման համատեքստում հակասություն եմ տեսնում: Կարծում եմ, որ այս մասի վրա արժե աշխատել, քանի որ դուք ուզում եք անցում կատարել պատժիչ քաղաքականությունից վերականգնողական քաղաքականության, ուստի «պատիժ կրող անձ» տերմինի կիրառումը կարող է խանգարել այդ գաղափարի ընկալմանը:

Պատասխան /ատենախոս/ Մենք օգտագործում ենք ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված համապատասխան տերմինները և հասկացությունները: ՀՀ-ում վերականգնողական արդարադատությունը դեռևս նոր ձևավորման փուլում է գտնվում և առկա աշխատանքներում պարտավոր ենք առաջնորդվել արդեն գործող տերմիններով:

մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյան: Դուք նշեցիք, որ աշխատանքում անդրադարձել եք նաև սկանդինավյան երկրների փորձին: Ինչ տարբերություններ կան այդ երկրների և Հայաստանի բանտային կրթության համակարգերի միջև:

Պատասխան /ատենախոս/: Սկանդինավյան երկրների ՔՀԿ-ներում կրթության կազմակերպման տեսանկյունից երեք հիմնական տարբերություն է առկա՝ 1/կրթության կազմակերպումը համայնքային ուսումնական հաստատություններում՝ ՔԿՀ-ից դուրս, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ, 2/բանտարկյալների համար ՔԿՀ-ներում առցանց ուսումնառության նպատակով ստեղծված են թվային ուսումնառության կենտրոններ, 3/ՔԿՀ-ում կրթության կազմակերպման գործընթացում կարևոր դերակատարում ունեն նաև ՔԿՀ վարչակազմի ներկայացուցիչները:

մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայան: Հետազոտության իրականացման ընթացքում արդյոք հնարավորություն եք ունեցել անմիջապես շփվելու ՔԿՀ-ում դատապարտյալների հետ: Եթե այո, իրենք ինչպես են վերաբերվում կրթությանը, ինչպիսին է իրենց վերաբերմունքը այս ամենին:

Պատասխան /ատենախոս/: Հետազոտության շրջանակում 5 ՔԿՀ-ներում 70 դատապարյալների հետ իրականացվել է անկետավորում: Հետազոտության իրականացման ընթացքում կարևոր մաս է կազմել դատապարտյալների կրթության նկատմամբ վերաբերմունքի, կրթական դասընթացներին մասնակցելու դրդապատճառների, շարժառիթների ուսումնասիրմանը: Մեր հետազոտությունը ցույց է տվել, որ ներկայումս դատապարտյալները ունեն բարձր դրական վերաբերմունք կրթության գործընթացի նկատմամբ: Հիմնական շարժառիթ է հանդիսանում ժամանակի արդյունավետ օգտագործումը, ՔԿՀ համակարգից դուրս անձանց՝ դասավանդողների հետ հաղորդակցությունը, կրթության միջոցով արտաքին աշխարհի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալը և այլն:

մ.գ.դ., պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյան: Ձեր աշխատանքում ՔԿՀ-ում կրթություն ասելով կրթական ինչպիսի մակարդակներ նկատի ունեք: Ուսումնասիրված անձանցից յուրաքանչյուրի կրթության վերաբերյալ արդյոք ունեք համապատասխան տվյալներ:

Պատասխան /ատենախոս/: ՀՀ ՔԿՀ-ներում հետազոտության իրականացման ընթացքում և ներկայումս իրականացվում է ինչպես ոչ ֆորմալ, այնպես էլ ֆորմալ կրթություն: Հարկ է ընդգծել, որ ֆորմալ կրթություն իրականացվում է բոլոր մակարդակներում՝ հանրակրթությունից մինչև հետբուհական կրթություն: Հարցվողների կրթության մակարդակի հետ կապված նշենք, որ հետազոտության շրջանակում հարցված անձանց մեծ մասը ունի միջնակարգ կրթություն, սակայն առկա են նաև թերի միջնակարգ կրթություն ունեցող անձիք, որը լրացուցիչ հիմնավորում և կարևորում է ՔԿՀ-ներում

հանրակրթության կազմակերպումը որպես օրենքով սահմանված նորմի կիրարկման ապահովում: ՔԿՀ-ներում իրականացվող կրթության /ոչ ֆորմալ և ֆորմալ/, դրանցում ընդգրկված անձանց կրթության մակարդակի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են աշխատանքի համապատասխան բաժնում:

մ.գ.թ., դասախոս Ա. Դալլաքյան: ՔԿՀ-ներում վերականգնողական աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու տեսանկյունից կարևոր է նաև պատիժ կրող անձի ազատվելուց հետո նրա աշխատանքին առնչող հանգամանքը: Արդյոք դիտարկվել է այս հանգամանքը հետազոտության շրջանակում:

Պատասխան /ատենախոս/: Մեր աշխատանքում մենք չենք դիտարկել պատիժ կրող անձանց ՔԿՀ-ից ազատվելուց հետո նրանց աշխատանքին առնչվող հարցեր, քանի որ դա դուրս է մեր ուսումնասիրության շրջանակից:

Մ.գ.դ. պրոֆեսոր Ա. Թոփուզյան- Հարգելի գործընկերներ, այժմ ձայն տանք ընդդիմախոսներին ատենախոսության վերաբերյալ կարծիքները ներկայացնելու համար:

Գրախոս՝ Մանկավարժության ամբիոնի դոցենտ՝ մ. գ. թ. Լ. Պողոսյան.

Միշա Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման նվիրված է արդիական և քիչ ուսումնասիրված մանկավարժական հիմնախնդրի լուսաբանմանը՝ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման հիմնախնդրին: Հիմնախնդրի արդիականությունը կասկած չի հարուցում:

Ատենախոսության ներածության մեջ պատշաճ կերպով ձևակերպված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, վարկածը, պաշտպանության ներկայացվող դրույթները և այլն: Ատենախոսի կողմից ընտրված հետազոտության մեթոդները հնարավորություն են տվել ստանալ հավաստի և չափելի արդյունքներ, կատարել գիտական վերլուծություններ:

Ատենախոսի կողմից ձևակերպված գիտական նորույթը հիմնավորված է տեսական և գործնական տեսանկյուններից, իրապես նպաստում է մանկավարժութան տեսական և կիրառական հատվածների հարստացմանը, թույլ է տալիս նորովի դիտարկել մեծահասակների՝ մասնավորապես խոցելի մեծահասակների կրթության հիմնախնդիրը:

Ատենախոսությունը բաղկացած է 3 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից:

Առաջին գլխում ատենախոսը վերլուծության է ենթարկել կրթության իրավունքի իրացման նպատակի հիմնախնդիրը քրեակատարողական հիմնարկներում: Մասնավորապես՝ անդրադարձել է ՔԿՀ-ներում կրթության նպատակի հիմնախնդրին, միջազգային և ազգային քաղաքականությանն ու օրենսդրությանը: Անդրադաձել պենիտենցիար մանկավարժության՝ որպես մանկավարժության առանձին գիտաճյուղի կայացմանը, զարգացմանը, դրան նպաստող հիմնական գործոններին և պայմաններին: Ներկայացրել և քննարկել է ՀՀ-ում ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման իրավական հիմքերը:

Երկրորդ գլուխը նվիրված է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկային: Այս գլխում ատենախոսը անդրադարձել է միջազային լավագույն փորձ համարվող երկրների (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա), հետխորհրդային երկրների (Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա) փորձին, ինչպես նաև ներկայացրել Հայաստանի փորձը անկախության տարիներից սկսած: Այստեղ ատենախոսը վերլուծության է ենթարկել գոյություն ունեցող և ներկայումս ակտիվ կիրառվող մոդելները: Հիմնավորել է տարբեր մոդելների առանձին բաղադրիչների կիրառման անհրաժեշտությունը արդարադատության և կրթության բնագավառների :պետական քաղաքականության մշակման գործընթացում:

Այս գլխում Մ.Թադևոսյանը ուսումնասիրության և վերլուծության է ենթարկել նաև **ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկան ՀՀ-ում:** Անդրադառնալով ՀՀ ՔԿՀ-ներում կրթության գործող համակարգին առանձնացվել են ատենախոսի կողմից վերջին 5 տարիների ընթացքում առկա պրակտիկան, դերակատարները, իրականացվող կրթական ծրագրերի ուղղվածությունն ու պատիժ կրող անձանց ընդգրկվածությունը: Ուսումնասիրվել և ներկայացվել են նաև պետության կողմից ՔԿՀ-ներում իրականացվող ոչ ֆորմալ կրթական դասընթացները՝ ըստ տարիների/2013-2020թթ/:

Երրորդ գլխում ուսումնասիրվել և վերլուծության է ենթարկվել ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակը, մշակվել և առաջարկվել է նոր համակարգ՝ համապատասխան մոդելներով և գործիքակազմով: Ատենախոսի կողմից մշակված ՔԿՀ-ներում կրթության կառավարման և կազմակերպման մշակված համակարգը /112-131-էջեր/ ներառում է այն բոլոր բաղադրատարրերն ու սկզբունքները, որոնք ամբողջացնում են ՔԿՀ-ներում կրթության էությունը, նպատակը, անհրաժեշտ բովանդակությունն ու վերջնարդյունքները:

Ատենախոսի կողմից կատարվել է լուրջ գիտական աշխատանք ՔԿՀ-ներում կրթության կառավարման մոդելի, ՔԿՀ-ներում կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթների, ՔԿՀ-ներում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերն արտացոլող մոդելի և դրա իրականացման մանկավարժական պայմանների, ՔԿՀ-ում դասավանդողների և

սովորողների կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային շրջանակի, ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշների մշակման ուղղությամբ։

Ատենախոսի կողմից մշակած մանկավարժական գործիքները մեծ արժեք են ներկայացնում, օգտակար կարող են լինել ՀՀ ՔԿՀ-ներում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերի, դասընթացների պլանավորման, մշակման, իրականացման և գնահատման պատասխանատուներին, ՔԿՀ-ում դասավանդողներին։

Ատենախոսության բոլոր գլուխները տրամաբանական կապ ունեն միմյանց հետ, տեսական հատվածի վերլուծությունները իրենց տրամաբանական լուծումներն են գտել հետազոտական հատվածում։ Եզրակացությունները արտացոլում են հետազոտության խնդիրների լուծման մակարդակը աշխատանքում։

Առաջարկվում է՝

- Հնարավորության դեպքում առավել շատ ուշադրություն դարձնել ՔԿՀ-ներում այլընտրանքային ծրագրերի իրականացմանը։
- Դասավանդողների կոմպետենցիաների շարքում ներառել այլընտրանքային ծրագրերի իրականացմանը և գնահատմանը ուղղված բաղադրիչներ։
- Մշակված մանկավարժական պայմաններում անդրագոգիկ մոտեցումների համատեքստում կարևորել նաև անչափահասների ներգրավման հիմնախնդիրը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն ինքնուրույն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահաջներին և ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» թվանիշին: Ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Մ.Թադևոսյան/ատենախոս/: Շնորհակալություն տիկ.Պողոսյան առաջարկությունների համար:

Գրախոս՝ Մանկավարժության ամբիոնի դասախոս՝ մ. գ.թ. Ն. Մարկոսյան

ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթադաստիարակչական գործընթացի ուսումնասիրությունը ունի ոչ վաղ անցյալ, չնայած որ անձի՝ կրթադաստիարակչական ճանապարհով վերափոխումը դեռևս վաղ ժամանակներից գտնվել է անտիկ փիլիսոփաների, անձի զարգացման տեսությունների

ուշադրության կենտրոնում: ՔԿՀ-ում պատիժ կրող անձանց կրթության հիմնախնդրի ուսումնասիրությունը անհրաժեշտ է դիտարկել նաև քաղաքացու իրավունքների համատեքստում: Այն ոչ միայն պատիժ կրող անձին ՔԿՀ-ից դեպի արտաքին աշխարհ տեղափոխմանը աջակցելու իրավական մեխանիզմ է, այլև բնականոն անհրաժեշտություն և հրամայական, որից ելնելով էլ դատապարտյալներն ու կալանավորները չպետք է զրկվեն կրթության իրավունքի հասանելիությունից պատժի կրման ընթացքում: Այդ ամենի կենտրոնում մարդկային արժանապատվության հայեցակարգն է՝ մարդու արժանապատվությունը, որն ընկած է մարդու իրավունքների հիմքում:

Մ. Թադևոսյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է վերը նշված խնդրի վերլուծությանն ու պարզաբանմանը:

Ատենախոսությունը կազմված է 142 էջում ամփոփված՝ ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական վարկածն ու նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձարարական բազան, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Մ. Թադևոսյանի ատենախոսության առաջին գլխում ներկայացված է ՔԿՀ-ներում կրթության նպատակի հիմնախնդիրը, բացահայտված է ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթությունը մարդու իրավունքների միջազգային ուղենիշներում, ինչպես նաև ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման իրավական հիմքերը ՀՀ-ում:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է սկանդինավյան (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա) և հետխորհրդային որոշ երկրների (Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա) ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առանձնահատկությունների բացահայտմանը, ինչպես նաև ՀՀ-ում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկային:

Ատենախոսը մանրակրկիտ ներկայացրել և վերլուծել է ՀՀ-ում ՔԿՀ-ներում կազմակերպվող և իրականացվող ինչպես ոչ ֆորմալ, այնպես էլ ֆորմալ կրթությունն ու դրանցում իրականացվող կրթական ծրագրերը: Ներկայացված և վերլուծված են մի շարք վիճակագրական տվյալներ:

Երրորդ գլխում ատենախոսը իրականացրել է հետազոտություն ՀՀ թվով 5 ՔԿՀ-ներում՝ մասնավորապես՝ ՀՀ «Արմավիր», «Աբովյան», «Կոշ», «Սևան», «Վարդաշեն» ՔԿՀ-ներում: Հետազոտության նպատակն է եղել գնահատել ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման

արդյունավետությունը ըստ այդ ծրագրերի շահառուների (դասավանդողների և ուսումնառողների) դիրքորոշումների և ընկալումների: Հետազոտության շրջանակներում անցկացվել է հարցաթերթիկային հարցում /ատենախոսի կողմից կազմված/, որին մասնակցել են նպատակային սկզբունքով ընտրված ընդհանուր առմամբ 85 անձ, որից 70-ը՝ դատապարտյալներ (ուսումնառողներ), 15-ը՝ դասավանդողներ:

Վերը նշված գլխում հեղինակը ներկայացրել է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման իր կողմից մշակած ժամանակակից համակարգը, որը բխում է թեմայի նպատակից ու խնդիրներից: Այն նպաստում է քրեակատարողական հիմնարկներում կրթության կառավարման գործում միջգերատեսչական համագործակցությանը, համապատասխան բովանդակության, մեթոդաբանական գործիքակազմի և մանկավարժական պայմանների ապահովմանը ուսուցման գործընթացում, չափելի վերջնարդունքների սահմանմանը մանկավարժական գործընթացի հիմնական սուբյեկտների (դասավանդողների և ունկնդիրների) աշխատանքը գնահատելիս: Ատենախոսությունը ունի կուռ կառուցվածք, գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն ճիշտ փոխկապակցված են: Ատենախոսության մեջ առկա են մի շարք աղյուսակներ, գծապատկերներ և դիագրամներ, որոնք լրացնում և ամբողջացնում են հեղինակի միտքը և աշխատանքի բովանդակությունը: Մտահանգումները կատարվել են տրամաբանական և գիտական մոտեցումների համադրման արդյունքում: Ողջ ատենախոսության մեջ կարմիր թելով ընդգծվում է հեղինակի վերլուծական միտքը և պատճառահետևանքային կապերի առկայությունը: Հեղինակը լուծել է առաջադրված բոլոր խնդիրները և հանգել համապատասխան տրամաբանական եզրահանգումների: Ատենախոսն իր առջև դրել է խնդիրներ, որոնք իրենց լուծումներն են ստացել ատենախոսության համապատասխան գլուխներում և ենթագլուխներում:

Այնուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ նաև մասնակի թերություններից՝

1. Ատենախոսության գիտական ապարատում նշված հետազոտության բոլոր մեթոդները, մասնավորապես՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն, անկետավորում/հարցաթերթիկային հարցում, պատմահամեմատական, անալիզի և սինթեզի մեթոդ արտացոլված են աշխատանքում, բացի հարցազրույցից: Կարծում ենք անհրաժեշտ է որոշակիորեն անդրադարձ կատարել նաև հեղինակի կողմից իրականացված հարցազրույցներին:
2. Ատենախոսը աշխատանքում անդրադարձ է կատարել ՀՀ ՔԿՀ-ներում դասավանդողների կրթական մակարդակին, ըստ որի այսօր ՀՀ ՔԿՀ-ներում դասավանդում են բակալավրի որակավորմամբ 3 և մագիստրոսի որակավորմամբ 12 դասավանդողներ: Հեղինակը իր կողմից մշակված համակարգում մանրամասն ներկայացրել է նաև ՔԿՀ-ներում դասավանդողներին

ներկայացվող կոմպետենցիաները: Մեր կարծիքով, իր կողմից մշակված համակարգը կդառնա ավելի ամբողջական, եթե ատենախոսը կոմպետենցիաներից զատ նշի և հիմնավորի նաև դասավանդողների համար անհրաժեշտ նվազագույն կրթական մակարդակը:

3. Ատենախոսը ներկայացնելով կրթության կազմակերպման հիմնախնդիրները արտասահմանյան մի շարք երկրներում՝ իրավացիորեն շեշտադրում է նաև քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթական կարիքների գնահատման կարևորությունը: Հեղինակի կողմից կատարված հետազոտությամբ մատնանշվում է նաև ՀՀ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթական կարիքների գնահատման ոլորտում առկա բացերը: Այդ բացերը լրացնելու համար հեղինակը իր կողմից մշակված համակարգում առաջարկում է իրականացնել պատիժ կրող անձանց կրթական կարիքների գնահատում: Մեր կարծիքով աշխատանքը կշահի, եթե հեղինակը նշի նաև պատիժ կրող անձանց կրթական կարիքների գնահատման մեխանիզմներն ու գործիքակազմը: Առավել ևս, որ այդ փորձը ՀՀ-ում չկա: Վերը նշված մասնակի թերությունները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն ինքնուրույն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահաջներին և ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» թվանիշին: Ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Մ.Թադևոսյան/ատենախոս/: Շնորհակալություն տիկ. Մարկոսյան: Նշված թերությունների մի մասը հնչել է նաև սեմինարի ժամանակ, որոնք արդեն շտկվել են իմ կողմից:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր՝ Լ. Ասատրյան

ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրներից մեկը առողջ քաղաքացու ձևավորումն է: Այսօր քիչ ուշադրություն է դարձվում հակասոցիալական վարք դրսևորած անձանց կրթության և ընդհանրապես դաստիարակության հիմնախնդրին: Այս տեսանկյունից աշխատանքը մեծ արժեք է ներկայացնում, քանի որ անդրադառնում է հասարակության հումանացման հիմնախնդրին ընդհանրապես, ինչպես նաև ուսումնասիրում և առաջադրում է թիրախային կոնկրետ խմբի առանձնահատկությունները: Ատենախոսության ներածության մեջ հասկացական ապարատը հիմնավորված է և համապատասխանում է սահմանված նպատակին և հիմնախնդիրներին: Սահմանված

բոլոր խնդիրները լուծված են ատենախոսի կողմից: Հեղինակի կողմից աշխատանքը կատարված է ինքնուրույն, որը կարևորագույն նշանակություն ունի ապագա գիտնականի համար: Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ոլորտը ուսումնասիրված չէ և իր տեսակի մեջ եզակի բնույթ է կրում, քանի որ վեր են հանվել փակ հաստատություններում կրթության կազմակերպման կարիքները և ռիսկերը, մշակվել են համապատասխան գործառնական մոդելներ: Այս հետազոտության գլխավոր ձեռքբերումը ՔԿՀ-ներում կրթության կառավարման և կազմակերպման համակարգի մշակումն է, որը կարևոր ներդրում է ընդհանուր առմամբ մանկավարժագիտության մեջ, և մասնավորապես պենիտենցիար մանկավարժության ոլորտում: Միևնույն ժամանակ, այս աշխատանքը կրթության և արդարադատության նախարարությունների համար կարող է մեթոդաբանական և մեթոդական ուղեցույց դառնալ ՔԿՀ-ներում կրթության կառավարման և կազմակերպման գործընթացում: Սա այն աշխատանքն է, որը անմիջականորեն կարող է կիրառվել քաղաքականություններ մշակողների և իրականացնողների կողմից, հատկապես հեղինակի կողմից մշակված ՔԿՀ-ներում կրթության կառավարման մոդելը, դասավանդողների կոմպետենցիաներին ներկայացվող պահանջները, ՔԿՀ-ի կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշները, որոնք կիրառելի են անմիջական պրակտիկայում:

Այս աշխատանքը գալիս է լրացնելու նաև մանկավարժագիտության բնագավառում պենիտենցիար մանկավարժության տեսականորեն և գործնականում առկա բացերը: Գլխավոր արժանիքներից է նաև այն, որ ատենախոսը խորապես ուսումնասիրել է այս ոլորտը բոլոր տեսանկյուններից: Նա գործնական, տեսական ու գիտական մակարդակում լիարժեք տիրապետում է ոլորտին, տեսել է ՔԿՀ-ներում բանտարկյալների կրթության վերաբերյալ խնդրրները և դրանք արտացոլել համապատասխան մոդելներում: Չափանիշների և մոդելիների մշակումը խոսում է ատենախոսի գիտական ու մանկավարժական, ստեղծագործական կարողությունների մասին: Ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք, շարադրված է գրագետ, հարցերը լուսաբանված են խորությամբ, եզրակացություններն արված են ինքնուրույն՝ տեսական ուսումնասիրությունների և փորձարարական հետազոտությունների հիման վրա: Ատենախոսն օգտագործել է հարուստ գրականություն: Իրականացվել է շատ խորը ուսումնասիրություն և վերլուծություն: Արժեքավոր է պատմական շրջանակը և համատեքստը, որոնց ևս անդրադարձել է հեղինակը: Թեկնածուական աշխատանքի սահմաններում լուծված են բոլոր խնդիրները: Այս ամենի հարցում մեծ դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ ատենախոսը 4 տարի դասավանդել է ՔԿՀ-ում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» խորագրով թեկնածուական

ատենախոսությունն ավարտուն ինքնուրույն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահաջներին և ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» թվանիշին: Ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Մ.Թադևոսյան/ատենախոս/: Շնորհակալություն տիկ Ասատրյան, աշխատանքը արժևորելու, աշխատանքի տարբեր փուլերում աջակցելու և հարցազրույց տալու համար: Ձեր աջակցությունը մեծապես ինձ օգնեց ՔԿՀ-երում կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերն արտացոլող մոդելը, դրա հիմնախնդիրները սահմանելիս:

Արտահայտվեցին՝

Հակոբյան Գ.: Աշխատանքը արժևորված է բոլոր կողմերից՝ տեսական, գործառնական, իրավական և այլն: Սկզբունքորեն նոր մոտեցումներ են մատնանշվում աշխատանքում և հետազոտական լայն դաշտ է բացված հետագա ուսումնասիրությունների համար: Թեման նոր է, թարմ և շատ կարևոր՝ համապատասխան հարցադրումներով: Հետագա աշխատանքներում հնարավորության դեպքում կխնդրեմ ուշադրություն դարձնել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ հետպատերազմական երկրներում ՔԿՀ-ներում կրթության տեսանկյունից զարգացումները և տեղաշարժները, վերականգնողական արդարադատության տեսլականի, ցուցանիշների ձևակերպումը և այլն: Աշխատանքը համապատատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող բոլոր չափանիշներին և երաշխավորում եմ ներկայացնել հանրային պաշտապանության:

Դալլաքյան Ա.: Աշխատանքը իսկապես ոչ միայն հարստացնում է մանկավարժության ոլորտը, այլև իրավական հոգեբանության բնագավառը իր տեսական և գիտական արդյունքներով: Հնարավորության պարագայում այս աշխատանքի շրջանակում առանձին դասընթաց պետք է մշակվի և ներմուծվի, որում կտեսնենք նաև Ձեր գիտական աշխատանքի պրակտիկ կիրառումը: Սա կարող է կարևոր դեղատոմս լինել այս ոլորտի առողջացման և հասարակության հումանացման տեսանկյունից:

Եգանյան Գ.: Աշխատանքի տարբեր բաժինների արդյունքներին ծանոթացել ենք սեմինարներին և արդեն այսօր ամբողջական աշխատանքը լսելուց, ինչպես նաև գրախոսների կողմից կարծիքներին ծանոթանալուց հետո կարող ենք վստահաբար ասել, որ ատենախոսությունը ամբողջական է կառուցվածքային և գիտական ամբողջականության տեսանկյունից: Աշխատանքը առավել հարստացնելու նպատակով առաջարկվում է հետագա աշխատանքներում դասավանդողներին ներկայացվող կոմպետենցիաներում առավել շեշտադրել դիագնոստիկայի կոմպետենցիան, քանի որ դա կարևոր դերակատարում ունի հատկապես այս հաստատություններում:

Մ.գ.թ. ասիստենտ Ն.Մարտիրոսյան: Ես ուզում եմ խոսել ատենախոսի անձնային որակների մասին: Մ.Թադևոսյանը եղել է իմ ուսանողը: Բակալավրիատի առաջին կուրսից տեսել և զգացել եմ կրթության նկատմամբ նրա պատասխանատու վերաբերմունքը: Միշայի համար կրթությունը արժեք է: Նա բարձր պատասխանատվություն ունեցող անձ է, հանդուրժող և ընկերասեր, պահանջկոտ իր և համակուրսեցիների նկատմամբ: Այս ամենը հատկապես արտահայտվեցին մանկավարժական պրակտիկայի ընթացքում, որտեղ ավելի ցայտուն երևացին նրա կազմակերպչական և մանկավարժական պրակտիկ հմտությունները: Ինչ վերաբերում է աշխատանքին, բոլորս էլ զգացինք, որ նա ողջ աշխատանքը անցկացրել է իր միջով, տիրապետում է հետազոտվող թեմայի բոլոր ելևեջներին, 4 տարի դասավանդել է ՔԿՀ-ում, շփվել և հաղորդակցվել է այդ հիմնարկներում աշխատող և իրենց պատիժը կրող բոլոր մարդկանց հետ: Վստահ եմ, որ Միշան գերազանցելու է իր դասախոսներին: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Մ.գ.թ.,դոցենտ Մանուկյան Ա.: Ես Միշային չեմ դասավանդել, լսել եմ կրթության հիմնախնդիրների մասին նրա որոշ հարցազրույցներ: Ուզում եմ խորհուրդ տալ նրան զգույշ և օբյեկտիվ լինել մարդկանց, կազմակերպությունների գործունեության մասին գնահատականներ հնչեցնելիս և երբեք չմոռանալ, որ համալսարանում է ստացել իր կրթությունն ու ձևավորվել որպես գիտնական:

Հովհաննիսյան Ա.: Թույլ տվեք ևս մեկ անգամ փաստել, այս թեման գիտամանկավարժական հանրության կողմից երբեք չի ուսումնասիրվել և սա նմանատիպ առաջին փորձն է: Հատկապես մեր ժամանակներում կրթությունը նոր բովանդակություն և համատեքստ է ստանում և այդ տեսանկյունից չափազանց կարևոր է հետազոտական այս բնագավառը: Ատենախոսությունը ամբողջական է, խնդիրները հիմնավորապես լուծվել են, հետազոտության շրջանակը հստակ է, իրականացված աշխատանքները ուղղված են սահմանված նպատակի իրականացմանը: Թեման համահունչ է կրթության ժամանակակից զարգացումներին և մարտահրավերներին, որով հիմնավորվում և արժևորվում է ատենախոսի կողմից մշակված ՔԿՀ-ի կառավարման և կազմակերպման համակարգը: Աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող բոլոր չափանիշներին, և երաշխավորում եմ ներկայացնել հանրային պաշտապանության:

Մ.գ.դ., պրոֆեսոր Թոփուզյան Ա.: Ելնելով ատենախոս Մ.Թադևոսյանի պաշտպանական խոսքից, ընդդիմախոսների և մյուս ելույթ ունեցողների կարծիքներից և առաջարկություններից, իրեն տրված հարցերին ատենախոսի սպառիչ պատասխաններից՝ կարող ենք նշել, որ ատենախոսությունը կուռ, ամբողջական գիտական հետազոտություն է, որն ունի գիտատեսական և գործնական մանկավարժական արժեք: Հետազոտության տվյալները հավաստի են, հեղինակի հրատարակած

հոդվածներում լիարժեք ընդգրկված են հետազոտության արդյունքները, ուստի առաջարկում եմ ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» խորագրով թեկնածուական ատենախոսությունը ավարտուն, ամբողջական, գիտագործնական նշանակություն ունեցող աշխատանք է, համապատասխանում է ՀՀ Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին:
2. Այն երաշխավորել հրապարակային պաշտպանության:
   /Կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

25.08.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Բակալավր 2-4-րդ կուրսերում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:
2. 2020-2021 ուս. տարվա անհատական հաշվետվությունների և ինքնավերլուծությունների մասին:
3. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:
4. Գ. Հարությունյանի հաղորդումը «Դասալսման «Teach» գործիք»-ի կիրառման մասին: /Սեմինար/

1. ԼՍԵՑԻՆ - Բակալավր 2-4-րդ կուրսերում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Այսօր հաստատելու ենք բակալավր 2-4-րդ կուրսերում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթները: Խնդրում եմ հակիրճ ներկայացրեք ինչ փոփոխություններ եք կատարել փաթեթներում, մասնավորապես, գործնական աշխատանքներում, և այդ գործնական աշխատանքները որքանով են ապահովում դասընթացի վերջնարդյունքները:

Ա. Մանուկյան – Այս կիսամյակում դասավանդելու եմ «Մանկավարժություն» և «Մեդիակրթություն» առարկաները ԲՍ, ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետներում: Ըստ ուսումնական պլանի «Մանկավարժություն» առարկային տրված է 4 գործնական աշխատանք՝ բանավեճ, դաս-դատ, իրավիճակի վերլուծություն, աշխատանք քարտերով:

«Մեդիակրթություն» առարկան դասավանդվում է ՍԿ ֆակուլտետի առկա բակալավր 2-րդ և ԿՀՍ ֆակուլտետի առկա բակալավր 4-րդ կուրսերում: Դասընթացի գործնական աշխատանքներն են՝ սեմինար, մեդիա նախագծերի և մեդիա քեյսերի կազմում, սոցիալական գովազդի դիտում և քննարկում, հոդվածի քննարկում և այլն:

Ա. Թոփուզյան – Տիկին Մանուկյան, խնդրում եմ յուրաքանչյուր գործնական աշխատանքի կողքին ավելացնել մասնագիտական որ վերջնարդյունքներն է այն ապահովում:

Գ. Եգանյան – Դասավանդելու եմ «Սոցիալական մանկավարժություն» առարկան ԿՀՍ ֆակուլտետի առկա բակալավր 2-րդ կուրսում: Փաթեթը վերանայելիս՝ կատարել եմ որոշ փոփոխություններ առաջարկվող գրականության ցանկում՝ ավելացնելով նոր աղբյուրներ: Գործնական աշխատանքներն են՝ հետազոտական աշխատանք, մոդելավորում, բանավեճ, նախագծային աշխատանք, քարոզ: Դասընթացն ապահովում է ՄԿԾ-ի 5 վերջնարդյունք:

Ա. Թոփուզյան – Յուրաքանչյուր գործնականի կողքին խնդրում եմ նշել որ վերջնարդյունքներն են:

Ն. Կարապետյան – Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ԿՔԱ ֆակուլտետի բակալավր 2-րդ կուրսում: Ըստ ուսումնական պլանի առարկային տրված է 28 լսարանային ժամ, որից 8-ը՝ գործնական է: Նախատեսված գործնական աշխատանքներն են՝ սեմինար, հետազոտական աշխատանք, նախագծային աշխատանք բանավեճ: Դասընթացն ապահովում է ՄԿԾ-ի 7 վերջնարդյունք:

Դասավանդելու եմ նաև «Գործնական մանկավարժություն» առարկան ՍԿ ֆակուլտետի բակալավր 4-րդ կուրսում: Դասընթացը ամբողջովին գործնական բնույթ ունի: Առանձնացրել ենք հիմնականում հետևյալ մեթոդները՝ կրթական չափորոշիչների վերլուծություն, հետազոտական աշխատանք, տեսանյութերի դիտում և քննարկում, մանկավարժական իրավիճակների մոդելավորում, բանավեճ, դերային խաղ և այլն: Դասընթացն ապահովում է ՄԿԾ-ի 5 վերջնարդյունք:

Ա. Թոփուզյան – Նույնը բոլորին է վերաբերում, յուրաքանչյուր գործնական աշխատանքի կողքին գրեք վերջնարդյունքները:

Մ. Ասատրյան - Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ՀԿ, ՄՖԻ, ՕԼ ֆակուլտետների բակալավր 2-րդ կուրսում: Գործնական աշխատանքներն են՝ սեմինար, բանավեճ, վեննի դիագրամ, քառաբաժան, որոնց թեմաները դարձրել եմ թիրախային ըստ մասնագիտությունների: Դասընթացն ապահովում է ՄԿԾ-ի 5 վերջնարդյունք:

Ա. Թոփուզյան – Քառաբաժանը և վեննի դիագրամն օգտագործեք դասախոսությունից հետո նյութն ամրապնդելու, կշռադատելու, համար: Այլ տեխնոլոգիաներ ընտրեք, օր. նախագիծ, դերային խաղ, մանկավարժական իրավիճակների վերլուծություն, հետազոտական աշխատանք:

Գ. Հակոբյան - Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ԳԿ ֆակուլտետի բակալավր 2-րդ կուրսում: Առարկայի գործնական աշխատանքներն են՝ մանկավարժական թեմայով ֆիլմի դիտում և ուսուցչի կերպարի քննարկում, սեմինար, բանավեճ, դերային խաղ: Դասընթացն ապահովում է ՄԿԾ-ի 6 վերջնարդյունք:

Ն. Մարտիրոսյան - Դասավանդելու եմ «Սոցիալ-մանկավարժական պրակտիկում» առարկան ԿՀՍ ֆակուլտետի բակալավր 4-րդ կուրսում: Փոփոխություն է կատարվել առարկայի ընդհանուր ժամաքանակում, ավելացվել են գործնական ժամերը: Գործնական աշխատանքներն են՝ սոցիալական մանկավարժի հաստիքի անհրաժեշտության թեմայով բանավեճ, քարոզ, դերային խաղ, էսսե, մանկավարժական իրավիճակների վերլուծություն: Դասընթացն ապահովում է ՄԿԾ-ի 7 վերջնարդյունք:

Ա. Թոփուզյան – Էսսեն օգտագործեք ինքնուրույն աշխատանքի, գնահատվող առաջադրանքի համար, ընտրեք խմբային աշխատանքի մեթոդներ:

Հ. Թադևոսյան - Դասավանդելու եմ «Սոցիալական մանկավարժութուն» առարկան ԿՀՍ ֆակուլտետի բակալավր 3-րդ կուրսում: Առարկայի գործնական աշխատանքները 8-ն են՝ նախագծում, մոդելավորում, սեմինար, իրավիճակների վերլուծություն, տեսանյութերի դիտում և քննարկում: Փաթեթում ավելացրել ենք գործնական աշխատանքների նոր թեմաներ՝ հիմք ընդունելով վերջին մեկ տարվա ընթացքում Արցախում կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

Ա. Թոփուզյան – Ավելացրեք դերային խաղ, հետազոտություն և այլն: Անդրադարձեք վերջնարդյունքներին:

Գ. Հարությունյան - Դասավանդելու եմ «Ընտանիքի սոցիալ-մանկավարժական աջակցություն» առարկան ԿՀՍ ֆակուլտետի բակալավր 3-րդ կուրսում: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ դերային խաղ ընտանեկան իրավիճակների վերաբերյալ, ընտանեկան

բոնության վերաբերյալ տեսանյութերի դիտում և քննարկում, հետազոտական աշխատանք, բանավեճ, ընտանեկան խորհրդատվության պլանի մշակում: Դասընթացն ապահովում է ՄԿԾ-ի 6 վերջնարդյունք:

Ա. Թոփուզյան – Մեկ անգամ ևս վերանայեք Ձեր առարկայի նպատակը, խնդիրները, գործնական աշխատանքի թեմաները և մեթոդները՝ ելնելով այսօրվա քննարկումից: Խնդրում եմ նաև փաթեթներում, յուրաքանչյուր գործնական աշխատանքի դիմաց, գրեք, թե տվյալ գործնական աշխատանքը ՄԿԾ-ի որ վերջնարդյունքն է ապահովում և մանկավարժական ինչ խնդիրներ է լուծում, ինչ կոմպետենցիաներ, անձնային որակներ և արժեքներ է ձևավորում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել բակալավր 2-4-րդ կուրսերում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթները՝ համապատասխան փոփոխություններ կատարելու պայմանով:
2. Առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները տեղադրել համապատասխան էլեկտրոնային դասընթացների էջերում մինչև 03.09.2021թ.:

2. ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա անհատական հաշվետվությունների և ինքնավերլուծությունների մասին:

Ա. Թոփուզյան – Կարդացել եմ 2020-2021 ուս. տարվա ձեր ներկայացրած անհատական հաշվետվությունները և ինքնավերլուծությունները: Դրանք վերանայման և լրամշակման կարիք ունեն: Հաշվետվությունը պետք է ներառի հետևյալ բաժինները. ուսումնական գործունեություն, արտաուսումնական գործունեություն և գիտահետազոտական աշխատանք, որոնք պետք է բխեն Ձեր անհատական զարգացման պլաններից և պարունակեն կոնկրետ տեղեկատվություն: Ինքնավերլուծությունը պետք է ներառի SWOT վերլուծություն, որը վերաբերվի Ձեր դասավանդած որևէ առարկային: Անհրաժեշտ է հնարավորինս ինքնաքննադատաբար կատարել վերլուծությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վերանայել 2020-2021 ուս. տարվա անհատական հաշվետվությունները և ինքնավերլուծությունները մինչև 30.09.2021թ.:

2. Ներկայացնել 2021-2022 ուս. տարվա անհատական զարգացման պլանները մինչև 15.09.2021թ.:

3. ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Պատրաստ է 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը: Խնդրում եմ ծանոթացեք և եթե չկան լրացումներ, առաջարկում եմ հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-2022 ուս.տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանը:

4. ԼՍԵՑԻՆ - Գ. Հարությունյանի հաղորդումը «Դասալսման «Teach» գործիք»-ի կիրառման մասին: /Կցվում է/

ՈՐՈՇԵՑԻՆ - Գ. Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

01.09.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2021-2022 ուս. տարվա բակալավր 1-ին, մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուս. տարվա բակալավր 1-ին, մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

Զ. Ասատրյան – Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ՍԿ ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Մասամբ փոփոխել եմ գործնական աշխատանքի մեթոդները՝ սեմինար, ինտերակտիվ քննարկում, տեսաներկայացում, մտագրոհ, բանավեճ: Վերանայել եմ 2-րդ միջանկյալ ստուգման՝ թղթապանակի թեմաները: Գրականության ցանկում ավելացրել եմ ժամանակակից աղբյուրներ:

Մ. Ջանիկյան - Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ՍԿ ֆակուլտետի «ՆԴ մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Առարկային տրված է 60 ժամ լսարանային աշխատանք, որից 40 ժամը դասախոսություն, 20 ժամը գործնական աշխատանք: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ սեմինար, նախագծային աշխատանք, քարոզ, հետազոտական աշխատանք, բանավեճ:

Ն. Կարապետյան - Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան Կուլտուրայի ֆակուլտետի «Պարարվեստ» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Առարկային տրված է 30 ժամ լսարանային աշխատանք, որից 22 ժամը դասախոսություն, 8 ժամը գործնական աշխատանք: Փաթեթը վերանայել եմ՝ հնարավորինս համապատասխանեցնելով մասնագիտությանը: Քանի որ պարարվեստի բաժնում է դասավանդվելու առարկան, նախատեսել ենք համեմատական վերլուծություններ իրականացնել ազգային պարերի վերաբերյալ, բացահայտել դրանց կրթա-դաստիարակչական, արժեքային առանձնահատկությունները: Իրականացնելու ենք նաև հետազոտական աշխատանք:

Ա. Հովհաննիսյան - Դասավանդելու եմ «Կրթության և մանկավարժական մտքի պատմություն» առարկան ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Առարկային տրված է 45 ժամ լսարանային աշխատանք, որից 30 ժամը դասախոսություն, 15 ժամը գործնական աշխատանք: Վերանայել և խմբագրել եմ ամբողջ փաթեթը: Գործնական աշխատանքի մեթոդներն են՝ էսսե, բանավեճ, դերային խաղ, վեննի դիագրամ, կրկնակի գրառումների օրագիր, հետազոտական աշխատանք, պրիզմա:

Ի. Բաբայան - «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է գրեթե բոլոր ֆակուլտետներում դասավանդելու համար: Դասընթացի բովանդակությունը համապատասխանում է ինչպես մասնագիտությունների պահանջներին, այնպես էլ ներկայացված կրթական վերջնարդյունքներին: Փաթեթում կատարել ենք որոշակի փոփոխություններ: Թեմաներում ավելացրել ենք ակադեմիական բարեվարքություն թեման, որի շրջանակներում ուսանողներին ներկայացնելու ենք նաև հակապլագիատի որոշ ծրագրեր: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ նախագծային աշխատանք, մոդելավորում, դիտումների վերլուծություն, հարցումների վերլուծություն, քեյս սթադի: Վերանայել և արդիականացրել ենք գրականության ցանկը:

Ա. Թոփուզյան –Սովորեցրեք նաև թեզի նպատակը ճիշտ սահմանել, դրանից բխեցնել խնդիրները, որոնց պատասխանները պետք է ստանալ եզրակացություններում: Այս առարկայում դասավանդվող յուրաքանչյուր թեմա պետք է ունենա հետազոտական բաղադրիչ:

Գ. Եգանյան – Դասավանդելու եմ «Մանկավարժական դիագնոստիկա» առարկան «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսում: Վերանայել եմ առարկայի փաթեթը, ավելացրել «Կրթական միջավայրի դիագնոստիկա» թեման և երկու գործնական աշխատանք՝ տարրական դպրոցի մանկավարժի դիագնոստիկ գործունեության մոդելի ստեղծում, հարցաթերթի մշակում և հետազոտական աշխատանքի իրականացում:

Ս. Սիսյան - «Մանկավարժական արժեբանություն» առարկան նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Ըստ ուսումնական պլանի 22 ժամ տրված է դասախոսություններին, 8 ժամ՝ գործնական

աշխատանքներին: Գործնական աշխատանքներն են՝ կլոր սեղան, նախագծում, տարրական դպրոցի ժամանակակից ուսուցչի մանկավարժական արժեհամակարգի մոդելի ստեղծում, բանավեճ:

Ա. Թոփուզյան – Ավելացրեք «Տարրական դպրոցի դասագրքերի դերը երեխաների արժեքային համակարգի ձևավորման գործում» թեմայով գործնական աշխատանք: Կարելի է այս գործնական աշխատանքն իրականացնել նախագծային մեթոդով:

Հ. Թադևոսյան - «Ծերերի խնամքի կազմակերպման սոցիալ-մանկավարժական ապահովում» առարկայի փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Գործնական աշխատանքները չորսն են՝ հետազոտական աշխատանք, խորհրդատվություն, մոդելավորում, նախագծում:

Ս. Սիսյան - «Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն» դասընթացը նախատեսված է մագիստրատուրա 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում դասավանդելու համար: Դասընթացի լսարանային ընդհանուր ծավալը կազմում է 24 ժամ, որից 18 ժամը տեսական է, 6-ը՝ գործնական: Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Գործնական աշխատանքներն են՝ հետազոտական աշխատանք սոցիալական հարթակում «Հեռավար ուսուցման առավելություններն ու թերությունները բուհում» թեմայով, մանկավարժական իրավիճակի վերլուծություն, տեսաֆիլմի դիտում և քննարկում «Բարձրագույն կրթության դրական և բացասական կողմերը» թեմայով, սոցիալական հարցումներ և արդյունքների վերլուծություն, «Մասնագիտական կրթության որակի ապահովումը բուհում» թեմայով բանավեճ: Ավելացրել ենք 3 ինքնուրույն աշխատանք: Գրականության ցանկում ավելացրել ենք ինտերնետային աղբյուրներ:

Ա. Դալլաքյան – «Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ» առարկան նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Դասընթացի լսարանային ընդհանուր ծավալը կազմում է 24 ժամ, որից 18 ժամը դասախոսություն է, 6-ը՝ գործնական: Գործնական աշխատանքներն են՝ նախագծային աշխատանք «Մշակել տարրական դպրոցի մանկավարժական պայմանների համալիր» թեմայով, «Կրթության ակմեոլոգիական մոտեցումը ուսուցչի մասնագիտական

զարգացման գործընթացում» թեմայով բանավեճ, «Հարափոփոխ աշխարհում տարրական դպրոցի ուսուցչի ինքնակրթությունը» թեմայով կլոր սեղան:

Ա. Թոփուզյան –Կարծում եմ այս առարկայի շրջանակներում ուսանողները պետք է նաև ուսումնասիրեն ինչ խնդիրներ ունի այսօր տարրական դպրոցը և այդ խնդիրները լուծելու համար ինչ կոմպետենցիաներ ենք մենք նրանց տալիս:

Լ. Նազարյան - «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է գրեթե բոլոր ֆակուլտետներում դասավանդելու համար: Առարկայի բովանդակությունը համապատասխանում է ինչպես մասնագիտությունների պահանջներին, այնպես էլ ներկայացված կրթական վերջնարդյունքներին: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ քարոզ, դաս-դատ, կլոր սեղան: Ներկայացված գործնական աշխատանքների թեմաները տարբեր են, հաշվի է առնված տվյալ մասնագիտության ուղղվածությունը:

Հ. Թադևոսյան - «Սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկությունները հատուկ և առողջապահական հիմնարկներում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ հետազոտական աշխատանք, մոդելավորում, սոցիալական հոլովակների դիտում և քննարկում, դերային խաղ-խորհրդատվություն՝ հաշվի առնելով թիրախային խմբերի առանձնահատկությունները:

Լ. Պողոսյան - «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Դասընթացը հիմնականում գործնական բնույթ ունի, դասախոսությունները շատ փոքր մաս են կազմում: Փաթեթը բովանդակային առումով կառուցված է 3 հիմնական ուղղություններով՝ մեդիատեխնոլոգիաները ուսումնական գործընթացում, մեդիատեխնոլոգիաները երեխայի դաստիարակության գործընթացում, մեդիատեխնոլոգիաները արտաուսումնական պարապմունքների ընթացքում:

Ա. Թոփուզյան – Փաթեթները պետք է ամբողջական լինեն, պետք է հստակ երևա, թե տվյալ մասնագիտության որ վերջնարդյունքներն են ապահովում ընտրված թեմաները, գործնական

աշխատանքները և ընտրված մեթոդները: Պետք է հստակ երևա որ մասնագիտության համար է նախատեսված ծրագիրը: Անհրաժեշտ է ծրագրերում ուժեղացնել հետազոտական բաղադրիչը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել 2021-2022 ուս. տարվա բակալավր 1-ին, մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթները՝ նշված դիտարկումները շտկելու և հետագայում դրանք անընդհատ բարելավելու պայմանով:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

08.09.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. ՊՇՌ թեստավորում անցնելու մասին:
2. Միջազգային կոնֆերանսներին մասնակցելու մասին:
3. Դասալսումների արդյունքների մասին:
4. Ն. Մարտիրոսյանի «Միջոցառումը՝ որպես կրտսեր դպրոցականի դաստիարակության տեխնոլոգիա» թեմայով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ –** ՊՇՌ թեստավորում անցնելու մասին:

Ա. Թոփուզյան - Տեղեկացնում ենք, որ ս.թ. հոկտեմբերի 4-ին, ՀՊՄՀ-ի ֆիզկուլտուրայի մարզադահլիճում անցկացվելու է ՊՇՌ թեստավորման առաջին փուլը «ԲԻՈՄԵԴ» լաբորատորիայի կողմից: Բոլոր այն աշխատակիցները, ովքեր չեն պատվաստվել և հայտ են ներկայացրել թեստավորման համար, խնդրում ենք նշված օրը ներկայանալ թեստավորման: Բացասական պատասխանի դեպքում «ԲԻՈՄԵԴ» լաբորատորիայի կողմից կտրվի տեղեկանք, իսկ դրական պատասխանի դեպքում տվյալ անձը կստանա SMS հաղորդագրություն ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Այս պահի դրությամբ մեր ամբիոնի աշխատակիցներից 18-ը պատվաստվել են, 6-ը հանձնելու են ՊՇՌ թեստ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Թոփուզյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և հետևողականորեն կատարել:

2. **ԼՍԵՑԻՆ –** Միջազգային կոնֆերանսներին մասնակցելու մասին:

Ա. Թոփուզյան – Ստացել ենք հրավերներ մասնակցելու մի քանի միջազգային կոնֆերանսների: Կոնֆերանսներից մեկը կազմակերպում է Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանը, որը տեղի է ունենալու 30.09.2021թ. ժամը 12:00-ին առցանց եղանակով: Կոնֆերանսին մեր ամբիոնի դասախոսներից կմասնակցեն Զ. Ասատրյանը, Ն. Մարկոսյանը, Ս. Ջանիկյանը և Ա. Բաղդասարյանը:

30.09.2021թ. ժամը 17:00-ին տեղի է ունենալու միջազգային վեբինար, որը կազմակերպում է Յարոսլավի Կ. Դ. Ուշինսկու անվան պետական մանկավարժական համալսարանը: Վեբինարի պլենար նիստում հիմնական զեկուցողը լինելու է Լ. Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մասնակցել Լ. Պողոսյանի վեբինարին:

3. ԼՍԵՑԻՆ - Դասալսումների արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան - Առաջին դասը լսել եմ Ա. Մանուկյանի մոտ «Մեդիակրթություն» առարկայի շրջանակներում: Ընդհանուր առմամբ դասը հաջողված էր: Բայց կան որոշ դիտարկումներ. դասը պետք է սկսել ժամանակին, Ա. Մանուկյանը մի փոքր ուշացումով սկսեց դասը: Գործնական դաս էր, որի սկզբում տիկին Մանուկյանն ասաց, որ բանավեճ է, դասի ընթացքում դարձավ դեբատ, բայց վերջում ստացվեց հարց ու պատասխան, քանի որ ուսանողները պատրաստ չէին: Ուսանողներից մեկը տեսաներկայացում էր պատրաստել, որը այնքան էլ չէր համապատասխանում դասի թեմային: Առարկան ամբողջովին գործնական բնույթ ունի, անհրաժեշտ է մտածել և ավելացնել ինքնուրույն աշխատանքներ, որոնք ուսանողները նախապես կատարեն և դասի ընթացքում դրանք քննարկվեն: Ավելացրեք խմբային աշխատանքի մեթոդները, ավելացրեք ինքնուրույն աշխատանքի ծավալը, գնահատվող առաջադրանքների ծավալը:

Հաջորդ դասը լսել եմ Մ. Ասատրյանի մոտ «Մանկավարժություն» առարկայի շրջանակներում: Այստեղ ևս դասը ստացվեց, սակայն կան որոշ դիտարկումներ: Ուսանողներն ունեին կոնկրետ հանձնարարություն, որը ներկայացնում էին և գնահատվում: Սակայն այնպիսի տպավորություն էր, որ հիմնականում անգիր էին սովորել հասկացություններն ու սահմանումները և ներկայացնում էին: Անհրաժեշտ էր այնպիսի հարցադրումներ կատարել, որպեսզի ուսանողները մտածեն, վերլուծեն, համեմատություն անեն և իրենց սովորած տեսական նյութի հիման վրա եզրակացություններ անեն: Ձեր այդ օրվա դասը մանկավարժական հասկացությունների մասին էր, որի ընթացքում Դուք չքննարկեցիք մանկավարժության կապը այլ գիտությունների հետ, չհամեմատեցիք հասկացությունները իրար հետ, չֆիքսեցիք դրանցից յուրաքանչյուրը ինչքանով և ինչպես է ազդում անձի ձևավորման վրա: Այս թեմայի ընթացքում դա շատ կարևոր է: Կային ուսանողներ, ովքեր ընդհանրապես դասին չմասնակցեցին, Դուք էլ ոչինչ չարեցիք նրանց դասին ներգրավելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Մանուկյանը, Մ. Ասատրյանը, Ս. Սիսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնել Ա. Թոփուզյանի դիտարկումները և շտկել դրանք:

4. ԼՍԵՑԻՆ – Ն. Մարտիրոսյանի «Միջոցառումը՝ որպես դաստիարակության տեխնոլոգիա» թեմայով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ. Գ. Եզանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ն. Մարտիրոսյանի «Միջոցառումը՝ որպես կրտսեր դպրոցականի դաստիարակության տեխնոլոգիա» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության և ՀՊՄՀ գիտ. խորհուրդ ներկայացնելու համար տալ արտաքին կարծիքի:

Ամբիոնի նիստի 23 անդամներից ներկա էին 22-ը, որից կողմ քվեարկեց 22-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

29.09.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. ՀՀ ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշում իրականացնելու մասին:
2. Մանկավարժության ամբիոնի մ.գ.թ. ասիստենտ Նաիրա Հրանտի Մարտիրոսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորման մասին:
3. ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների պլանի հաստատման մասին:
4. Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների թեզերի և բակալավր 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ – ՀՀ ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշում իրականացնելու մասին:

Ա. Թոփուզյան – Մեզ հանձնարարված է Երևանում և ՀՀ այլ մարզերում իրականացնել ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշում (PR): Մենք արդեն կազմել ենք դպրոցներ այցելության գրաֆիկը, որը կուղարկենք Ձեզ: Դպրոցականների հետ հանդիպումների ժամանակ խոսեք մեր համալսարանի, բոլոր ֆակուլտետների մասին, ուսանողների խրախուսման ձևերի, ուսանողական ամառային ճամբարների, Ֆինլանդիայի հետ փոխայցելությունների և համատեղ աշխատանքների մասին: Ձեզ հետ տարեք բուկլետներ, մեր համալսարանի թերթի համարներ: Խոսեք այն առարկաների մասին, որոնք դասավանդվում են մեր համասլարանում: Տեղեկացեք, թե 12-րդ դասարանցիներից քանի շրջանավարտ է այս տարի ցանկանում ընդունվել ՀՊՄՀ: Հրավիրեք այն ուսանողներին, ավքեր ցանկանում են լինել մանկավարժական համալսարանում՝ մեր թանգարանում լինելու, գրադարանները, լաբորատորիաները տեսնելու, ուսանողների և դասախոսների հետ հանդիպելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցներ այցելության գրաֆիկը և այցելել դպրոցներ ս/թ հոկտեմբերի 15-25-ը:

2. ԼՍԵՑԻՆ – Մանկավարժության ամբիոնի մ.գ.թ., ասիստենտ Նաիրա Հրանտի Մարտիրոսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորման մասին:

Ն. Մարտիրոսյան – 1997-1999թթ. աշխատել եմ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Ընդհանուր մանկավարժության ամբիոնում որպես դասախոս, այնուհետև՝ 2007-2012թթ. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մանկավարժության միջֆակուլտետային ամբիոնի ասիստենտ: 2012թ.-ից մինչ օրս հանդիսանում են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մանկավարժության ամբիոնի ասիստենտ:

2006թ.-ին «Մանկավարժություն-020» մասնագիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (մասնագիտություն՝ ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն»):

Հանդիսանում եմ 22 գիտական հոդվածների հեղինակ, 1 ուսումնական ձեռնարկի համահեղինակ և «Միջոցառումը՝ որպես դաստիարակության տեխնոլոգիա» թեմայով ուսումնամեթոդական ձեռնարկի հեղինակ /երաշխավորվել է տպագրության ամբիոնի 29.09.2021թ. N 4 նիստում/: Հոդվածներից 17-ը տպագրվել է թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո:

«Սոցիալական մանկավարժություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների գծով ղեկավարել եմ բազում մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ:

Մասնակցել եմ մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների, հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների:

Ներգրավված եմ եղել ամբիոնի կողմից կազմակերպված գիտաժողովներում և այլ գիտական ու գիտաուսումնական ծրագրերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ի. Բաբայանը, Գ. Աղուզումցյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Եգանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհուրդ ներկայացնել մ.գ.թ., ասիստենտ Նաիրա Հրանտի Մարտիրոսյանի թեկնածությունը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

3. ԼՍԵՑԻՆ - ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների պլանի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – 2022թ. նոյեմբերի 2-ին լրանում է մեր սիրելի համալսարանի 100-ամյակը: Ես առանձնացրել եմ ամբիոնային 6 միջոցառում, որը այս տարի նվիրելու ենք մեր համալսարանի

հոբելյանին: Միջոցառումների շարքը սկսելու ենք «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով գիտաժողովի անցկացմամբ, որը տեղի կունենա ս/թ նոյեմբերի 30-ին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը, Գ. Աղուզումցյանը, Ն. Մարտիրոսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների պլանը: /Կցվում է/

4. ԼՍԵՑԻՆ - Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների թեզերի և բակալավր 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Ա. Հովհաննիսյան, Լ. Պողոսյան, Ս. Սիսյան, Հ. Թադևոսյան, Ն. Կարապետյան, Գ. Աղուզումցյան, Գ. Հակոբյան, Ն. Մարկոսյան, Գ. Հարությունյան, Գ. Եգանյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ներքոհիշյալ ուսանողների ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների խորագրերը և ղեկավարների ցանկը:

ՄԿ,ԱԲ 4-րդ կուրս

Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Մեդիակրթությունը որպես ապագա ուսուցիչների մեդիագրագիտության ձևավորման միջոց:	Բաղալյան Սյունե	Ա. Մանուկյան
2.	Ծնողական կրթությունը՝ որպես աճող սերնդի լիարժեք զարգացման գրավական:	Հովհաննիսյան Մարինե	Ն. Մարկոսյան
3.	Կրտսեր դպրոցականների առողջագիտական դաստիարակությունը արտադասարանական աշխատանքների միջոցով:	Մելքոնյան Սիրուն	Ն. Կարապետյան
4.	Ուսումնահետազոտական նախագծերի մշակումը տարրական դպրոցում:	Թադևոսյան Լաուրա	Ն. Կարապետյան
5.	Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը տարրական դպրոցում համավարակի պայմաններում:	Բարբառյան Մարիաննա	Ի. Բաբայան

ԿՀՍ, ԱԲ 4-րդ կուրս

Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում սոցիալական մանկավարժի ինստիտուտի զարգացման ուղիները:	Մելքումյան Մերի	Հ.Թադևոսյան
2.	Կրտսեր դպրոցականների փոխօգնության հիմնահարցը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր:	Գալստյան Լյուբա	Գ. Հարությունյան
3.	Երեխաների սոցիալականացման գործընթացը նախադպրոցական ուսումնական հաստատություններում:	Խուդոյան Օֆելյա	Ն.Մարկոսյան
4.	Օժտվածության դիագնոստիկան տարրական դպրոցում:	Բաղդասարյան Սոնա	Գ.Եգանյան
5.	Ծնողական խնամքից դուրս մնացած երեխաների հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:	Նիկողոսյան Լիանա	Ի. Բաբայան

ՄԿ, ԱՄ 1-ին կուրս

Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Մանկավարժական պրակտիկան որպես ապագա դասվարի ձևավորման միջոց:	Պետրոսյան Սիրվարդ	Ի. Բաբայան
2.	Երիտասարդ ուսուցչի ադապտացիայի վրա ազդող գործոնները մասնագիտական գործունեության համատեքստում:	Մխիթարյան Լիլյա	Ի. Բաբայան
3.	Տարրական դասարանների աշակերտների ճանաչողական գործունեության զարգացումը կրթական կայքերի միջոցով:	Եղիազարյան Անուշ	Լ. Պողոսյան
4.	Մանկավարժական համատեղելիության առանձնահատկությունները բարձրագույն կրթության ոլորտում:	Սարգսյան Քրիստինա	Ս. Սիսյան

5.	Առաջին դասարանցիների հարմարման հիմնախնդիրը տարրական դպրոցում:	Կիրակոսյան Վարսիկ	Գ. Եգանյան

ՄԿ, ՀԲ 5-րդ կուրս

Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Խաղային տեխնոլոգիայի կիրառումը, որպես տարրական դպրոցում ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց:	Աբգարյան Արփինե	Լ. Ասատրյան
2.	Մեդիակրթությունը որպես ուսանողների մեդիագրագիտության ձևավորման մանկավարժական միջոց:	Գաբրիելյան Էլվինա	Ա. Մանուկյան
3.	Համակարգչային կախվածության կանխարգելման ուղիները տարրական դպրոցում:	Բաղդասարյան Հասմիկ	Մ. Գևորգյան
4.	Դասղեկական ժամերի դերը և կազմակերպման ձևերը կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործում:	Իսպիրյան Անի	Մ. Գևորգյան
5.	Կրտսեր դպրոցականների բարոյական որակների ձևավորումը տարրական դպրոցում:	Համբարձումյան Կարինե	Ա. Հովհաննիսյան
6.	Շրջապատող միջավայրի դերը երեխայի անհատականության ձևավորման գործում:	Խաչումյան Սյուզաննա	Ն. Մարկոսյան
7.	Տարրական դպրոցի մայրենիի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում:	Հովհաննիսյան Վեներա	Գ. Եգանյան
8.	Ուսուցիչների համագործակցության ձևերը տարրական դպրոցում:	Իսրայելյան Աստղիկ	Գ. Աղուզումցյան

ԿՀՍ, ՀԲ 5-րդ կուրս

Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

1.	Դպրոց-ընտանիք-համայնք համագործակցության ձևերը սոցիալական մանկավարժի աշխատանքում,արմավիր մարզի արագած,արշալույս համայքներում:	Եղիազարյան Հռիփսիմե	Ա. Հովհաննիսյան
2.	Ուսուցչի օգնականի աշխատանքը ներառական կրթության համատեքստում:	Մանուկյան Աննա	Ա. Հովհաննիսյան
3.	Սովորողների սոցիալականացման գործընթացի դինամիկան 1-4-րդ դասարաններում:	Գևորգյան Մելսիդա	Հ. Թադևոսյան
4.	Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում սոցիալական մանկավարժի ինստիտուտի զարգացման ուղիները	Պետրոսյան Մարգարիտա	Հ. Թադևոսյան
5.	Երեխաների իրավունքների պաշտպանության իրականացման սոցիալ-մանկավարժական ապահովումը ՀՀ-ում:	Ասատրյան Անի	Ի. Բաբայան
6.	Սոցիալական մանկավարժի համագործակցության ձևերը շեղվող վարքով երեխաների ծնողների հետ:	Ռոստոմյան Մերի	Գ. Աղուզումցյան
7.	Մանկավարժական հսկողությունից դուրս մնացած երեխաների հետ տարվող սոցիալ-մանկավարժական աշխատանքները:	Պողոսյան Ելենա	Գ. Աղուզումցյան
8.	Սոցիալական մանկավարժի կանխարգելիչ գործառույթը դեռահասության տարիք ունեցող սովորողների շրջանում:	Մանուկյան Ժաննա	Գ. Հարությունյան
9.	Ապահարմարման հիմնախնդիրը տարրական դպրոցում:	Բաղդասարյան Անահիտ	Գ. Եգանյան

ՄԿ, ՀՄ 1-ին կուրս

Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Տարրական դպրոցի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում:	Սարգսյան Նարինե	Ա. Թոփուզյան
2.	Տարրական դպրոցի 3-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում:	Աթաբեկյան Մանիկ	Ա. Թոփուզյան
3.	Տարրական դպրոցի 4-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում:	Հովհաննիսյան Ալինա	Գ. Աղուզումցյան
4.	Կրտսեր դպրոցականի քննադատական մտածողության զարգացման միջոցները:	Մելքոնյան Էմմա	Լ. Ասատրյան
5.	Հեղինակային ժամանակակից մանկավարժական համակարգերը:	Ալեքսանյան Մանե	Ն. Մարկոսյան
6.	Տարրական դպրոցի գնահատման ժամանակակից համակարգի ազդեցությունը դաստիարակության գործընթացի վրա:	Մարգարյան Տաթևիկ	Ս. Ջանիկյան
7.	Ֆինանսական կրթության բաղադրիչը տարրական դպրոցի ուսումնական դասընթացներում:	Կարապետյան Արմինե	Գ. Հակոբյան
8.	Կրտսեր դպրոցականների վիրտուալ շփումը որպես ժամանակակից մանկավարժական հիմնախնդիր:	Կարապետյան Արմենուհի	Գ. Հարությունյան
9.	Ժողովրդական բանահյուսությունը որպես կրտսեր դպրոցականների ազգային դաստիարակության միջոց:	Սարգսյան Նաիրա	Ա. Հովհաննիսյան
10.	Դասվարի աշխատանքի ոճի դերը կրտսեր դպրոցականի հարմարման գործընթացում:	Կինոյան Լուիզա	Հ. Թադևոսյան
11.	Ուսուցչի օգնականի ինստիտուտի զարգացման և կայացման ուղիները:	Գևորգյան Մարիամ	Հ. Թադևոսյան
12.	Մանկավարժի հուզական այրման դիագնոստիկան որպես արդյունավետ	Կարապետյան Սիրուշ	Գ. Եգանյան

	մասնագիտական գործունեության նախապայման:		
13.	Նախակրթարանը որպես դպրոցին նախապատրաստվելու աստիճան:	Այդինյան Աննա	Լ. Պողոսյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

13.10.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:
2. PR-ի արդյունքների մասին:
3. Գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների մասին:
4. Ավարտական աշխատանք և թեզ գրող ուսանողների հետ իրականացրած հանդիպումների արդյունքների մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:

Ա. Թոփուզյան – Մեր ամբիոնի դասախոսները ընդգրկված են տարբեր ֆակուլտետների մանկավարժական պրակտիկաներում որպես մանկավարժներ և բավականին լավ արձագանքներ ենք ստացել մի քանի ֆակուլտետների դեկաններից, ովքեր մեր ամբիոնի դասախոսների աշխատանքը՝ որպես պրակտիկաներին կցված մանկավարժներ, շատ բարձր են գնահատել՝ համեմատելով հոգեբանների և մեթոդիստների աշխատանքի հետ: Ես ևս ուսումնասիրել եմ պրակտիկաների էլեկտրոնային հարթակները և մեր ամբիոնի դասախոսների ակտիվությունը հարթակներում շատ ակնհայտ է: Սակայն ուսումնասիրել եմ նաև տվյալ պրակտիկաների համար նախատեսված աշխատանքային պլանները, որոնց

բովանդակությունը այնքան էլ գոհացուցիչ չէր: Մասնավորապես, ոչ մի աշխատանքային պլան չէր արտացոլում տվյալ մասնագիտության առանձնահատկությունը, գրեթե բոլոր պլանները նույնատիպ են: Խնդրում եմ վերանայեք պլանները և կառուցեք անհատական, նպատակային պլան՝ յուրաքանչյուր մասնագիտության համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գ. Հակոբյանը, Ս. Ջանիկյանը, Գ. Հարությունյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Թոփուզյանի դիտարկումներն ընդունել ի գիտություն և երկու օրվա ընթացքում վերանայել պրակտիկայի աշխատանքային պլանները:

2. **ԼՍԵՑԻՆ** - PR-ի արդյունքների մասին

Ա. Թոփուզյան – Շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն դասախոսներին, ովքեր մասնակցեցին ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացին՝ այցելելով դպրոցներ ինչպես մարզերում, այնպես էլ Երևանում: Խնդրում եմ այցելությունների արդյունքների մասին հաշվետվությունները ներկայացնել ամբիոն՝ կցելով նաև այն աշակերտների ցանկը, ովքեր ցանկություն են հայտնել ընդունվել մեր համալսարան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվետվությունները ներկայացնել մինչև 08.11.2021թ.:

3. **ԼՍԵՑԻՆ** - Գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների մասին:

Ա. Թոփուզյան – Ինչպես գիտեք մեր գիտաժողովը տեղի է ունենալու ս/թ նոյեմբերի 30-ին, որը առաջարկում եմ նվիրել ՀՊՄՀ 100-ամյակին: Գիտաժողովին ներկայացվող բոլոր զեկույցները հոդվածների տեսքով հրատարակվելու են «Սոցիալ-մանկավարժական միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով գիտաժողովի նյութերի ժողովածուում: Գրեթե բոլոր հոդվածներն արդեն ներկայացված են և գտնվում են խմբագրման ընթացքի մեջ: Մեզ անհրաժեշտ է ձևավորել գիտաժողովի օրակարգը, այն նպատակահարմար է սկսել պլենար նիստով, որին կհաջորդի 5 մասնախմբերի զուգահեռ աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել Ա. Թոփուզյանի առաջարկությունը գիտաժողովը ՀՊՄՀ 100-ամյակին նվիրելու մասին:

2. Հանձնարարել Լ. Պողոսյանին ձևավորելու գիտաժողովի օրակարգը:

4. **ԼՍԵՑԻՆ** - Ավարտական աշխատանք և թեզ գրող ուսանողների հետ իրականացրած հանդիպումների արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ հոկտեմբերի 22-ից, ըստ գրաֆիկի, անցկացնում ենք հանդիպումներ ԿՀՍ և ՍԿ ֆակուլտետների առկա բաժնի ավարտական աշխատանք և թեզ գրող ուսանողների հետ: Պետք է ասեմ, որ կան ավարտական աշխատանք գրող ուսանողներ, ովքեր դեռևս չեն ավարտել իրենց թեմայի տեսական հատվածի հետ կապված աշխատանքները: Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողները 2022թ. փետրվարի սկզբին պաշտպանության են, սակայն կան ուսանողներ, ովքեր դեռ չեն ավարտել հետազոտությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Նազարյանը, Հ. Թադևոսյանը, Ն. Մարտիրոսյանը, Ս. Ջանիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մինչև ս/թ նոյեմբերի 30-ը ավարտել բակալավրի ավարտական աշխատանքի տեսական մասը: Մինչև դեկտեմբերի 20-ը հանձնել հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների թեզերը՝ նախապաշտպանությունը դեկտեմբերի 22-24-ը անցկացնելու համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

03.11.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ա. Դալլաքյանի «Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ» թեմայով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:
2. Մանկավարժության ամբիոնի հայցորդներ Գոհար Երիցյանի և Արմինե Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմաների մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Ա. Դալլաքյանի «Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ» թեմայով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., ասիստենտ Ն. Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Դալլաքյանի «Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության և ՀՊՄՀ գիտ. խորհուրդ ներկայացնելու համար տալ արտաքին կարծիքի:

Ամբիոնի նիստի 23 անդամներից ներկա էին 22-ը, որից կողմ քվեարկեց 22-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

2. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդ Գոհար Երիցյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Հովհաննիսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Գոհար Երիցյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Կրտսեր դպրոցականների ուսման մեջ ետ մնալու հիմնախնդիրը և դրա հաղթահարման ուղիները»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Հովհաննիսյանին:

ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդ Արմինե Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ն. Մարտիրոսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Արմինե Կարապետյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Ուսուցչի մասնագիտական կատարելագործման ուղիները ժամանակակից մանկավարժական մոտեցումների համատեքստում»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Ասատրյանին:

Ամբիոնի նիստի 23 անդամներից ներկա էին 22-ը, որից կողմ քվեարկեց 22-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

24.11.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Մանկավարժության ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:
2. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամփոփիչ քննությունների տոմսերի հաստատման մասին:
3. «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով գիտաժողովի արդյունքների մասին:
4. Մագիստրոսների հետ կազմակերպվող հանդիպումների մասին:

1. **ԼՍԵՑԻՆ –** Մանկավարժության ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյան, Լ. Ասատրյան, Լ. Պողոսյան, Ա. Մանուկյան, Ի. Բաբայան, Հ. Թաղևոսյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Եգանյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել ներքոհիշյալ հայցորդներին և ասպիրանտներին՝ ատենախոսության թեմայի շրջանակներում 2021թ. կատարած աշխատանքների հիման վրա: /հաշվետվությունները կցվում են/

1. Գինոսյան Սյուզաննա /ասպիրանտ/

2. Կոստանյան Էմմա /ասպիրանտ/
3. Հովակիմյան Անահիտ /ասպիրանտ/
4. Անտոնյան Լիլիթ /հայցորդ/
5. Սարգսյան Անուշ /հայցորդ/
6. Պետրոսյան Արևիկ /հայցորդ/
7. Ավետիսյան Լորեթա /հայցորդ/
8. Դուրգարյան Ալեսա/հայցորդ/
9. Մարգարյան Թինա /հայցորդ/
10. Ղահրամանյան Շուշանիկ /հայցորդ/
11. Կարապետյան Արմինե /հայցորդ/
12. Երիցյան Գոհար /հայցորդ/

2. ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամփոփիչ քննությունների տոմսերի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան - Ամբիոնի դասախոսները ներկայացրել են 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամփոփիչ քննությունների տոմսերը: Ես կարդացել եմ բոլոր տոմսերը: Բոլորը կազմված են ըստ սահմանված ձևաչափի և ըստ պահանջի՝ տոմսի 3-րդ հարցը պետք է լինի գործնական բնույթի: Խնդրվում է բոլոր դասախոսներին քննությունը սկսել ժամանակին, ընթերականերից պահանջվում է չուշանալ: Առաջարկում եմ հաստատել քննությունների տոմսերի բովանդակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամփոփիչ քննության տոմսերի բովանդակությունը: Քննության տանել ոչ միայն տոմսերը, այլև հարցաշարը, տեղեկագիրը:

3. ԼՍԵՑԻՆ - «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով գիտաժողովի արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան – 30.11.2021թ. տեղի ունեցավ «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով գիտաժողովը /օրակարգը կցվում է/, որը շատ լավ արձագանքներ ստացավ և նվիրված էր ՀՊՄՀ 100-ամյակին: Գիտաժողովի աշխատանքները սկսվեցին պլենար նիստով, որից հետո տեղի ունեցան 5 մասնախմբերի զուգահեռ նիստերը: 1-ին մասնախումբը «Կրթական միջավայրի նախագծման և

զարգացման ժամանակակից հիմնախնդիրներ» թեմայով ղեկավարում էր Լ. Պողոսյանը, 2-րդ մասնախումբը «Ընտանիքը որպես սոցիալ-մշակութային միջավայր» թեմայով ղեկավարում էր Գ. Հակոբյանը, 3-րդ մասնախումբը «Զանգվածային լրատվամիջոցները, որպես երեխայի վրա ազդող սոցիալ-մշակութային գործոն» թեմայով՝ Դ. Մարկոսյանը, 4-րդ մասնախումբը «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը երեխաների դաստիարակության գործընթացի վրա» թեմայով՝ Հ. Թադևոսյանը, 5-րդ մասնախումբը «Ուսումնական հաստատությունների կրթական միջավայրը որպես որակի ապահովման գործոն» թեմայով՝ Ա. Դալլաքյանը: Մասնախմբերի բոլոր ղեկավարները ներկայացրել են առաջարկություններ՝ ելնելով տվյալ մասնախմբում քննարկված և ներկայացված հիմնախնդիրներից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Թոփուզյանի հաղորդումն ընդունել ի գիտություն: Ներկայացված բոլոր առաջարկությունների հիման վրա կազմել միջոցառումների պլան:

4. ԼՍԵՑԻՆ - Մագիստրոսների հետ կազմակերպվող հանդիպումների մասին:

Ա. Թոփուզյան – Նախատեսվում են հանդիպումներ առկա և հեռակա մագիստրատուրայում թեզ գրող ուսանողների հետ՝ ըստ հետևյալ ժամանակացույցի.

- 16.12.2021թ. ժամը 14:30 - ԿՀՍ, առկա մագիստրատուրա 2-րդ կուրս,
- 23.12.2021թ. ժամը 12:30 - ՍԿ, առկա մագիստրատուրա 2-րդ կուրս,
- 22.12.2021թ. ժամը 14:30 - ՍԿ, հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրս, նախապաշտպանություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ղեկավարներին հանդիպել ուսանողների հետ և նախապատրաստել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

15.12.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2021-2022 ուս. տարում Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 3-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունները:

ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուս. տարում Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 3-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյան, Լ.Պողոսյան, Ս. Սիսյան, Գ. Հարությունյան, Ն. Մարտիրոսյան, Գ. Եգանյան, Ա. Դալլաքյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Թույլատրել ՍԿ ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ 3-րդ կուրսի մագիստրատուրայի ներքոհիշյալ ուսանողների թեզերի հրապարակային պաշտպանությունը:

Հ/Հ	ԹԵԶԻ ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ	ԳՐԱԽՈՍ
1.	Առողջության նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորումը տարրական	Եգանյան Սուսաննա	Լ. Պողոսյան	Ն. Կարապետյան

	դպրոցում:			
2.	Պաուլո Ֆրեյրեի հումանիստական գաղափարներն ու դրանց կիրառման հնարավորությունները ժամանակակից դպրոցում:	Ալոյան Քրիստինե	Լ. Պողոսյան	Ս. Ջանիկյան
3.	Ուսուցչի օգնականի դերը համընդհանուր ներառական կրթության համատեքստում:	Սամվելյան Էլեն	Ն. Մարտիրոսյան	Գ. Աղուզումցյան
4.	Ճանաչողական խաղերը որպես կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման միջոց:	Հայրապետյան Մարիամ	Ս. Սիսյան	Գ. Հակոբյան
5.	Կրտսեր դպրոցականների ինքնակրթության հիմնախնդիրը տարրական դպրոցում:	Աթանեսյան Թամարա	Գ. Հարությունյան	Մ. Ասատրյան
6.	Կրտսեր դպրոցականների սոցիալական փորձի ձևավորումը (ՀՀ ԳԱԱ երկրաբանության թանգարանի օրինակով):	Ալեքսանյան Աստղիկ	Ա. Դալլաքյան	Մ. Գևորգյան
7.	Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները տարրական դպրոցում:	Համբարձումյան Լուսինե	Ա. Դալլաքյան	Զ. Ասատրյան
8.	«Շախմատ» առարկայի դերը կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում:	Խեչոյան Քրիստինե	Գ. Եգանյան	Ն. Մարկոսյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

22.12.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. ՛՛Մանկավարժական վալեոլոգիա՛՛ դասընթացի փաթեթի քննարկում:

ԼՍԵՑԻՆ - ՛՛Մանկավարժական վալեոլոգիա՛՛ դասընթացի փաթեթի քննարկում:

Ա. Թոփուզյան – Այսօր մենք մանրամասն կքննարկենք ՛՛Մանկավարժական վալեոլոգիա՛՛ առարկայի փաթեթը, որի հիման վրա դուք կվերանայեք ձեր մյուս առարկաների փաթեթները:

Լ. Պողոսյան - ՛՛Մանկավարժական վալեոլոգիա՛՛ դասընթացը նախատեսված է ՍԿ ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսում դասավանդելու համար:

Դասընթացի նպատակը ապագա ուսուցիչների նախապատրաստումն է տարրական դպրոցում առողջագիտական մանկավարժական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը:

Խնդիրները

1. Նպաստել ուսանողների առողջագիտական գիտելիքների յուրացմանը, նրանց կողմից դրանց կարևորության գիտակցմանը,

2. Նպաստել ուսանողների կողմից դպրոցի մանկավարժական գործընթացում երեխայի առողջության պահպանմանը նպաստող միջավայրի ստեղծմանը:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Ա1. սահմանելու մանկավարժական վալեոլոգիայի նպատակն ու խնդիրները, սկզբունքներն ու մեթոդները,

Ա2. նկարագրելու տարբեր գործոնների ու տարրերի ազդեցությունը մարդու առողջության վրա, բացատրելու ռիսկային ապրելակերպի ազդեցությունը երեխայի առողջության վրա /հիպոդինամիա,ցալկոհոլիզմ, թմրամոլություն և այլն/,

Ա3. հիմնավորելու ուսումնական աշխատանքին և հանգստին ներկայացվող հիգիենիկ պահանջները, դասին ներկայացվող վալեոլոգիական պահանջները:

Բ1. բացահայտելու ռիսկային խմբերը դասարանում, տարբերակելու առողջագիտական մանկավարժական գործընթացի տարրերն ու որոշելու դրանց ազդեցությունը գործընթացի արդյունավետության վրա,

Բ2. գործնականում կիրառելու տարբեր վալեոլոգիական մեթոդներ, ձևեր, միջոցներ սովորողների առողջության պահպանման, ամրապնդման նպատակով,

Բ3.նախագծելու կրթական առողջագիտական միջավայր, փորձարկելու այն և վերլուծելու արդյունքները:

Գ1. թիմում աշխատելու կարողության ձևավորում,

Գ2. վերլուծելու փաստերն ու կատարելու եզրահանգումներ:

Ըստ ուսումնական պլանի, դասընթացին տրված է 24 լսարանային ժամ, որից 18-ը դասախոսություն, 6-ը գործնական:

Դասախոսության թեմաներն են՝

Թեմա 1. Վալեոլոգիան որպես գիտական դիսցիպլին: Մանկավարժական վալեոլոգիայի էությունը, գործառույթներն ու հասկացությունները:

Թեմա 2. Մանկավարժական վալեոլոգիայի ժամանակակից հայեցակարգերը և առողջության դպրոցների մոդելները:

Թեմա 3.Աշակերտների առողջության պահպանումը դպրոցի մանկավարժական գործընթացում:

Թեմա 4. Վալեոլոգիական սկզբունքների ներդրումը դասի կազմակերպման գործընթացում:

Թեմա 5. Առողջապահական մանկավարժական տեխնոլոգիաները տարրական դպրոցում:

Թեմա 6. Առողջությունը որպես մանկավարժական արժեք։

Թեմա 7. Տարրական դպրոցի ուսուցչի վալեոլոգիական կոմպետենցիաները։

Թեմա 8. Երեխայի միջավայրին ներկայացվող վալեոլոգիական պահանջները և ընտանիք-դպրոց համագործակցությունը այդ համատեքստում։

Թեմա 9. Մանկավարժական համատեղելիության հիմնախնդիրը առողջագիտության համատեքստում։

Գործնական աշխատանքներն են՝

Թեմա 1. Դասին ներկայացվող վալեոլոգիական պահանջները տարրական դպրոցում։

Մեթոդ - Նախագծային աշխատանք, մոդելավորում

Թեմա 2. Երեխաների առողջ ապրելակերպի և բարոյական պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում պանդեմիայի պայմաններում։

Մեթոդ - Կլոր սեղան-քննարկում

Թեմա 3. Առողջ ապրելակերպի բնութագիրը և վնասակար սովորույթների կանխարգելումը։

Մեթոդ - Քարոզ-կոչ, նախագիծ

Լ. Ասատրյան – Առաջարկում եմ առարկայի նպատակը վերանայել։

Ա. Մանուկյան – Ես կարծում եմ, որ այսօր ամենաառաջնային խնդիրը համակարգչային կախվածությունն է, որը առաջարկում եմ որպես առանձին թեմա ներառել փաթեթում: Առաջարկում եմ նաև որպես ինքնուրույն աշխատանք ուսանողներին հանձնարարել ներկայացնել իրենց ապրելակերպը վալեոլոգիական տեսանկյունից, այսինքն, որքանով են իրենք առողջ ապրելակերպով ապրում:

Ն. Կարապետյան – Առաջարկում եմ գործնական աշխատանքներում ներառել առողջ ապրելակերպը քարոզելու առաջադրանք:

Ա. Թոփուզյան – Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե մեր պատրաստած փաթեթները որքանով են համապատասխանում 21-րդ դարի հմտություններին: Ես կարծում եմ, որ այս առարկայի փաթեթը այդ տեսանկյունից մի փոքր կաղում է:

Ցանկալի կլինի որպես գնահատվող հանձնարարություն կամ միջանկյալ ստուգում հանձնարարել կազմել ինտեգրված դասի պլան առողջ ապրելակերպի վերաբերյալ:

Մեզանից պահանջվում է նախապես պլանավորել նաև ինքնուրույն աշխատանքները, ուստի առաջարկում եմ յուրաքանչյուր առարկայի համար ստեղծել ինքնուրույն աշխատանքի փաթեթ: Ուսանողի ինքնագնահատականը, ինքնուրույնությունը, ինքնադրսևորումը ձևավորվում է նաև ինքնուրույն աշխատանքի միջոցով, ուստի անհրաժեշտ է կարևորել ինքնուրույն աշխատանքները մեր ծրագրերում և նախապես հստակ պլանավորել դրանք:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հանձնարարել տիկին Պողոսյանին վերանայել ՛՛Մանկավարժական վալեոլոգիա՛՛ դասընթացի փաթեթը՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները: 2. Հանձնարարել բոլոր դասախոսներին վերանայել իրենց կողմից դասավանդվող առարկաների նպատակները, խնդիրները, դասախոսությունների թեմաները, առաջադրանքները, ինքնուրույն աշխատանքները, գործնական աշխատանքները՝ համապատասխանեցնելով դրանք վերջնարդյունքներին և կազմել ինքնուրույն աշխատանքի փաթեթ յուրաքանչյուր դասընթացի համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

19.01.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. ՛՛Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն՛՛ դասընթացի փաթեթի քննարկում:

ԼՍԵՑԻՆ - ՛՛Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն՛՛ դասընթացի փաթեթի քննարկում:

Ա. Թոփուզյան – Այսօր կքննարկենք ՛՛Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն՛՛ դասընթացի փաթեթը, որը դասավանդվում է համալսարանի գրեթե բոլոր ֆակուլտետներում:

Ի. Բաբայան - Դասընթացի նպատակը ապագա մանկավարժի տեսամեթոդական նախապատրաստումն է մասնագիտական-հետազոտական և փորձագիտական աշխատանքի՝ որպես նրա գործունեության հիմնական տեսակ:

Դասընթացի խնդիրներն են.

- ձևավորել մագիստրոսի հետազոտական աշխատանք կատարելու կարողությունները և հմտությունները,
- ընդլայնել ուսանողների ընդհանուր մշակութային, մանկավարժական, մասնագիտական և գիտահետազոտական գիտելիքների շրջանակը,
- զարգացնել ուսումնադաստիարակչական գործընթացում հիմնախնդիրներ տեսնելու, հիմնավորելու, դրանց լուծման համար գիտական որոնումներ իրականացնելու, մանկավարժական տարբեր իրավիճակներ մոդելավորելու, տեղեկատվություն կուտակելու, մշակելու, համակարգելու կարողություններ,համապատասխան գրականություն գտնել, մշակել, վերլուծել, համեմատել, հիմնավորել, եզրակացնել:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Ա1. ներկայացնելու առարկան, նպատակը, հիմնական հասկացությունները,

Ա2. պարզաբանելու մանկավարժական հետազոտությունների մեթոդների էությունն ու առանձնահատկությունները,

Ա3. ընտրելու հետազոտական աշխատանքի հիմնական ձևերը, մանկավարժական հետազոտությունների նախագծման և իրականացման տեխնոլոգիաները:

Բ1 աշխատելու գիտամեթոդական գրականությամբ,

Բ2. Իրականացնելու մանկավարժական իրավիճակների դիտումներ,

Բ3.իրականացնելու հարցաթերթիկային հարցումներ, հարցազրույց, թեստավորում, դիտում, զրույց հետազոտության ընթացքում,

Բ4. մշակելու, համակարգելու, վերլուծելու և մեկնաբանելու մանկավարժական հետազոտության արդյունքները,

Բ5.ձևակերպելու հետազոտության արդյունքներն ըստ առաջադրված պահանջների,

Գ1. ներկայացնելու գիտական աշխատանքի նորմերն ու կանոնները:

Ըստ ուսումնական պլանի դասընթացին տրված է 24 լսարանային ժամ, որից 18-ը դասախոսություն, 6-ը գործնական: **Դասախոսության թեմաներն են.**

Թեմա 1. Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն առարկայի նպատակն ու խնդիրները,

Թեմա 2. Մանկավարժական հետազոտությունների գիտական հասկացությունները,

Թեմա 3. Մանկավարժական հետազոտության էմպիրիկ մեթոդները: Դիտումը և զրույցը որպես հետազոտության էմպիրիկ մեթոդներ,

Թեմա 4. հարցաթերթիկները, հարցազրույցը և թեստերը որպես հետազոտության էմպիրիկ մեթոդներ,

Թեմա 5. Case study -ին որպես մանկավարժական հետազոտության մեթոդ,

Թեմա 6. Ֆոկուս խմբերի մեթոդը (հետազոտության որակական մեթոդ),

Թեմա 7. Սովորողների գործունեության արդյունքների ուսումնասիրման և մանկավարժական առաջավոր փորձի ընդհանրացման մեթոդները,

Թեմա 8. Հետազոտության արդյունքների ձևակերպումը, մեկնաբանումը, հակապլագիատային ծրագրեր,

Թեմա 9. Ուսանողների ուսումնահետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջները,

Գործնական աշխատանքներն են.

Մեթոդ – մոդելավորում

Թեմա - ”Մանկավարժական հետազոտության հասկացական (կատեգորիալ) ապարատի կառուցվածքը”

Մեթոդ - Մանկավարժական իրավիճակների վերլուծություն

Թեմա - ”case study-ին որպես մանկավարժական հետազոտության մեթոդ“

Մեթոդ - Հետազոտական աշխատանք

Առաջադրանք - Իրականացրեք փոքրիկ հետազոտություն ձեր մագիստրոսական թեզի թեմայի շրջանակներում՝ հարցաթերթիկի միջոցով, վերլուծեք, ամփոփեք ստացված արդյունքները, ներկայացրեք տեսասահիկով:

Ա. Թոփուզյան – Այս առարկան հիմնականում պետք է գործնական բնույթ ունենա: Այն պետք է սովորեցնի ուսանողներին.

- Որոնք են գիտահետազոտական մեթոդները, ինչով են տարբերվում մյուս մեթոդներից,
- Ինչպես պետք է անցկացնել հետազոտությունը,
- Ինչպես պետք է թեմային համապատասխան հարցաթերթիկ կազմել,
- Ինչպես պետք է ամփոփել հարցաթերթիկների պատասխանները և վերլուծել,
- Ինչպես եզրակացություններ ձևակերպել:

Անհասկանալի է 6-րդ թեման: Գործնական աշխատանքներից մեկը պետք է սովորեցնի հարցաթերթիկ կազմել և այն համապատասխանեցնել թեզի թեմային և նպատակին: Յուրաքանչյուր թեմայից հետո, ինքնուրույն աշխատանքի շրջանակում կամ գնահատվող առաջադրանքի միջոցով հանձնարարել փոքրիկ հետազոտություն անցկացնել էմպիրիկ տարբեր մեթոդներով՝ 5, 6 հոգու շրջանում:

Դասընթացի ավարտին ուսանողները պետք է կարողանան ձևակերպել և համապատասխանեցնել իրենց թեզի նպատակը, դրանից բխեցնել խնդիրները, որոնց պատասխանները պետք է արտացոլվեն եզրակացություններում: Այնուհետև այս առարկան պետք է ուսանողին օգնի վերլուծել, համեմատել, եզրակացություն անել, հետազոտություն անել, հիմնավորել, կշռադատել և այլն: Մի խոսքով այդ դասընթացը պետք է օգնի ուսանողներին իրենց թեզերը գրել և պաշտպանել:

Լ. Ասատրյան – Առաջարկում եմ մեթոդների դիտարկումից հետո ուսանողները որևէ փոքրիկ թեմայի շրջանակներում որոշարկեն դրա նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, այսինքն, հասկացական ապարատը, որի արդյունքում ուսանողները ավելի հեշտ կյուրացնեն նյութը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Մինչև 30.01.2022թ. վերանայել ՝՝Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն՝՝ առարկայի փաթեթը՝ հաշվի առնելով դիտարկումները: 2. Այսօրվա քննարկման արդյունքներով վերանայել մյուս բոլոր առարկաների փաթեթները և ներբեռնել Classroom հարթակ մինչև 03.02.2022թ.:

3. Փաթեթները վերանայելիս հաշվի առնել այն հանգամանքը, որ այն պետք է համապատասխանի կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

20.01.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Մ.գ.թ., դասախոս Արմինե Հրաչիկի Դալլաքյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության մասին:
2. Թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: /զեկուցողներ՝ գիտական ղեկավարներ/

1. ԼՍԵՑԻՆ – Մ.գ.թ., դասախոս Արմինե Հրաչիկի Դալլաքյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության մասին:

Ա. Թոփուզյան – Ա. Դալլաքյանը 2003-2009թթ. սովորել և ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության և

հոգեբանության ֆակուլտետը՝ (որակավորումը՝մանկավարժ-հոգեբան,իրավաբանական հոգեբան):

2009-2015թթ. եղել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության միջֆակուլտետային ամբիոնի հայցորդ: 2014թ.-ին «Մանկավարժություն–020» մասնագիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»:

2005-2011թթ. եղել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի գործավար: 2009թ. առ այսօր ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի դասախոս:

2011թ. դեկտեմբերից առ այսօր ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի ուսումնական աշխատանքների գծով փոխդեկան:

Հանդիսանում է 25 գիտական հոդվածների հեղինակ, որից 21-ը տպագրվել է թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո, դրանցից 7-ը տպագրվել է դրսում, մասնավորապես 4-ը տպագրվել են ցիտման <<РИНЦ>> համակարգում ընդգրկված ամսագրերում, իսկ 3-ը՝ գիտաժողովների ամսագրերում:

2021 թ.-ին հրատարակել է «Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը:

Մինչ օրս «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության գծով ղեկավարել է 12 մագիստրոսական հետազոտական աշխատանք, իսկ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությամբ՝ 4 ավարտական աշխատանք:

Մասնակցել է հետևյալ վերապատրաստումներին՝ (առկա են հավաստագրերը).

2013թ.Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող ուսանողների հետ աշխատանքի կազմակերպում դասընթացներին մասնակցություն,

2012թ.Ներառական կրթության տեսություն և պրակտիկա առարկայի գծով մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցություն,

2017թ.Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր,

2018 Էրազմուս + շարժունության ծրագրի մասնակցություն՝ Ֆինլանդիա, Օուլու Համալսարան՝,

2019 Էրազմուս + շարժունության ծրագրի մասնակցություն/Ռումինիա, Պիտեշտի Համալսարան/ Ա. Դալլաքյանը սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի անդամ է:

Ամեն տարի կազմակերպում է ամբիոնի կողմից ավանդույթ դարձած ուսանողական գիտաժողովը, մասնակցում է ամբիոնային տարբեր միջոցառումներին՝ քննարկումներ, սեմինարներ, կոնֆերանսներ և այլն: Այս ուսումնական տարվա ընթացքում իրականացրել է PR ավագ դպրոցականների շրջանում՝ նրանց մասնագիտական ուղղորդվածության և կողմնորոշման հետ տարվող աշխատանքներ:

2021թ.-ին ամբիոնի կողմից ընդգրկված է եղել ուսուցիչների վերապատրաստման գործընթացին, մասնավորապես <<Գնահատում>> բաժինը բնագիտական հոսքի ուսուցիչների շրջանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ն. Մարտիրոսյանը, Ս. Սիսյանը, Գ. Հակոբյանը, Գ. Աղուզումցյանը, Գ. Եգանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ-ի գիտական խորհուրդ ներկայացնել մ.գ.թ., դասախոս Արմինե Հրաչիկի Դալլաքյանի թեկնածությունը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

2. ԼՍԵՑԻՆ - Թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

Գ. Եգանյան – Ղեկավարում եմ 3 ավարտական աշխատանք և 1 մագիստրոսական թեզ: Մագիստրոսը ՍԿ ֆակուլտետի առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Խեչոյան Քրիստինեն է, ով կատարել է հետազոտությունը, այս պահին արդյունքների ամփոփման փուլում է: Ավարտական աշխատանք գրող ուսանողներն են.

- Բաղդասարյան Սոնա, ԿՀՍ, առկա բակալավր 4-րդ կուրս, ավարտել է աշխատանքի տեսական և հետազոտական մասը, կատարում է արդյունքների վերլուծություն:
- Բաղդասարյան Անահիտ, ԿՀՍ, հեռակա բակալավր 5-րդ կուրս, աշխատանքի տեսական մասն ավարտել է, կազմել է հարցաթերթեր, իրականացրել է հետազոտությունը, արդյունքները դեռ չենք ստացել:
- Հովհաննիսյան Վեներա, ՍԿ, հեռակա բակալավր 5-րդ կուրս, ավարտել է աշխատանքի տեսական մասը, կազմել է հարցաթերթիկները և պատրաստվում է իրականացնել հետազոտությունը դպրոցում:

Ի. Բաբայան – Ղեկավարում եմ 1 մագիստրոսական թեզ ՍԿ ֆակուլտետի առկա մագիստրատուրա 2-րդ կուրսում՝ Գևորգյան Աննա: Կատարել է աշխատանքի տեսական և

հետազոտական վերլուծությունները, աշխատում ենք եզրակացությունների ձևակերպման վրա: Ղեկավարում եմ 3 ավարտական աշխատանք, որից 2-ը ԿՀՍ և ՍԿ ֆակուլտետների առկա բակալավր 4-րդ կուրսում, 1-ը ԿՀՍ ֆակուլտետի հեռակա բակալավր 5-րդ կուրսում: Առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողները ավարտել են հետազոտությունը, կատարում են արդյունքների վերլուծություն: Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ուսանողը հետազոտությունը նոր է սկսել, իրականացնում է հարցաթերթիկային հարցում:

Գ. Հարությունյան – Ղեկավարում եմ 2 ավարտական աշխատանք ԿՀՍ ֆակուլտետի առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերում: Առկա համակարգում սովորող ուսանողուհին՝ Գալստյան Լյուբան, ավարտել է աշխատանքի տեսական և հետազոտական մասը, կատարում է վերլուծություն: Հեռակա համակարգի ուսանողուհի Մանուկյան Ժաննան տեսական մասն ավարտել է, կատարում է հետազոտություն:

Հ. Թադևոսյան – Ղեկավարում եմ 3 ավարտական աշխատանք և 2 մագիստրոսական թեզ: Այս պահին բոլոր 5 ուսանողները կատարում են հետազոտական աշխատանք, որոնք ավարտելու են մինչև ս/թ փետրվարի 25-ը և սկսեն կատարել համապատասխան վերլուծությունները:

Գ. Աղուզումցյան – Ղեկավարում եմ 2 ավարտական աշխատանք ԿՀՍ հեռակա բակալավր 5-րդ կուրսում: 2 ուսանողներն էլ ավարտել են աշխատանքների տեսական մասը, կատարել են հետազոտությունները, իրականացնում են վերլուծություններ:

Ն. Մարտիրոսյան – Ղեկավարում եմ 1 մագիստրոսական թեզ ՍԿ ֆակուլտետի առկա մագիստրատուրա 2-րդ կուրսում՝ Խաչատրյան Լինա: Աշխատանքի տեսական մասն ավարտել է, կատարել է հետազոտությունը, այս պահին ամփոփում է արդյունքները:

Ն. Կարապետյան – Ղեկավարում եմ 2 ավարտական աշխատանք ՍԿ ֆակուլտետի առկա բակալավր 4-րդ կուսրում: Ուսանողներն ավարտել են աշխատանքի տեսական և հետազոտական մասը, աշխատում են եզրակացությունների վրա:

Մ. Գևորգյան – Ղեկավարում եմ 2 ավարտական աշխատանք ՍԿ ֆակուլտետում: 2 ուսանողներն էլ պարտաճանաչ, աշխատասեր ուսանողներ են, ավարտել են աշխատաքի տեսական և հետազոտական մասի վերլուծությունը, աշխատում են եզրակացությունների ձևակերպման վրա:

Ա. Դալլաքյան – Ղեկավարում եմ 2 մագիստրոսական թեզ ՍԿ ֆակուլտետի առկա մագիստրատուրա 2-րդ կուրսում: Անտոնյան Սեդան հրաշալի աշխատել է, թեզը գրեթե

պատրաստ է, այս պահին ամբողջացնում է եզրակացությունները: Հովսեփյան Իզաբելլան թույլ ուսանող է, բազային կրթությամբ մանկավարժ չէ, ունի լուծարք թեզի շրջանակներում: Հստակ ժամկետներ եմ սահմանել, որպեսզի ամբողջացնի թեզի տեսական և հետազոտական մասը և ներկայացնի: Լուծարային փուլից հետո կներկայացնեմ արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Օգնել ուսանողներին ավարտելու հետազոտական աշխատանքները մինչև 30.02.2022թ. և պատրաստել նրանց նախապաշտպանության 1-ին փուլին:

2. Մեկ անգամ ևս ստուգել աշխատանքների ամբողջականությունը, նպատակի, խնդիրների և եզրակացությունների համապատասխանությունը և ներդաշնակությունը:

3. PP ներկայացումները պատրաստելիս շեշտը դնել հետազոտության արդյունքների բովանդակության և բացահայտված դրական ու բացասական հիմնախնդիրների վրա:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

16.02.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. ՀՀ ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ իրականացնելու մասին:
2. 2022թ. մանկավարժությունից ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի կանոնադրության հաստատման մասին:
3. Ուսուցիչների հանրապետական ժողովի կազմակերպման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - ՀՀ ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ իրականացնելու մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ մարտի 15-ից ապրիլի 15-ը պետք է իրականացնենք ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշում (PR) Երևանի և ՀՀ այլ մարզերի դպրոցներում: Դպրոցականների հետ հանդիպումների ժամանակ խնդրում եմ

1. խոսեք համալսարանի, բոլոր ֆակուլտետների գործունեության մասին, ուսանողների խրախուսման ձևերի, ուսանողական ամառային ճամբարների, Ֆինլանդիայի հետ փոխայցելությունների և համատեղ աշխատանքների մասին և այլն:
2. Ձեզ հետ տարեք բուկլետներ, մեր համալսարանի թերթի համարներ, տարբեր ռոլիկներ: Խոսեք այն առարկաների մասին, որոնք դասավանդվում են մեզ մոտ:
3. Հարցրեք և ֆիքսեք 12-րդ դասարանցիներից քանի շրջանավարտ է այս տարի ուզում ընդունվել ՀՊՄՀ:
4. Վերջում հրավիրեք այն ուսանողներին, ովքեր ուզում են լինել մանկավարժական համալսարանում մեզ մոտ՝ մեր թանգարանում լինելու, գրադարանները, լաբորատորիաները տեսնելու, ուսանողների և դասախոսների հետ հանդիպելու համար:
5. Տեղեկացրեք մանկավարժական օլիմպիադայի անցկացման մասին, ներկայացրեք կանոնակարգը և հրավիրեք մասնակցելու:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցներ այցելության գրաֆիկը և հետևել դրա կատարմանը:

2. ԼՍԵՑԻՆ - 2022թ. մանկավարժությունից ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի կանոնադրության հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Պատրաստ է արդեն 2022թ. մանկավարժությունից ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի կանոնադրությունը: Այն նվիրված է ՀՊՄՀ 100-ամյակին: Այս տարի օլիմպիադային կարող են մասնակցել 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտները: Օլիմպիադայի նպատակն է նպաստել ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը՝ ուսուցչի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության առաջացմանը և բացահայտել ավագ դպրոցականների սպասելիքները 21-րդ դարի ուսուցչից: Օլիմպիադան անցկացվելու է 3 փուլով: 1-ին փուլը տեղի է ունենալու 27.04.2022թ., մասնակիցները պետք է պատասխանեն ՀՊՄՀ-ի պատմությանը վերաբերող 10 հարցի: 2-րդ փուլը տեղի կունենա

13.05.2022թ., 1-ին փուլը հաղթահարած դպրոցականները պետք է ներկայացնեն մանկավարժական իրավիճակներ և տան դրանց լուծման տարբերակներ: 3-րդ փուլը տեղի կունենա 24.06.2022թ., 2-րդ փուլը հաղթահարածները կգրեն և կներկայացնեն էսսե ՛՛21-րդ դարի ուսուցիչը մեր աչքերով՛՛ թեմայով: Օլիմպիադայի մասնակիցները կստանան մասնակցության մասին հավաստագրեր, իսկ հաղթողները (առաջին, երկրորդ, երրորդ տեղեր)՝ նվերներ և պատվոգրեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն. Մարտիրոսյանը, Գ. Աղուզումցյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022թ. մանկավարժությունից ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի կանոնադրությունը: /կցվում է/

3. ԼՍԵՑԻՆ - Ուսուցիչների հանրապետական ժողովի կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպվող միջոցառումների շարքը պլանավորում ենք ամփոփել ուսուցիչների հանրապետական ժողովով, որը հավանաբար կանցկացվի ս/թ հոկտեմբեր ամսին՝ ուսուցչի տոնին ընդառաջ: Ժողովին կարող են մասնակցել հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցների ՀՊՄՀ-ն ավարտած, գործող ուսուցիչները: PR-ի շրջանակներում դպրոցներ այցելությունների ժամանակ խնդրում եմ տեղեկացրեք ՀՊՄՀ շրջանավարտ ուսուցիչներին միջոցառման մասին և փոխանցեք մասնակցության հայտի ձևը: Միջոցառման հիմնական պատասխանատուներն են լինելու Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Սիսյանը, Մ. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Թոփուզյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և միջոցառման մասին տեղեկատվությունը տարածել ինչպես դպրոցներ այցելությունների ժամանակ, այնպես էլ facebook սոցիալական ցանցի միջոցով:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

16.03.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Հանրապետության դպրոցներում ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին:
2. Պրակտիկայի դիդակտիկ նյութերի ցուցահանդեսի կազմակերպման մասին:
3. Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի անցկացման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Հանրապետության դպրոցներում ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Դպրոցներում, մեր համասարանի շրջանավարտ, գործող ուսուցիչների և մեր ամբիոնի դասախոսների համատեղ ջանքերով կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված ՀՊՄՀ 100-ամյակին: Առաջիկայում պլանավորված են հետևյալ միջոցառումները.

- Աբովյան քաղաքի Խ. Աբովյանի անվան թիվ 1 դպրոցի ավագ դպրոցականների, աշակերտների շնորհավորական հանդես ՀՊՄՀ-ում:

  Ժամկետ՝ 01.04.2022թ. ժամը 14:00-ին

  Պատասխանատուներ՝ Ա. Թոփուզյան, Գ. Հակոբյան
- Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 դպրոցում ցերեկույթ

  Ժամկետ՝ 01.04.2022թ. ժամը 11:00-ին

  Պատասխանատու՝ Զ. Ասատրյան, Լ. Ասատրյան
- Երևանի թիվ 104 դպրոցում ցերեկույթ

  Ժամկետը՝ 05.04.2022թ., 28.04.2022թ.

Պատասխանատու՝ Ն. Մարտիրոսյան

Խնդրում եմ, ովքեր նշված օրերին դաս չունեն, պարտադիր մասնակցեն միջոցառումներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն. Մարտիրոսյանը, Զ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել դպրոցներում կազմակերպվող միջոցառումների շարքը:

2. ԼՍԵՑԻՆ - Պրակտիկայի դիդակտիկ նյութերի ցուցահանդեսի կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Արդեն ավանդույթ դարձած պրակտիկայի դիդակտիկ նյութերի ցուցահանդեսն այս տարի անցկացնելու ենք հունիսի 10-ին: Ցուցահանդեսում իրենց աշխատանքներն են ներկայացնելու մեր համալսարանի 10 ֆակուլտետների տարբեր մասնագիտությունների առկա բակալավր 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները՝ իրենց մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության ձևով: Խնդրում եմ պրակտիկաներում ներգրավված բոլոր մեթոդիստներին և մանկավարժներին աշխատել ուսանողների հետ և պատրաստվել ցուցահանդեսին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գ. Հարությունյանը, Գ. Եգանյանը, Զ. Ասատրյանը, Ի. Բաբայանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Պրակտիկայի դիդակտիկ նյութերի ցուցահանդեսի կազմակերպման պատասխանատուներ նշանակել Գ. Հարությունյանին, Գ. Եգանյանին և Ա. Բաղդասարյանին:

3. ԼՍԵՑԻՆ - Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի անցկացման մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ մայիսի 12-ին նախատեսում ենք անցկացնել ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովը, որին մասնակցելու են ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետների մանկավարժությունից թեզ և ավարտական աշխատանք գրող մագիստրոսներն ու բակալավրերը, որոնք կներկայացնեն իրենց հետազոտական աշխատանքների արդյունքները՝ ղեկավարների դիտարկումներով, լրացումներով և գնահատմամբ: Գիտաժողովի ելույթները հոդվածների տեսքով կհրապարակվեն: Սա հնարավորություն կտա ուսանողին իր աշխատանքի ղեկավարի հետ համատեղ հոդված ունենալ և թեզի կամ ավարտական աշխատանքի հետազոտական մասը պաշտպանությունից առաջ հրապարակայնորեն ներկայացնել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյանը, Ա. Դալլաքյանը, Գ. Եգանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Գիտաժողովի կազմակերպման պատասխանատու նշանակել Ա. Դալլաքյանին:
2. Հանձնարարել Ա. Դալլաքյանին կազմել գիտաժողովի ծրագիրը մինչև 15.04.2022թ.:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

30.03.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ս/թ ապրիլի 1-ին կայացած միջոցառման արդյունքների մասին:
2. Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի կազմակերպման ընթացքի մասին:
3. «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովի անցկացման մասին:

4. ՀՀ ավագ դպրոցներում իրականացրած մասնագիտական կողմնորոշման միջոցառումների արդյունքների մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Ս/թ ապրիլի 1-ին կայացած միջոցառման արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ ապրիլի 1-ին մեզ հյուր էին եկել Աբովյան քաղաքի Խ. Աբովյանի անվան թիվ 1 դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները՝ գեղեցիկ միջոցառմամբ շնորհավորելու ՀՊՄՀ 100 ամյակը: Խորհրդանշական էր այն հանգամանքը, որ դպրոցական միջոցառումները սկսվեցին հենց Աբովյան քաղաքի Խ. Աբովյանի անվան դպրոցից: Դպրոցականներն ու մեր բուհի շրջանավարտ ուսուցչական անձնակազմի անդամները ներկայացրին թատերական բեմադրություն՝ նվիրված Խաչատուր Աբովյանի դորպատյան տարիներին: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել տիկին Գ. Հակոբյանին՝ միջոցառումը կազմակերպելու և մեզ բոլորիս գեղագիտական մեծ հաճույք պատճառելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գ. Հակոբյանը, Ա. Հովհաննիսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել կազմակերպել միջոցառումներ դպրոցներում՝ մեր համալսարանի շրջանավարտ ուսուցիչների մասնակցությամբ և կազմակերպմամբ:

2. ԼՍԵՑԻՆ - Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի կազմակերպման ընթացքի մասին:

Ա. Դալլաքյան - Ս/թ մայիսի 12-ին տեղի է ունենալու ուսանող-դասախոս համատեղ գիտաժողով՝ նվիրված ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին: Գիտաժողովի ծրագիրը պատրաստ է: Գիտաժողովը կսկսվի պլենար նիստով: Առաջարկում եմ պլենար նիստում զեկուցելու համար ձայն տալ «Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի» ֆակուլտետի մագիստրոս Սոնա Պետրոսյանին և բակալավր 4-րդ կուրսի ուսանողուհի Լիաննա Նիկողոսյանին, «Սկզբնական կրթության» ֆակուլտետի մագիստրոսներ Տաթևիկ Գևորգյանին, Գոհար Պետրոսյանին, Սեդա Անտոնյանին: Պլենար նիստից հետո տեղի կունենա երեք մասնախմբերի զուգահեռ աշխատանքը: Առաջարկում եմ 1-ին մասնախմբի ղեկավար նշանակել Լ. Ասատրյանին, 2-րդի ղեկավար՝ Լ. Պողոսյանին, 3-րդ մասնախմբի ղեկավար նշանակել Ն. Կարապետյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն Ա. Դալլաքյանի հաղորդումը, թե՛ պլենար նիստին, թե՛ մասնախմբերին վերաբերող նրա առաջարկությունների հետ համաձայնել:

2. Մագիստրոսների և ավարտական աշխատանք գրող ուսանողների ղեկավարներին հանձնարարել մեկ անգամ ևս ստուգել կոնֆերանսին ուսանողների պատրաստվածության մակարդակը և անհրաժեշտության դեպքում կազմակերպել լրացուցիչ խորհրդատվություն:

3. ԼՍԵՑԻՆ - «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովի անցկացման մասին:

Ա. Թովմասյան – Ս/թ դեկտեմբերի 15-16-ը կայանալու է «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվում է մեր համալսարանում՝ նվիրված ՀՊՄՀ 100-ամյակին: Մեր ամբիոնի բոլոր դասախոսները պետք է մասնակցեն գիտաժողովին և հոդված ներկայացնեն: Գիտաժողովի վերաբերյալ տեղեկատվական նամակը տեղադրված է մեր համալսարանի կայքում: Խնդրում եմ ծանոթացեք և հետևեք ժամկետներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյանը, Ա. Դալլաքյանը, Գ. Հակոբյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Գիտաժողովի մասնակցության հայտերն ուղարկել մինչև 15.07.2022թ.:

4. ԼՍԵՑԻՆ - ՀՀ ավագ դպրոցներում իրականացրած մասնագիտական կողմնորոշման միջոցառումների արդյունքների մասին:

Գ. Հարությունյան – Մասնագիտական կողմնորոշում իրականացնելու նպատակով 06.04.2022թ.-ին Գ. Եգանյանի հետ այցելել ենք Արմավիրի մարզի "Ոսկեհատի միջնակարգ դպրոց": 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների ավագ դպրոցականներին հակիրճ ներկայացրել ենք 100-ամյա մանկավարժական համալսարանի պատմությունը, տեղեկատվություն ենք ներկայացրել համալսարանի 10 ֆակուլտետների և համապատասխան շուրջ 60 մասնագիտությունների մասին: Ներկայացրել ենք եռաստիճան կրթական համակարգի առանձնահատկությունները, առկա և հեռակա համակարգում ուսանելու հնարավորության մասին, գործող ռոտացիոն համակարգի մասին, պրակտիկայի ընձեռած լայն հնարավորությունների մասին, բուհում կիրառվող classroom էլեկտրոնային հարթակի առավելությունների մասին: Ավագ դպրոցականների հետ խոսել ենք մանկավարժի, մասնավորապես ուսուցչի մասնագիտության կարևորության մասին: Տեղեկատվություն ենք տվել այն մասին, որ ՀՊՄՀ-ն համագործակցում է արտերկրյա մի շարք բուհերի հետ և խոսել ենք հնարավոր փոխայցելությունների մասին: Ավագ դպրոցականները հետաքրքրված էին, բայց մեծ մասը դեռևս հստակ չէին կողմնորոշվել, թե որ բուհում էին շարունակելու իրենց կրթությունը: Դպրոցականներից մի քանիսը միայն հստակ

նշեցին, որ պլանավորում են կրթությունը շարունակել մանկավարժական համալսարանում: Ավագ դպրոցականներին տեղեկատվություն ներկայացրեցինք կազմակերպվող և արդեն ավանդույթ դարձած դպրոցականների օլիմպիադայի մասին:

Ա. Բաղդասարյան - 2022թ-ի ապրիլի 5-ին ես և տիկին Ա. Հովհաննիսյանը միասին սովորողների մոտ մասնագիտական կողմնորոշում իրականացնելու նպատակով այցելեցինք Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 և Թաթուլ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոցներ, իսկ ապրիլի 15-ին՝ Արարատի մարզի Ջրաշենի Սարգիս Քոլոզյանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ:

Դպրոցների 10-11-րդ դասարանի սովորողներին ներկայացվեց Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի առաքելությունը, ֆակուլտետներն ու բաժինները, կրթաթոշակները և դրամաշնորհները, ուսման վարձերի ճկուն զեղչային համակարգը, ՀՊՄՀ-ի համագործակցությունը աշխարհի մի շարք հայտնի մանկավարժական բուհերի ու գիտական կենտրոնների հետ: Այն, որ համալսարանում պարբերաբար հրատարակվում են թեմատիկ ժողովածուներ, որոնք ամփոփում են դասախոս-ուսանող համագործակցության արդյունքում իրականացված հետազոտությունների արդյունքները: Ներկայացվեց, որ համալսարանը ունի նաև պաշտոնաթերթ և «Հաջողության բանաձև» հաղորդաշար: Ներկայացվեց առաջիկայում մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպվող ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադան, որին համաձայնություն հայտնեցին մասնակցել մի քանի աշակերտներ:

Գ. Հակոբյան - 06.04.2022 թ.այցելեմ եմ Կոտայքի մարզի Բալահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց: Մասնագիտական կողմնորոշման իրազեկման շրջանակներում 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտները տեղեկացվեցին ՀՊՄՀ-ի ֆակուլտետների մասին, տրվեցին աշակերտներին հետաքրքրող հարցեր, ցուցադրվեց բուհի գործունեությանը նվիրված տեսանյութ: Աշակերտներն իրենց գոհունակությունը հայտնեցին օրեր առաջ համալսարանում կազմակերպված միջոցառման վերաբերյալ, որին իրենցից շատերը ներկա են եղել: Նրանք արտահայտեցին այն միտքը, որ այդ օրվանից իրենց մեջ մեծ հետաքրքրություն է առաջացել բուհի նկատմամբ, և կցանկանային հենց այդ բուհում ուսանել:

Ի. Բաբայան - Ես և տիկին Սիսյանը, 13.04.2022թ.-ին այցելեցինք Կոտայքի մարզի Աբովյանի կրթահամալիր և Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց:

Հանդիպեցինք ավագ դպրոցի սովորողների հետ, պատմեցինք բուհի մասին, սիրով պատասխանեցինք աշակերտների բազմաթիվ հարցերին, ցուցադրեցինք տեսանյութ, որում պատմվում էր բուհի վերջին շրջանի ձեռքբերումների ու բարեփոխումների մասին։

Մեկ անգամ ևս կարևորեցինք մանկավարժի մասնագիտությունն ու կոչումը։

Առաջարկեցինք մասնակցել ՀՊՄՀ-ի մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպվող մանկավարժական օլիմպիադային /հայտերն արդեն ուղարկել են/։

Դպրոցի տնօրեն Նոնա Պողոսյանը խոստացավ, որ 100 ամյա բուհի միջոցառումների մասը կդառնան նաև իրենց դպրոցն ու ուսուցիչները։

Տիկին Ա. Մանուկյանի հետ, 07.04.2022թ.-ին եղել ենք Երևանի թիվ 127 դպրոցում, տնօրենի հետ շրջել ենք 4 դասարաններով, ներկայացրել ենք ՀՊՄՀ-ի բոլոր մասնագիտություններն ու ուսանողական կյանքի հետաքրքիր դրվագներ, կարևորել մանկավարժի մասնագիտությունն ու կոչումը:

Ն. Կարապետյան - Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում այցելեցինք Երևան քաղաքի թիվ 148 ավագ դպրոց, Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի միջնակարգ դպրոց, Կոտայքի մարզի Չարենցավանի Մեսրոպ Մաշտոցի անվան ավագ դպրոց, Կոտայքի մարզի Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց։ Հետաքրքիր հանդիպումներ ունեցանք և՛ ուսուցիչների, և՛ ավագ դպրոցականների հետ։ Զրուցեցինք 10-12-րդ դասարանի աշակերտների հետ՝ նրանց իրազեկելով մանկավարժական համալսարանի գործունեության, պրոֆեսորադասախոսական կազմի, ֆակուլտետների, մասնագիտությունների, համալսարաանի 100-ամյակին նվիրված միջոցառումների մասին։

Ն. Մարկոսյան - Ապրիլի 11-ին մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպել եմ Վայոց Ձորի մարզի Ջերմուկի կրթահամալիրի ավագ դասարանների աշակերտների հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև կրթահամալիրի տնօրեն Ա.Արսենյանը և մի շարք ուսուցիչներ: Հանդիպման ընթացքում հանգամանորեն ներկայացրել եմ ՀՊՄՀ պատմությունը, առաքելությունը, մասնագիտությունների ցանկը, ֆակուլտետները, ինչպես նաև համալսարանի 100 ամյակին նվիրված միջոցառումները: Մասնագիտական կողմնորոշման արդյունքում մի շարք աշակերտներ ցանկություն հայտնեցին ուսանել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի տարբեր ֆակուլտետներում:

Ն. Մարտիրոսյան - Սույն թվականի ապրիլի 6-ին ՀՊՄՀ-ի մանկավարժության ամբիոնի դասախոսներս՝ Ն. Մարտիրոսյանը, Գ. Աղուզումցյանը, Ա. Դալլաքյանը եղանք Կոտայքի մարզի Մարմարիկի, Մեղրաձորի, Աղավնաձորի, Փյունիկի, Արտավազդի միջնակարգ դպրոցներում, որտեղ անցկացրեցինք մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ սեմինարներ:

1. Ներկայացրեցինք բուհի հնարավորությունները, ֆակուլտետների, մասնագիտությունների ցանկը, թանգարանը, շաբաթաթերթը: Խոսեցինք նաև ուսուցչի մասնագիտության կարևորության և նրան ներկայացվող արդի պահանջների մասին: Այնուհետև բաժանեցինք բրոշյուրներ, թերթեր, որոնք առավել մանրամասն տեղեկատվություն փոխանցեցին սովորողներին համալսարանի վերաբերյալ:
2. Տեղեկացրեցինք նաև ՀՊՄՀ–ի մանկավարժության ամբիոնի կողմից, մանկավարժություն առարկայի շրջանակներում կազմակերպվող ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի մասին: Ծանոթացրինք նաև օլիմպիադայի հիմնական նպատակներին, այն է. նպաստել աշակերտների գիտելիքների և հմտությունների խորացմանն ու զարգացմանը: Այն մեծ ոգևորություն առաջացրեց սովորողների մոտ:
3. ՀՊՄՀ-ն ավարտած բոլոր ուսուցիչներին տեղեկացրեցինք նաև ուսուցիչների հանրապետական ժողովի մասին, որը նպաստելու է ուսուցիչների՝ ինչպես մասնագիտական կարողությունների կատարելագործմանը, ընդհանուր զարգացմանը, այնպես էլ նրանց ակտիվ մասնակցության ապահովմանը՝ կրթության ոլորտի ժամանակակից հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների փնտրման գործընթացում: Ուսուցիչները ոգևորությամբ արձագանքեցին և համաձայնեցին մասնակցություն ունենալ իրենց բուհի կազմակերպած աշխատանքին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ավագ դպրոցներում իրականացրած մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ընդունել ի գիտություն և շարունակական աշխատանք իրականացնել նշված բոլոր դպրոցների ավագ դպրոցականների հետ:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

20.04.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16
2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի 2-րդ փուլի արդյունքների մասին:
2. «Իմ համալսարանը 100 տարեկան է» խորագրով ուսանողական քարոզների և սոցիալական հոլովակների փառատոնի անցկացման մասին:
3. Դի-Վի-Վի Ինթերնեյշնլի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպվող էսսեների մրցույթի և «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» դասընթացի անկացմանը մասնակցելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի 2-րդ փուլի արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան – ս/թ մայիսի 13-ին անցկացվեց ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի 2-րդ փուլը: Այս փուլում մասնակիցները ներկայացնում էին դպրոցում, դասարանում, փողոցում, ընտանիքում տեղի ունեցած մանկավարժական որևէ իրավիճակ, այնուհետև առաջարկում տվյալ իրավիճակը լուծելու իրենց տարբերակը և դրա հիմնավորումը: 2-րդ փուլի արդյունքներն արդեն ամփոփվել են և ուղարկվել մասնակիցներին: 3-րդ փուլ է անցել 43 մասնակից: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն դասախոսներին, ովքեր մասնակցել են աշակերտների ներկայացրած իրավիճակները ստուգելու և գնահատելու գործընթացին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս. Ջանիկյանը, Ի. Բաբայանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Թոփուզյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և պատրաստվել օլիմպիադայի 3-րդ փուլին: Նշվեց նաև, որ ապագայում 2-րդ փուլի առաջադրանքը պետք է փոխել, որովհետև այն դժվարացավ հաղթահարել ավագ դպրոցականների կեսից ավելին:

2. ԼՍԵՑԻՆ - «Իմ համալսարանը 100 տարեկան է» խորագրով ուսանողական քարոզների և սոցիալական հոլովակների փառատոնի և մրցույթի անցկացման մասին:

Ա.Թոփուզյան – 9-րդ տարին է, որ հունիսի 1-ին անցկացվում է քարոզների մրցույթը: Այս տարվա թեման նվիրում ենք մեր համալսարանի 100-ամյակին: Այն անցկացվում է «Իմ համալսարանը 100 տարեկան է» խորագրով և ուղղված է շրջանավարտ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հարցերին: Փառատոնի պատվավոր հյուրերն են լինելու Աբովյան քաղաքի, Խ.Աբովյանի անվան թիվ 1, Կոտայքի մարզի Արամուսի, Երևանի թիվ 125, 119, 198 և Իսահակյանի անվան դպրոցների ավագ դպրոցականները և ԿԳՄՍ նախարարության Սաթենիկ Թոփուզյանի անվան մարիոնետների թատրոնի սաները: Այս դպրոցների աշակերտներն են ընտրելու իրենց մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ուսանողական լավագույն քարոզներն ու տեսահոլովակները: Մինչ այդ, ս/թ մայիսի 30-ին և 31-ին անցկացվելու է մրցույթի առաջին փուլը, որտեղ համապատասխանաբար ընտրվելու են լավագույն 5 քարոզների և 5 տեսահոլովաների հեղինակները: Այնուհետև, ս/թ հունիսի 1-ին, երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը կանցկացնենք մեր ավանդական միջոցառումը, որի ընթացքում վերոնշյալ դպրոցի աշակերտները ներկայացված 5 քարոզներից և 5 տեսահոլովաներից կընտրեն 1-ից 3-րդ տեղերը գրաված լավագույն 3 քարոզը և 3 տեսահոլովակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյանը, Ա. Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հանձնարարել Լ. Պողոսյանին և Ա. Մանուկյանին ներկայացնել փառատոնի մասնակիցների ընդհանուր ցուցակը մինչև 26.05.2022թ.: 2. Պատրաստել փառատոնի մասնակցության հավաստագրեր բոլոր մասնակիցների համար: 3. Ընտրել և գնել 1-ից 3-րդ տեղերի հաղթողների համար նվերներ:

3. ԼՍԵՑԻՆ - Դի-Վի-Վի Ինթերնեյշնլի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպվող էսսեների մրցույթի և «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» դասընթացի անկացման մասնակցության մասին:

Ա. Թոփուզյան - Դի-Վի-Վի Ինթերնեյշընլի հայաստանյան գրասենյակը և մեր համալսարանը համատեղ հայտարարում են ուսանողական էսսեների մրցույթ՝ «Կրթության ապագա հեռանկարները» թեմայով: Մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները: Էսսեները ներկայացնելու

վերջնաժամկետը 05.09.2022թ. է: Լավագույն էսսեի հեղինակը կպարգևատրվի ֆինանսական խրախուսանքով և կհրավիրվի մասնակցելու Դի-Վի-Վի Ինթերնեյշընլ Հայաստանի մասնաճյուղի 20-ամյակին նվիրված գալա միջոցառմանը: Էսսեների մրցույթի 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած աշխատանքների հեղինակները կստանան խրախուսական նվերներ:

Դի-Վի-Վի Ինթերնեյշընլի հայաստանյան գրասենյակը իրականացնում է նաև «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» դասընթացը, որը նախատեսված է մինչև 35 տարեկան դասավանդողների համար, որոնք ունեն բուհերում դասավանդման 3-ից 5 տարվա փորձ, ինչպես նաև ասպիրանտների/հայցորդների համար: Դասընթացի մասնակցության դիմում-հայտերն անհրաժեշտ է ուղարկել մինչև 10.06.2022թ.:

Ավելի մանրամասն տեղեկատվություն էսսեների մրցույթի և վերոնշյալ դասընթացի վերաբերյալ կարող եք ստանալ մեր պաշտոնական կայքից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյանը, Ա. Դալլաքյանը, Գ. Հարությունյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Թոփուզյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և տեղեկատվությունը փոխանցել նաև ուսանողներին, ասպիրանտներին և հայցորդներին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

25.05.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի *«Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում»* վերնագրով ատենախոսության հիմնական դրույթների ներկայացում:

ԼՄԵՑԻՆ – Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի ԺԳ 00.01- «մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված *«Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում»* վերնագրով ատենախոսության հիմնական դրույթները:

Մկրտչյան Վ.Ջ.- «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում» թեմայով մեր հետազոտության արդիականությունը պայմանավորված է հասարակության կողմից կրթությանը ներկայացվող պահանջի և դրա իրացման մանկավարժական համապատասխան պայմանների, անհրաժեշտ և բավարար միջոցների անհամապատասխանությամբ:

Անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը հանրակարթական դպրոցում ուսուցման արդյունավետության բարձրացման առաջնային հիմնախնդիրներից մեկն է:

Բազմաթիվ գիտական աշխատանքներ են հրապարակվում առ այն, որ հանրակրթություն իրականացնելու պայմաններում ուսումնական գործընթացը պետք է արդյունավետ լինի յուրաքանչյուր աշակերտի համար, և քանի որ աշակերտներն իրենց պահանջմունքներով, հետաքրքրություններով, հակումներով, ինչպես նաև ֆիզիոլոգիական և հոգեբանական մի շարք առանձնահատկություններով տարբեր են, ըստ այդմ՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունն էապես պայմանավորված է անհատական մոտեցման սկզբունքի իրականացմամբ:

Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման անհրաժեշտության մասին են վկայում ոչ միայն ՀՀ հանրակրթության մասին օրենքում, այլ նաև միջազգային համաձայնագրերում, հոգեբանամանկավարժական գիտությունների զարգացման արդյունքում ձևավորված արդի տեսություններում առաջադրվող մի շարք դրույթներ, սահմանումներ և օրենքներ:

Մասնավորապես, տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքն իր ուրույն դերն ու կարևորությունն ունի, քանի որ հենց այս փուլում են ձևավորվում երեխայի հետագա կյանքի համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք կարողություններ, հմտություններ, հոգեբանական և ֆիզիոլոգիական նորագոյացություններ:

Արդի հանրակրթական դպրոցներում գործում է Յ.Ա.Կոմենսկու կողմից առաջադրված դաս-դասարանային համակարգը, սակայն միևնույն ժամանակ ժամանակակից մանկավարժներն առաջադրում են ուսուցման կազմակերպման նոր մոտեցումներ, տեխնոլոգիաներ և այլն: Սակայն, նկատենք, որ դաս-դասարանային համակարգում այդ ամենի կիրառությունից հետո էլ, անհատական մոտեցման սկզբունքի հիմնախնդիրը դեռևս չի հանգուցալուծվել:

Ակնհայտ է նաև, որ չնայած մանկավարժների կողմից վերոնշյալ սկզբունքի իրականացման կարևորության և անհրաժեշտության գիտակցվածությանը, դեռևս կան բազմաթիվ դժվարություններ, խոչընդոտներ, որոնք գրեթե ուսումնասիրված և բացահայտված չեն, հետևաբար մշակված չեն նաև դրանց հաղթահարման ուղիները, ինչն էապես թույլ չի տալիս այդ սկզբունքը լիարժեքորեն իրականացնել տարրական դպրոցում: Վերջինս առավել արդիական է դարձնում ընտրված թեման:

Հետազոտության նպատակը տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների բացահայտումն ու դրանց հաղթահարման ուղիների առաջադրումն է:

Հետազոտության օբյեկտը ՀՀ տարրական դպրոցի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան ՀՀ տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարման ուղիներն են:

Հետազոտության վարկածն այն ենթադրության մեջ է, որ անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդիրը արդյունավետորեն կլուծվի, եթե.

1. Ճշգրտվեն և նորովի սահմանվեն «ուսուցման սկզբունք», «ուսուցման անհատական մոտեցման սկզբունք» և դրանց հետ առնչվող այլ հասկացություններ:
2. Ուսուցման սկզբունքները դասակարգվեն՝ ըստ բնույթի և հստակեցվեն դրանք իրականացնող սուբյեկտները: Բացահայտվեն անհատական մոտեցման սկզբունքի բնույթը, առանձնահատկություններն ու այն իրականացնող սուբյեկտը:

3. Բացահայտվեն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հնարավորություններն ու խոչընդոտները դաս-դասարանային համակարգի շրջանակներում։

4. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքները դիտարկվեն (այսուհետ ԿՈՒՊ) որպես անհատական մոտեցման սկզբունքի իրականացման համակարգաձևավորող գործոն։

5. Մշակվի և տարրական դպրոցում ներդրվի անհատական մոտեցման սկզբունքի իրականացումն ապահովող ուսուցման գործընթացի կազմակերպման նոր, արդյունավետ մոդել։

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ հայ և արտասահմանյան գիտական գրականությունը, անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն ուղղված համաշխարհային փորձը, նորարարական մոտեցումները և պարզաբանել դրանց իրացման հնարավորություններն ու սահմանափակումները տարրական դպրոցում,
2. բացահայտել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական դժվարությունները տարրական դպրոցում և գործող ուսուցիչների պատկերացումներն ու մոտեցումները անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների և կիրառվող մոտեցումների վերաբերյալ,
3. ուսումնասիրել, ճշգրտել և անհրաժեշտության դեպում սահմանել «ուսուցման սզկբունք», «ուսուցման անհատական մոտեցման սկզբունք» և դրանց առնչվող այլ հասկացություններ,
4. ուսումնասիրել և լուսաբանել տարրական դպրոցում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորություններն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման ուղղությամբ,
5. մշակել և ներդնել տարրական դպրոցում ուսուցման անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարման արդյունավետ մոդել։

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ.

1. Առաջադրվել է ուսուցման սկզբունքների նոր դասակարգում՝ ըստ բնույթի։
2. Հստակեցվել և նորովի են սահմանվել ուսուցման «անհատական մոտեցման սկզբունք» և «անհատականացված ուսուցում» հասկացությունները։

3. Բացահայտվել են անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական դժվարությունները, ելակետային խոչընդոտը, բնույթը և այն իրականացնող սուբյեկտը, դրա իրականացմանն ուղղված նորարարական մոտեցումների հնարավորությունները:
4. Առաջադրվել են անհատական մոտեցման սկզբունքից բխող՝ ուսուցման գործընթացի կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջները և բացահայտվել են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները վերոնշյալ պահանջների իրացման շրջանակներում:
5. Մշակվել և տարրական դպրոցում ներդրվել է անհատական մոտեցման սկզբունքի կիրառմամբ ուսուցման գործընթացի կազմակերպման արյունավետ մոդել:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքում ստացված տվյալները և դրանց հիման վրա կատարված եզրակացությունները, սահմանումներն ու առաջարկությունները նորովի են անդրադառնում հիմնախնդրին և կնպաստեն մանկավարժական գիտության զարգացմանը՝ համալրելով այն դիդակտիկական նոր գիտելիքներով, մեթոդաբանական մոտեցումներով և տեսական դրույթներով:

Հետազոտության գործնական նշանակությունը ամփոփված է ատենախոսության մեջ.

- անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի ելակետային հիմնահարցերի, առանձնահատկությունների բացահայտումը, առկա մոտեցումների սահանափակումների և հնարավորությունների վերհանումը, առաջարկվող լուծման ուղիները, մշակված դրույթներն ու ներկայացված մոդելը գործնական օգնություն կարող են լինել մանկավարժների, գիտնականների, կրթական հաստատությունների և այլ սուբյեկտների գործունեության համար:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Ուսուցման սկզբունքներն ըստ բնույթի լինում են համընդհանուր, համակարգային կամ համակարգաստեղծ:

2. Անհատական մոտեցման սկզբունքն իր բնույթով համակարգաստեղծ է և այն իրականացվում է համապատասխան համակարգի կառուցվածքային առանձնահատկությունների ապահովմամբ:

3. Անհատական մոտեցման սկզբունքի լիարժեք իրականացումը (անհատականացված ուսուցում), ենթադրում է ուսուցման համակարգի կառուցվածքային փոփոխություն։

4. Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական պահանջները բավարարող կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիման վրա կառուցվող համակարգը կարող է դիտվել որպես այս հիմնախնդրի լուծման արդյունավետ միջոց։

5. Տարրական դպրոցում ուսուցման գործընթացի կազմակերպման մեր կողմից մշակված և իրականացված մոդելը նոր համակարգի կառուցմանն ուղղված գործնական ուղեցույց է։

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը։ Երաշխավորվում է մանկավարժության տեսության և պատմության մանկավարժահոգեբանական գիտությունների արդի ձեռքբերումների վերլուծությամբ, փորձարկվողների մեծ քանակով, փորձարարական հետազոտությունների արդյունքների վերլուծությամբ, մաթեմատիկական մշակմամբ։

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմք են հանդիսանում՝

1. տարրական դպրոցում աշխատող (ՀՀ բոլոր մարզերից, ինչպես նաև Արցախի հանրապետությունից) 122 ուսուցիչների մասնակցությամբ իրականացված առցանց հարցման (հարցաթերթիկի միջոցով) արդյունքում ստացված տվյալները,

2. տարրական դպրոցում (Ս. Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրում) ուսուցման գործընթացի կազմակերպման մշակված մոդելի իրականացման արդյունքում ձեռք բերված տվյալները։

Հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները զեկուցումներով ներկայացվել են՝

- «Որակյալ ուսուցման հիմնախնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցներում» խորագրով գիտաժողովում (2013թ.),
- Международная научная конференция “Образование, наука и экономика в вузах и школах. Интеграция в международное образовательное пространство” (2014г.),
- «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովում (2015թ.),
- Международная научная конференция “Образование, наука и экономика в вузах и школах. Интеграция в международное образовательное пространство” (2015г.),
- «Կրթության և դաստիարակության խնդիրները ժամանակակից դպրոցում» խորագրով ՀՊՄՀ ուսանողական գիտական կոնֆերանսում (2015թ.),

- ‹‹Մաթեմատիկական կրթություն 4›› խորագրով միջազգային գիտաժողովում (2016թ.),
- Ս.Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրի կողմից կազմակերպված ‹‹Նոր կրթական իրողության կայացման հիմնարար հարցերը» խորագրով միջազգային գիտաժողովում (2017թ.)։

Հետազոտության բազա են հանդիսացել Սպարտակ Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրը, ՀՀ և ԱՀ տարածքում գտնվող տարբեր հանրակրթական դպրոցներ։

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով։

Առաջին փուլում /2016-2017/ ուսումնասիրվել և վերլուծվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժահոգեբանական գրականությունը։ Դուրս են բերվել առանցքային հիմնահարցերը, ըստ որի հստակեցվել և ձևակերպվել են հետազոտության թեման, վարկածն ու խնդիրները։ Նախագծվել, մշակվել է փորձարարական աշխատանքների իրականացման մեթոդիկան։

Երկրորդ փուլում /2017-2019/ նախնական տարբերակով շարադրվել է ատենախոսության բովանդակության համապատասխան մասը։ Փորձարարական աշխատանքների և ստացված տվյալների արդյունքում մշակվել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացմամբ ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մոդելը, որի բովանդակությունը շարադրվել է ատենախոսության համապատասխան ենթագլխում։

Երրորդ փուլում /2019-2022/ հստակեցվել է ատենախոսության բովանդակությունը, կազմվել է էլեկտրոնային հարցաթերթ, որի հիման վրա իրականացվել է սոցիալական ուսումնասիրություն։ Արդյունքների վերլուծությունը ներկայացվել է համապատասխան ենթագլխում։ Ամփոփվել և բարելավվել են ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը, ձևակերպվել են եզրակացությունները։

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը։ Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից։Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 112 էջ։

Օգտագործվել է 99 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով։

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Անհատական մոտեցման սկզբունքն ուսուցման սկզբունքների համակարգում», բաղկացած է երեք ենթագլխից.

- «Ուսուցման սկզբունքները: Դրանց դերն ու նշանակությունը կրթական համակարգի զարգացման գործում»,
- «Անհատական մոտեցման սկզբունքի տեղն ու դերը ուսուցման սկզբունքների համակարգում»,
- «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը»:

Ներկայացնելով և վերլուծելով հիմնախնդրի վերաբերյալ առկա մանկավարժական մոտեցումները՝ այս գլխում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնց կարգավորման նպատակով.

- ✓ հստակեցվել է մեր կողմնորոշումն «ուսուցման սկզբունք» հասկացության սահմանման վերաբերյալ, այն է՝ «Ուսուցման սկզբունքը ելակետային դրույթ է, նորմատիվային հիմք, որն ուղղված է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը»:
- ✓ Առաջադրվել է ուսուցման սկզբունքների նոր դասակարգում՝ ըստ բնույթի, համաձայն որի առանձնացվել է ուսուցման սկզբունքների երեք տեսակ.
  1. համընդհանուր,
  2. համակարգաստեղծ,
  3. համակարգային:

Ընդ որում, համընդհանուր սկզբունքները նպատակաուղղված են ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, կարող են իրականացվել ուսուցման ցանկացած համակարգում, սակայն չունեն էական ազդեցություն ուսուցման համակարգի կառուցվածքային առանձնահատկությունների ձևավորման գործում:

Համակարգային սկզբունքներն, ի տարբերություն *համընդհանուր* սկզբունքների, իրականանալի են կոնկրետ համակարգում, չնայած, որոշակիորեն կարող են ազդեցություն ունենալ այս կամ այն բաղադրիչի կառուցվածքային առանձնահատկությունների ձևավորման հարցում, սակայն ոչ միայն ելակետային չեն, այլև կրում են հետևանքային բնույթ:

Թե՛ *համընդհանուր*, թե՛ *համակարգային* սկզբունքներն իրենց իրականացման ձևով էապես կախվածության մեջ են գտնվում համակարգաստեղծ սկզբունքներից, վերջիններս ոչ միայն ազդում են համակարգաձևավորող գործոնների վրա, այլև հիմք են հանդիսանում այս կամ այն ուսուցման համակարգի կառուցման համար:

Ընդ որում, հիմնավորվել է, որ բնույթով տարբեր սկզբունքներ իրականացնող սուբյեկտները ևս տարբեր են։ Համակարգաստեղծ սկզբունքներն իրականացվում են ուսուցման կոնկրետ համակարգի միջոցով՝ կառուցվածքային առանձնահատկությունների ձևավորմամբ։ Վերջիններով են պայմանավորված համընդհանուր և համակարգային սկզբունքներն իրականացնող սուբյեկտները։

- ✓ Նորովի են սահմանվել «ուսուցման անհատական մոտեցման սկզբունք» և «ուսուցման անհատականացում» հասկացությունները.

  Ուսուցման անհատական մոտեցման սկզբունքը *ենթադրում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար, ինչն էլ իր հերթին ենթադրում է ուսուցման մյուս սկզբունքների, հոգեբանամանկավարժական տեսություններում առաջ քաշվող դրույթների անհատականացված իրականացում։*

  Ուսուցման անհատականացումն *անցումային գործընթաց է՝ գործող համակարգից (դաս-դասարանային) անցում դեպի անհատական մոտեցման սկզբունքի իրականացման համար բոլոր անհրաժեշտ և բավարար պայմաններն ապահովող՝ ուսուցման գործընթացի կազմակերպման համապատասխան համակարգի։*

- ✓ Վերլուծությամբ ներկայացվել են ժամանակակից մանկավարժների կողմից անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն ուղղված և որպես տվյալ հիմնախնդրի լուծման միջոց դիտարկվող հիմնական մոտեցումները՝ իրենց հնարավորություններով և սահմանափակումներով.

  1. տարբերակված ուսուցում,
  2. այլ տեխնոլոգիաներ,
  3. փոխներգործուն մեթոդներ։

Ընդ որում, անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն ուղղված նշված մոտեցումների սահմանափակումներն էապես գերազանցում են հնարավորություններին։

Մեր կողմից նոր տեսական դիրքորոշում է ցուցաբերվել մանկավարժների կողմից «տարբերակված ուսուցում» և «անհատականացված ուսուցում» հասկացությունների միջև առկա կապերի առնչությամբ տարատեսակ, երբեմն հակասական մոտեցումների վերաբերյալ։

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման արդյունավետ ուղիները տարրական դպրոցում», բաղկացած է երեք ենթագլխից.

- «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնահարցերը ժամանակակից դպրոցում»,
- «Անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջներն ուսումնական գործընթացում»,
- «Տարրական դպրոցում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորություններն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման գործում»:

Տվյալ գլխում անդրադառնալով մանկավարժների մոտեցումներին և վերլուծելով անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական դժվարություններին առնչվող դիտարկումները՝

- ✓ հայեցակարգային մակարդակով հիմնավորվել է գործող (դաս-դասարանային) համակարգում անհատական մոտեցման սկզբունքի լիարժեք իրականացմանն էականորեն խոչընդոտող հանգամանքների առկայությունը:
- ✓ Առանձնացվել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման երեք տարբերակ՝ յուրաքանչյուրի համար սահմանելով սկզբունքն իրականացնող սուբյեկտը.
    1. ոչ նպատակաուղղված իրականացում (սուբյեկտը բացակայում է),
    2. մասնակի իրականացում (սուբյեկտն ուսուցիչն է),
    3. լիարժեք իրականացում (իրականացվում է համակարգի կառուցվածքային առանձնահատկությունների առկայությամբ):

Այստեղ հիմնավորվել է այն դրույթը, որ անհատական մոտեցման սկզբունքն իր բնույթով համակարգաստեղծ է, այն կարող է իրականացվել համապատասխան համակարգի (ոչ դաս-դասարանային) կառուցվածքային առանձնահատկությունների ապահովմամբ:

- ✓ Առաջադրվել է ուսուցման գործընթացում անհատական մոտեցման սկզբունքից բխող չորս հիմնական պահանջ, որոնց բավարարման արդյունքում հնարավոր է կառուցել սկզբունքի լիարժեք իրականացումն ապահովող համապատասխան համակարգ.
    1. ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի անհատական առանձնահատկությունների բացահայտման համար անհրաժեշտ պայմանների ապահովում:

2. Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ուսումնական նյութի յուրացման, անձի զարգացման և կրթական մյուս բոլոր նպատակների իրականացմանն ուղղված գործընթացների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովում (համապատասխան բովանդակության, ժամկետների, ձևերի, միջոցների, մեթոդների սահմանում, պլանավորում, ստուգում, գնահատում)՝ բացահայտված անհատական առանձնահատկություններին համապատասխան։
3. Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար ակտիվ, գործող սուբյեկտի կարգավիճակի ապահովում (ուսումնական գործընթացում գտնվելու արդյունքում)։
4. Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի և մյուս անդամների միջև «բնականոն» (ուսումնական գործընթացում գտնվելու արդյունքում) այնպիսի հարաբերությունների ապահովում, որոնք կնպաստեն համապատասխան բնույթի ուսումնական գործընթացի կազմակերպման, կառավարման, վերահսկման գործընթացների արդյունավետ իրականացմանը։

- ✓ վերլուծությամբ ներկայացվել են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները վերոնշյալ պահանջների իրացման շրջանակներում։

Արդյունքում հիմնավորվում է այն դրույթը, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքներն ապահովում են անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջները, և կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիման վրա կառուցվող համակարգը կարող է դիտվել որպես նշված հիմնախնդրի լուծման արդյունավետ միջոց։

Ատենախոսության Երրորդ գլուխը՝ «Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն», բաղկացած է երկու ենթագլխից։

- «Տարրական դպրոցների ուսուցիչների մոտեցումներն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման վերաբերյալ»,
- «Տարրական դպրոցում ուսուցման գործընթացի կազմակերպման մշակված մոդելի բնութագիրը և դրա արդյունավետության հիմնավորումը»։

Այս գլխում ներկայացվել են էմպիրիկ մեթոդով (էլեկտրոնային հարցաթերթ) իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքները։ Հետազոտությանը մասնակցել են ՀՀ բոլոր

մարզերից, նաև ԱՀ-ից 122 տարրական դպրոցի ուսուցիչ: Ընդհանուր առմամբ, ուսուցիչների գերակշիռ մասը գիտակցում է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման անհրաժեշտության կարևորությունը, առանձնացնում է դրան խանգարող *որոշ* հանգամանքներ, նպատակաուղղված ձևով քայլեր է ձեռնարկում դրանց հաղթահարմանն ուղղված, սակայն ելակետային խնդիրը չնկատելու արդյունքում՝ հակված է կարծելու, որ եթե ուսուցիչը կամենա և կոմպետենտ մանկավարժ լինի, ապա կկարողանա դաս-դասարանային համակարգում իրականացնել անհատական մոտեցման սկզբունքը լիարժեքորեն:

Այստեղ ներկայացվել է նաև մեր կողմից մշակված անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարմանն ուղղված ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ մոդելն իր կառուցվածքային բաղադրիչներով: Այն ստեղծվել է, որպես տարրական դպրոցում կոլեկտիվ ուսումնական պարապմուքնենրի հիման վրա կառուցված ուսուցման անհատականացման գործնական ուղի, որի լայնամասշտաբ իրականացումը հավակնում է դիտվել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի լուծման իրական տարբերակ:

Մոդելի հիմքում ուսուցման կոլեկտիվ եղանակի (ՈՒԿԵ-ի) հայեցակարգային դրույթներն են: Մոդելը նախապես մշակվել, ապա իրականացվել է Սպարտակ Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրի տարրական թևում (6-ից 9 տարեկան աշակերտներից կազմված 48 հոգանոց տարատարիք, տարամակարդակ խմբում), որից հետո արդյունքների վերլուծության հիման վրա կրկին վերամշակվել է:

Մոդելն իրականացվել է «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաների շրջանակներում:

Ներկայացվել են մոդելի կառուցվածքային առանձնահատկությունները, իրականացման ընթացքում առաջացած խոչընդոտներն ու դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիները, ինչպես նաև ներկայացվել են մոդելի արդյունավետությունը հիմնավորող գործնական փաստեր: Շնորհակալություն ուշադրության համար:

Ա. Թոփուզյան /Նիստի նախագահ/ - Հարցեր ատենախոսին

Մ.գ.թ., ասիստենտ Ն.Մարտիրոսյան: Ի՞նչ նկատի ունեք, երբ մոլորություն եք համարում ուսուցիչների այն կարծիքը, թե անհատական մոտեցման սկզբունքը դաս-դասարանային համակարգում հնարավոր է իրականացնել: Կարծում եմ, պետք է մի փոքր զգույշ

արտահայտվեք, քանի որ ինքս, լինելով 30 տարվա մանկավարժ, կարողանում եմ դասի ընթացքում բարձր արդյունավետությամբ իրականացնել անձնակողմնորոշիչ ուսուցում։

Վ. Մկրտչյան /ատենախոս/։ Մոլորությունն, անշուշտ, կոպիտ է հնչում, սակայն խնդիրն այն է, որ ուսուցիչների բարձր մասնագիտական որակների, աշխատասիրության, տարատեսակ տեխնոլոգիաների տիրապետման և մեծ ցանկության առկայությունը բավարար չէ գործող համակարգում տվյալ սկզբունքի լիարժեք իրականացումն ապահովելու համար, քանի որ համակարգի կառուցվածքային առանձնահատկություններն էական սահմանափակումներ և խոչընդոտներ են առաջացնում։ Օրինակ՝ տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ժամանակ այդ երևույթը հստակ դրսևորվում է, երբ ամեն օր բոլորի համար նախատեսվում է միևնույն թեման, դրա համար հատկացվում է միևնույն ժամանակահատվածը և այլն։

Այդ տեսանկյունից, մինչև չհաղթահարվեն համակարգի առանձնահատկություններից բխող դժվարությունները՝ անհատական մոտեցման սկզբունքն օբյեկտիվորեն հնարավոր չի լինի լիարժեքորեն իրականացնել դաս-դասարանային համակարգում։

Մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյան: Դուք նշեցիք, որ աշխատանքում առաջադրել եք ուսուցման սկզբունքների նոր դասակարգում՝ ըստ բնույթի։ Ի՞նչ է տալու սկզբունքների այդ տարանջատումն ընդհանուր մանկավարժությանը։

Վ. Մկրտչյան /ատենախոս/։ Ուսումնասիրելով ուսուցման սկզբունքների վերաբերյալ մանկավարժների սահմանումները, մոտեցումները՝ նկատում ենք, որ շատերի կողմից որպես այդ սկզբունքներն իրականացնող հիմնական սուբյեկտ դիտարկվում է ուսուցիչը։ Սակայն, կան սկզբունքներ, որոնք անկախ ուսուցման համակարգի տեսակի, տեղայնացվում են, համապատասխանեցվում են կառուցվածքային առանձնահատկություններին և համապատասխան ձևով մանկավարժի կողմից իրականացվում։ Օրինակ՝ զննականության սկզբունքը, գիտականության սկզբունքը և այլն։

Որոշ սկզբունքների իրականացման համար ապահովվում է համակարգի կառուցվածքային անհրաժեշտ պայմանների առկայությունը։ Օրինակ՝ միջինացման սկզբունքը դաս-դասարանային համակարգի շրջանակներում։ Այդ սկզբունքի հիման վրա են դրսևորվել գործող համակարգի հիմնական բաղադրիչների կառուցվածքային առանձնահատկությունները։

Այդ առումով, բացահայտելով այս կամ այն ուսուցման սկզբունքի բնույթը, հնարավորություն է տրվում հստակեցնել այն իրականացնող սուբյեկտի, իրականացման համար անհրաժեշտ պայմանների առանձնահատկությունները և առավել դյուրին ու ճշգրիտ ճանապարհով բացահայտել տվյալ սկզբունքի իրականացման հիմնախնդրի կարգավորման արդյունավետ ուղիները: Այս մոտեցմամբ ենք մենք անդրադարձել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի կարգավորմանը:

Մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյան: Թույլ տվեք ևս մեկ հարց հնչեցնել: Ձեր կարծիքով նախագծային ուսուցման տեխնոլոգիան կարո՞ղ է դիտվել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի լուծման միջոց:

Վ. Մկրտչյան /ատենախոս/: Կոնկրետ խնդրի իրականացման շրջանակներում՝ այո, կարող է: Անհատական մոտեցման սկզբունքից բխող պահանջներն ու խնդիրները բազմազան են, տարաբնույթ: Այդ առումով, իհարկե, այն չի կարող դիտվել որպես հիմնախնդրի լուծման հիմնական միջոց: Ինչպես մյուս արդի տեխնոլոգիաները (տարբերակված ուսուցման տեխնոլոգիան, Շատալովի, Լիսենկովայի, Ամոնաշվիլու, Ունտի կողմից առաջ քաշվող և մի շարք այլ տեխնոլոգիաներ), այնպես էլ նախագծային ուսուցման տեխնոլոգիան ներդրվում է դաս-դասարանային համակարգում, որն ունի հստակ սահմանափակումներ: Այդ առումով այն որոշակի քայլ է ուղղված անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի կարգավորմանը, սակայն, ըստ էության, այն չի բավարարում անհատական մոտեցման սկզբունքից բխող ուսուցման գործընթացին ներկայացվող հիմնական պահանջները:

Ա. Թոփուզյան /նախագահ/: Անհատական մոտեցման սկզբունքի Ձեր կողմից առաջարկվող սահմանման մեջ նշում եք, որ ենթադրվում է մյուս սկզբունքների անհատականացված իրականացում: Կարո՞ղ եք օրինակ բերել:

Վ. Մկրտչյան /ատենախոս/: Օրինակ՝ զննականության սկզբունքը, գիտականության սկզբունքը, զարգացնող ուսուցման սկզբունքը և մյուս համընդհանուր սկզբունքները: Եթե ուսուցումը պետք է լինի զարգացնող, ապա դրա անհատականացված իրականացումը ենթադրում է, որ ուսուցումը պետք է լինի զարգացնող ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար:

Մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայան: Դուք նշեցիք, որ էլեկտրոնային հարցաթերթի միջոցով ուսումնասիրել եք ուսուցիչների մոտեցումներն ու պատկերացումներն անհատական

մոտեցման սկզբունքի իրականացման վերաբերյալ։ Ինչպիսի՞ խոչընդոտներ են նշել ուսուցիչները, որոնց նրանք առնչվում են տվյալ սկզբունքն իրականացնելիս։

Վ. Մկրտչյան /ատենախոս/։ Որպես անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական դժվարություններ՝ ուսուցիչները դիտարկել են դասարանների մեծաքանակությունը (25 և ավել աշակերտ), նյութատեխնիկական բազայի բացակայությունը, ծրագրերի հագեցվածությունը, գերծանրաբեռնվածությունը։

Մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյան։ Ինչպե՞ս եք հիմնավորում այն, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքների կազմակերպումն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման ամենահարմար տարբերակն է և ի՞նչ ռիսկեր են առկա տարրական դպրոցում դրանց կիրառման ժամանակ։

Վ. Մկրտչյան /ատենախոս/։ Քանի որ անհատական մոտեցման սկզբունքն իր բնույթով համակարգաստեղծ է և չի կարող լիարժեք իրականացվել դաս-դասարանային համակարգում, իսկ արդի գրեթե բոլոր մոտեցումները, որոնք ուղղված են տվյալ սկզբունքի իրականացմանը, ներդրվում են դաս-դասարանային համակարգում՝ որոշակիորեն խախտելով ընդհանուր ճակատը դասագործընթացում՝ գրանցելով որոշակի արդյունավետություն, ապա դրանք չեն կարող դիտվել որպես հիմնախնդրի լուծման միջոց։

Ի տարբերություն այդ մոտեցումների, կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հայեցակարգային դրույթներն ապահովում են անհատական մոտեցման սկզբունքից բխող ուսուցման գործընթացին ներկայացվող հիմնական պահանջների իրացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, որոնք կրում են նոր համակարգի կառուցվածքային առանձնահատկությունների ձևավորման հիմքերը։ Այդ առումով, կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիման վրա կառուցվող համակարգը կարող է դիտվել որպես հիմնախնդրի լուծման միջոց։

Ըստ էության, այս պահին չեմ կարող նշել այնպիսի ռիսկեր, որոնք էապես թուլացնում են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորություններն ու առավելությունները անհատական մոտեցման սկզբունքի իրականացման համատեքստում։

Մ.գ.թ., դասախոս Ա. Դալլաքյան։ ՔԿՀ-ներում վերականգնողական աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու տեսանկյունից կարևոր է նաև պատիժ կրող անձի ազատվելուց հետո

նրա աշխատանքին առնչող հանգամանքը: Արդյոք դիտարկվել է այս հանգամանքը հետազոտության շրջանակում:

Վ. Մկրտչյան /ատենախոս/: Մեր աշխատանքում մենք չենք դիտարկել պատիժ կրող անձանց ՔԿՀ-ից ազատվելուց հետո նրանց աշխատանքին առնչվող հարցեր, քանի որ դա դուրս է մեր ուսումնասիրության շրջանակից:

Ա. Թոփուզյան /նախագահ/- Հարգելի գործընկերներ, այժմ ձայն տանք ասպիրանտի ղեկավարին՝ տիկին Ասատրյանին:

Մ.գ.դ. պրոֆեսոր Լ. Ասատրյան- Գրեթե բոլորդ ճանաչում եք Վարդիթերին. դասավանդել եք: Ես չեմ դասավանդել և ծանոթացա իր հետ, երբ ասպիրանտ ձևակերպվեց: Ասեմ, որ ինձ համար դժվար է եղել Վարդիթերի հետ աշխատելը: Այսինքն՝ ես հին մանկավարժական մտածողության տեր մարդ եմ, ինքը՝ նոր: Բայց նա ինձ անընդհատ համոզել է իր գիտական իրավացիության մեջ: Վարդիթերը բացարձակ բարձր գիտաական մտածողության, գիտական վերլուծական, վերին աստիճանի կրեատիվ մտածողության կարողության տեր, վառ ստեղծագործականություն ունեցող անձնավորություն է: Ինձ համար դժվար է եղել, բայց և շատ հաճելի է եղել իր հետ աշխատելը: Նաև շատ բաներ սովորել եմ իրենից: Շատ հետաքրքիր մոտեցումներ ունի՝ իր հայեցակարգային դրույթները պահպանելու տեսանկյունից, վերլուծության տեսանկյունից, նոր գաղափարներ առաջարկելու տեսանկյունից: Իհարկե, հարցերից մի քանիսի վերաբերյալ ես իրեն ասել եմ, որ որպես գիտնական՝ համակարծիք չեմ, սակայն որպես ղեկավար՝ իր կողքին եմ: Այնուամենայնիվ, կարծում եմ՝ Վարդիթերը շատ լավ գիտնական կդառնա, և իրեն շատ լավ ապագա է սպասվում:

Ա. Թոփուզյան /նախագահ/- Հարգելի գործընկերներ, այժմ ձայն տանք ընդդիմախոսներին ատենախոսության վերաբերյալ կարծիքները ներկայացնելու համար:

Գրախոս՝ Մանկավարժության ամբիոնի դոցենտ՝ մ. գ. թ. Ս. Միսյան

Հանրակրթական դպրոցում անհատական մոտեցման իրականացման կարևորությունը և անհրաժեշտությունը բազմաթիվ գիտական աշխատություններում ներկայացվում է որպես ուսուցման արդյունավետության բարձրացման առաջնային եղանակներից մեկը: Սակայն դեռևս կան բազմաթիվ խոչընդոտներ, որոնք գրեթե չեն ուսումնասիրված, հետևաբար չեն մշակված նաև դրանց հաղթահարման ուղիները, ինչն էապես թույլ չի տալիս այս սկզբունքը լիարժեքորեն կիրառել տարրական դպրոցում:

Լավ գիտակցելով այդ՝ ատենախոսն արդիական և շնորհակալ նախաձեռնություն է ցուցաբերել՝ իր ատենախոսության մեջ դիտարկելով անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդիրը, առկա դժվարություններն ու արդյունավետ լուծման ուղիները տարրական դպրոցում:

Ատենախոսության ,,Ներածություն,, բաժնում Վ. Մկրտչյանը գիտականորեն հիմնավորել է հետազոտության արդիականությունը, սահմանել հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, հետազոտության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, նշել հետազոտության մեթոդաբանական հիմքն ու մեթոդները, պաշտպանության ներկայացվող դրույթներն ու հետազոտական աշխատանքի իրականացման փուլերը:

Ատենախոսն իր առաջադիր նպատակն ու խնդիրները հետազոտել է մի քանի ենթագլուխներից բաղկացած երեք գլուխներում: 113 համակարգչային էջից բաղկացած աշխատանքն ունի ընդհանուր եզրակացություն, 99 անուն ընդգրկող մատենագիտական ցանկ և 5 հավելված:

Առաջին գլխի 3 ենթագլուխներում հեղինակը նախ ներկայացնում է հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը, տրամաբանական և բովանդակային հետևողականությամբ առանձնացնում է անհատական մոտեցման սկզբունքի դերն ու նշանակությունը կրթության համակարգի զարգացման գործում, վերջինիս տեղն ու դերը ուսուցման սկզբունքների համակարգում և վերլուծում է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հայեցակարգային մոտեցումները: Երկրորդ գլուխը, որը կրում է ՛՛Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման արդյունավետ ուղիները տարրական դպրոցում՛՛ խորագիրը, բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցից առաջինում ատենախոսը հիմնավոր և համոզիչ կերպով մեկնաբանում է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնահարցերը ժամանակակից դպրոցում, նշում, որ ըստ մի շարք արդի մանկավարժագետների, դաս-դասարանային համակարգում առկա են անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանը խոչընդոտող տարաբնույթ հանգամանքներ (Ի. Կ. Ժուրավլյով, Ի. Յ. Լերներ, Ի. Մ. Օսմոլովսկայա, Ա. Վ. Խուտորսկոյ, Ե. Ալեքսանդրովա և ուրիշներ), որ անհատական կրթության ուղիները չեն կարող լիարժեքորեն իրականանալ ընդհանուր միջնակարգ կրթության և ընդհանուր չափորոշիչային պայմաններում, հիմնավորում

անհատական մոտեցման սկզբունքի իրականացման անհնարինության վերաբերյալ գրականության մեջ նշված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, ապա 2.2 ենթագլխում լուսաբանում է ուսուցման գործընթացում անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական 4 պահանջները և անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանը համապատասխան համակարգի հոգեբանական, մանկավարժական ու սոցիալական բնույթի առանձնահատկությունները:

Մանկավարժական տեսանկյունից դիտարժան է, որ ատենախոսը նշված ուղիները ապահովելու նպատակով փոփոխություններ է առաջարկում նաև ուսուցման գործընթացի կազմակերպման ձևի բաղադրիչում՝ առանձնացնելով 2 հիմնական տարբերակ՝ մասնակի և ամբողջական, նույնը առաջարկում է նաև՝ ուսումնական նյութի յուրացման միջոցների մեջ: Որպես արդյունավետ ուղիներ հիմնավորապես դիտարկվում են՝

1. ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի անհատական առանձնահատկությունների բացահայտման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,

2. ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ուսումնական նյութի յուրացման, անձի զարգացման և կրթական այլ նպատակների իրականացմանն ուղղված գործընթացների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,

3. ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար ակտիվ, գործող սուբյեկտի կարգավիճակի ապահովումը,

4. ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի և մյուս անդամների միջև ՛՛բնականոն՛՛ այնպիսի հարաբերությունների ապահովումը, որոնք կնպաստեն համապատասխան բնույթի ուսումնական գործընթացի կազմակերպման, կառավարման, վերահսկման գործընթացների արդյունավետ իրականացմանը:

Առանձին ենթագլուխ նվիրված է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման գործընթացում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորություններին՝ արձանագրելով, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հայեցակարգային հիմքերի ուսումնասիրման և իրականացված հետազոտական աշխատանքների վերլուծության արդյունքում կարելի է պնդել, որ այդ պարապմունքներին իրականանում են անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջները:

Երրորդ գլխում, որը կրում է ՛՛Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն՛՛ խորագիրը, ատենախոսը, բացահայտելու համար տարրական դպրոցի ուսուցիչների մոտեցումներն ու պատկերացումները անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնահարցերի վերաբերյալ, նախ 122 ուսուցիչների շրջանում իրականացրել է 13 հարցից բաղկացած հարցաթերթիկային առցանց հարցում/հավելված 1/, ապա վերլուծել, մանրամասն մեկնաբանել և գնահատել է ստացված տվյալները, մաթեմատիկական մեթոդների կիրառմամբ կազմել արդյունքներն ամփոփող 9 տրամագրեր, ամփոփել հարցումների արդյունքները, կատարել մանկավարժական ու մեթոդական բնույթի եզրակացություններ:

Ապա հեղինակը մշակել է տարրական դպրոցում ուսուցման գործընթացի կազմակերպման մոդել, կազմակերպել դրա արդյունավետության փորձարկումը Ս. Մկրտչյանի անվան ՛՛ Բյուրակն՛՛ կրթահամալիրի տարրական դպրոցում և իր հետազոտության արդյունքներով հիմնավորել դրա արդյունավետությունը: Մոդելում ընդգրկվել են «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների՝ ատենախոսի կողմից վերամշակված ծրագրերի բովանդակությունը, կոլեկտիվ ուսումնական պարապմունքների մեթոդիկաներով աշխատելու կարողություններ և հմտություններ: Ըստ մոդելի առանձնացվել են ուսումնական գործընթացի կազմակերպման 3 փուլ՝ հայտորոշիչ /դիագնոստիկ/, հիմնական և քննական, ապա համոզիչ պարզաբանումներով մեկնաբանվել են յուրաքանչյուր փուլի իրականացման յուրահատկությունները: Բավականին դիտարժան են մոդելի իրականացման ընթացքում հանդիպած մի շարք խոչընդոտների լուսաբանումը /էջ 94/, որոնք որոշակիորեն դժվարացրել են մոդելի փորձարկման գործընթացը: Այսուհանդերձ, հնարավոր է դարձել իրականացնել անհատական ուսուցում՝ ապահովելով ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար ուսումնական գործընթացի արդյունավետության բարձր մակարդակ:

Մենք արժևորում ենք նաև այն հանգամանքը, որ ատենախոսը կարողացել է տրամաբանորեն հիմնավորել և մանրամասն ներկայացնել առաջարկված մոդելի առավելությունները:

Առանձնակի կարևորում ենք աղյուսակներում ամփոփված վերոնշյալ առարկաների չորս տարվա համար նախատեսված ծրագրերի հաշվառման վահանակները՝ ըստ խոշոր բաժինների, որոնք շատ բովանդակալից են, հետաքրքիր, ակնառու, մանկավարժական և մեթոդական առումներով համոզիչ, հետևողական հաջորդականությամբ ներկայացնում են մոդելի դրական

միտումները՝ հաստատելով առաջադրված վարկածի ճշմարտացիությունը: Վստահորեն կարելի է ասել, որ ատենախոսության մեջ իրականացված հետազոտության արդյունքները և դրանց հիմնավորումը ապացուցում են տեսական նյութի՝ գործնական արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքում ատենախոսը հասել է իր՝ աշխատության սկզբում դրված նպատակին, իրականացրել է հետազոտության 5 բազմագործառույթ, միմյանցից տարբեր խնդիրները, որոնք լիովին արտացոլվել են եզրակացության 9 կետերում, իսկ տեսական նյութը հաստատող հետազոտության անցկացումն ամբողջական է դարձրել տվյալ գիտական աշխատությունը:

Օգտագործված գրականության ցանկը վկայում է ատենախոսի կատարած լուրջ և խորը հետազոտության մասին. ուսումնասիրվել և ներկայացվել են ռուս և հայ մանկավարժների, հոգեբանների աշխատություններ, հանգամանորեն վերլուծվել են դրանք և տրվել է հիմնահարցի վերաբերյալ սեփական հայեցակետը:

Կատարված հետազոտությունը բավականին մեծ հետաքրքրություն է առաջացրել և ի հայտ բերել մի քանի հարցեր, որոնք ճշտելու և հստակեցնելու նպատակով ատենախոսին ներկայացրել ենք մեր որոշ դիտարկումները.

1. Աշխատանքում կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները բնութագրված չեն: Լավ կլիներ, որ ներկայացվեին դրանց առանձնահատուկ դրսևորումները հատկապես անհատական մոտեցման իրականացման համատեքստում:
2. Մեզ համար անհասկանալի և վիճակարույց է եզրակացություն 3-րդ կետում նշված հետևյալ միտքը. ՝՝եթե ուսումնական խմբի գոնե մեկ անդամի համար առկա է ուսումնական գործընթացի անարդյունավետ կազմակերպում, ապա անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը բացակայում է՝՝: Կարծում ենք, որ մեկ անդամի համար ուսումնական գործընթացի անարդյունավետ կազմակերպումը կարող է պայմանավորված լինել ուսուցման գործընթացի հետ հաճախ կապ չունեցող ամենատարբեր հանգամանքներով, որի ընթացքում, սակայն, կարող են միաժամանակ ապահովված լինել դասարանի մյուս անդամների նկատմամբ լիարժեք անհատականացված ուսուցման պայմաններ:

1. Հաճախ հանդիպում են ՝՝ բութ՝՝ կետադրական նշանի /էջ 3,4, 9, 43, 70, 78, 80, 103, 119/, ինչպես նաև խորագրերի վերջում վերջակետի անհարկի կիրառություններ, համակարգչային բնույթի վրիպումներ/3, 6, 7, 8, 51, 52, ,53, 54, 81, 95/, որոնք սակայն հեշտորեն կարելի է վերացնել:

Նշվածները, սակայն, չեն ազդում հետազոտության դրական բնութագրի վրա և հեշտությամբ կարող են վերացվել:

Ներկայացված ատենախոսությունը վկայում է ատենախոսի գիտական պատրաստվածության, թեմային լիարժեք տիրապետելու, տեսական և գիտական հիմնավորման, հետազոտություն անցկացնելու բարձր կարողությունների մասին: Ատենախոսությունն ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, գրված է շատ գրագետ, գիտական կուռ ոճով ու հստակ լեզվով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով, որ Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի ,,Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում,, թեմայով ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, ինքնուրույն, ամբողջական, և գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է և լիովին բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ժամանակակից պահանջներին, առաջարկում ենք թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական աստիճաններ շնորհող ԺԳ.00.01-,,Մանկավարժության տեսություն և պատմություն,, մասնագիտությամբ պաշտպանական խորհրդում:

Վ. Մկրտչյան /ատենախոս/: Շնորհակալություն տիկին Սիսյան առաջարկությունների և դիտարկումների համար: Դրանցից մի քանիսի հետ մասամբ ենք համաձայն, իսկ համապատասխան վրիպումները կշտկենք:

Գրախոս՝ Մանկավարժության ամբիոնի դոցենտ՝ մ. գ. թ. Մ. Գևորգյան

Վարդիթեր Մկրտչյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է շատ հետաքրքիր, կարեւոր և, միևնույն ժամանակ, մանկավարժության հավերժական թեմաներից մեկին՝ տարրական դպրոցում անհատական մոտեցման հիմնախնդրին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության գիտական ապարատը՝ արդիականությունը, մշակվածության աստիճանը, նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, մեթոդները և պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացված են գիտահետազոտական աշխատանքի փուլերը։

Առաջին "Անհատական մոտեցման սկզբունքն ուսուցման սկզբունքների համակարգում" խորագիրը կրող գլխում ներկայացված է «ուսուցման սկզբունքներ», «ուսուցման եղանակներ» հասկացությունների մեկնաբանումը տարբեր մասնագետների և հեղինակների ձևակերպմամբ, դասակարգված են ուսուցման սկզբունքները։ Ուսումնասիրված է անհատական մոտեցման սկզբունքի տեղն ու դերը ուսուցման սկզբունքների համակարգում, նորովի է սահմանել «ուսուցման անհատական մոտեցման սկզբունք» և «ուսուցման անհատականացում» հասկացությունները, վերլուծված է ուսուցման անհատականացված մոտեցման իրականացման առանձնահատկությունները դաս-դասարանային համակարգում։

Երկրորդ՝ «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման արդյունավետ ուղիները տարրական դպրոցում» խորագիրը կրող գլխում Վ. Մկրտչյանը գալիս է այն եզրահանգման, որ դաս-դասարանային համակարգում պահպանվում է ուսումնական խմբի միջինացված մակարդակը, երբ յուրաքանչյուր աշակերտ դասարանում անում է միևնույն բանը, միևնույն եղանակներով, միջոցներով, դրա համար հատկացված ժամանակում, ինչը ինքնին հակասում է անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանը։ Ապա հայցորդը ներկայացնում է անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջները, հիմնավորում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման համակարգի կառուցվածքային՝ հոգեբանական, մանկավարժական, սոցիալական առանձնահատկությունները։ Ուսումնասիրված է նաև կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները անհատական մոտեցման սկզբունքի իրականացման գործում։

Երրորդ գլխում՝ «Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն», հարցման միջոցով պարզել է տարրական դպրոցի ուսուցիչների մոտեցումներն ու պատկերացումները անհատական մոտեցման սկզբունքի իրականացման վերաբերյալ։

Բարձր գնահատականի է արժանի հայցորդի կողմից մշակված տարրական դպրոցում ուսուցման գործընթացի կազմակերպման բազմաշերտ մոդելը, որն իրականացվել է «Մայրենի»,

«Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների շրջանակներում՝ 4 տարվա ծրագրային բովանդակությամբ, ուսումնական գործընթացի կազմակերպման երեք փուլերով։ Ներկայացվել են նաև այն խոչընդոտները, որոնց բախվել է Վ. Մկրտչյանը մոդելի իրականացման ընթացքում, անհատականացված մոտեցման դեպքերի քննարկում, ամենօրյա քայլաշարի և առարկայական քայլաշարերի նմուշ-օրինակներ։

Հետազոտության եզրակացությունները արտահայտում են առաջադրված խնդիրները և աշխատանքի բովանդակությունը։ Գրականության ցանկը ներառում է 99 անուն գրական աղբյուրներ, որոնցից 77-ը՝ օտարալեզու։

Բարձր գնահատելով իրականացված հետազոտական աշխատանքը կցանկանայի նշել որոշ նկատառումներ։

1. Հետազոտական աշխատանքի գիտական վարկածը և գիտական նորույթը երկարաշունչ են և ծավալուն։ Մեր կարծիքով, գիտական նորույթի որոշ կետեր, մասնավորապես երկրորդ կետը «Հստակեցվել և նորովի են սահմանվել ուսուցման անհատական մոտեցման սկզբունք և անհատականացված ուսուցում հասկացությունները», կարելի էր զետեղել աշխատանքը տեսական նշանակությունը բաժնում։
2. Եզրակացությունները նույնպես երկարաշունչ են և թվով գրեթե կրկնակի գերազանցում են առաջադրված խնդիրները։ Մեր կարծիքով եզրակացության որոշ կետեր կարելի է խմբավորել և ավելի համապարփակ ներկայացնել։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված նկատառումները չեն իջեցնում գիտահետազոտական աշխատանքի արժեքը, այն ամբողջական, յուրովի, հստակ ձևակերպումներով և ինքնուրույն կատարված հետազոտական աշխատանք է և կարող է երաշխավորվել հրապարակային պաշտպանության։

Վ.Մկրտչյան /ատենախոս/։ Շնորհակալություն տիկին Գևորգյան։ Նշված դիտարկումների մի մասն արդեն շտկվել է, իսկ մյուսները կվերանայենք։

Ա. Թոփուզյան /նախագահ/ - Խնդրեմ ելույթներ

Մ.գ.թ., դոցենտ Նազարյան Լ.։ Ես, որպես տկն. Ասատրյանի գիտական դպրոցով անցած մարդ, խոսքս խորհուրդների հիման վրա կկառուցեմ։ Երևում է, որ հետաքրքիր աշխատանք է և ասպիրանտը բավականին աշխատել է, սակայն բավական բարդ է թե՛ բովանդակության, թե՛ ներկայացնելու առումով։ Խորհուրդ եմ տալիս, որ ավելի հանգիստ և դանդաղ խոսի, ինչպես

նաև խոսի սահիկներին համահունչ՝ պահելով հետադարձ կապը լսարանի հետ։ Բովանդակային առումով խորհուրդ կտամ, ուշադրություն դարձնել մի քանի կետի վրա, մասնավորապես՝ երբ նոր սսահմանում եք ներկայացնում, լավ կլինի, որ ներկայացնեք, թե նախորդ սահմանումը ինչու չի բավարարում։ Նաև, կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ռիսկերի վերաբերյալ, ցանկալի է, որ որևէ պատասխան հնչի։ Այսքանը, շնորհակալություն։

Մ.գ.թ., դոցենտ Բաբայան Է.: Իրապես, բավականին հետաքրքիր է Վարդիթերը՝ և՛ իր տեսակով, և՛ մտածելակերպով։ Շատ հետաքրքիր աշխատանք էր։ Միանալով գործընկերոջս կողմից նշված դիտարկումներին, ինքս էլ կարծում եմ, որ առավել ուշադրություն պետք է դարձնի աշխատանքը ներկայացնելու վրա։ Այնուամենայնիվ, երևում է, թե ասպիրանտն ինչ է արել, հետևաբար, ես նույնպես առաջարկում եմ երաշխավորել Վարդիթերի աշխատանքը հրապարակային պաշտպանության։

Մ.գ.թ., դոցենտ Պողոսյան Լ.: Ճանաչելով Վարդիթերին՝ գիտեմ որ շատ լավ աշխատանք է իրականացրել։ Իսկապես շատ հիմնավոր էին պատասխաններն ու պնդումները, համոզված եմ, որ նա ունի դրանց հետազոտական հիմքը։ Սակայն մի քանի դիտարկում ունեմ։ Ողջ ընթացքում այնպիսի տպավորություն ունեի, որ միայն ուսուցման կոլեկտիվ եղանակի շրջանակներում եք դիտարկել անհատական մոտեցման սկզբունքը։ Սակայն կարծում եմ, անհրաժեշտ է ներկայացնել նաև այլ տեխնոլոգիաների հնարավորությունները ևս։ Հասկանալի է, որ դուք կրում եք ուսուցման կոլեկտիվ տեխնոլոգիայի հայեցակարգային հիմքերը և փորձարկել եք այն, սակայն լավ կլիներ, եթե այն համեմատեիք մյուս տեխնոլոգիաների հետ՝ անհատական մոտեցման սկզբունքի իրականացման համատեքստում։ Այդուհանդերձ, աշխատանքի վերաբերյալ կարծիքս դրական է։ Առաջարկում եմ երաշխավորել այն հրապարակային պաշտպանության։

Մ.գ.թ., դոցենտ Հակոբյան Գ.: Այսօրվա մեր քննարկման բուռն ընթացքն արդեն իսկ վկայում է, որ թեման շատ հրատապ է, արդիական է և Վարդիթերը բավականին պատրաստված է և դաշտն ուսումնասիրած է։ Իհարկե 21-րդ դարի մարտահրավերներից ելնելով բազմաթիվ ռիսկային գործոններ կան, որոնց արժի անդրադառնալ, սակայն, քանի որ Ձեր դաշտն արդեն մշակված է և սերմերը ցանված են, մնում է, որ գեղեցիկ փնջեր անեք և մատուցման խնդիրը ճիշտ կազմակերպեք։ Շատ դրական տպավորություն է։ Մեզ ևս խորհելու շատ նյութ տվեց։ Անհատական մոտեցում դեռևս Արիական Հնդկաստանում, Բուդդայական դպրոցներում էլ կար,

սակայն այսօր մենք 21-րդ դարում ենք և այսօրվա առաջնահերթություններից բխող, հասարակական տեղաշարժերով պայմանավորված, այս գլոբալ տիրույթում պետք է նայենք։ Այդ առումով շատ լավ աշխատանք է։ Ես այսօր հետազոտական աշխատանքի որակ տեսա։ Կարծում եմ, որ բարձրաձայնված դիտարկումները հաշվի կառնի և առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

Մ.գ.թ., դասախոս Դալլաքյան Ա.: Վարդիթերին ճանաչում եմ վաղուց։ Մեր ուսանողն է եղել։ Իսկապես շատ լավ աշխատանք է կատարել։ Հետաքրքիր, բովանդակալից աշխատանք էր։ Շնորհավորում եմ նաև ղեկավարին։ Համամիտ եմ գործընկերներիս դիտարկումների հետ։ Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

Մ.գ.թ., դոցենտ Հովհաննիսյան Ա.: Վաղուց գիտեմ Վարդիթերին։ Ողջունում եմ, որ մեր համալսարանում նման մասնագետներ պիտի շուտով գան և մենք պիտի գրկաբաց ընդունենք։ Համարձակ թեմա է, չկրկնվող։ Վարդիթերը տիրապետում է ամբողջ դաշտին, պատրաստված է։ Սակայն մի դիտարկում պետք է անեմ։ Վարդիթեր խորհուրդ եմ տալիս, կատեգորիկ մերժումները, «ոչ»-երը փխրեցնել, հանդուրժողաբար վերաբերվել այլոց կարծիքներին։ Իսկապես ունես մասնագիտական պատրաստվածություն, աշխատասեր ես, երիտասարդ ես, առաջ գնալու ձգտումը կա։ Մենք էլ միշտ պատրաստ ենք օգնել, աջակցել։ Ես ուրախ եմ, որ էսպիսի կադրեր ունենք և պատահական չէ, որ մեր համալսարանում էսպիսի կադրեր կան։ Հրաշալի աղջիկ է, հրաշալի դասախոս կլինի։ Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

Մ.գ.դ., պրոֆեսոր Թոփուզյան Ա.: Ես էլ եմ միանում իմ գործընկերներին։ Ես Վարդիթերին վաղուց գիտեմ։ Նրան դաս եմ տվել և՛ մագիստրատուրայում, և՛ ասպիրանտուրայում։ Վարդիթերն առանձին ելույթ է ունեցել «Կոլեկտիվ ուսուցման հիմնախնդիրները» թեմայով ասպիրանտական մեր խմբում և նա բոլոր «գրոհներին» պատվով արժանի հիմնավորումներ ու պատասխաններ է տվել։ Էնպես որ Վարդիթերին վախեցնելն այդքան էլ հեշտ չի։ Ինքն անցել է բավականին երկար ճանապարհ և տիկին Ասատրյանը ճիշտ ասաց, որ բոլոր դեպքերում յուրաքանչյուր կարծիք պետք է հնարավորություն ունենա բարձրաձայնվելու։ Շատ բաներ ինչ ինքն ասաց, գուցե մենք դեռ լիովին չենք մարսել, ինչպես նշեց տիկին Հակոբյանը, գուցե մենք լիովին չենք հասկանում կամ կան բաներ, որոնց հետ հիմա մենք համաձայն չենք, բայց դա չի նշանակում, որ մենք ենք ճիշտ և ոչ թե ինքը։ Մյուս կողմից հակառակն էլ կարող է լինել,

Վարդիթերն էլ պիտի հասկանա, որ ինքը հնչեցնում է իր կարծիքը և բոլորովին պարտադիր չէ, որ մենք բոլորս լինենք իր հետ համակարծիք։

Բացի այդ, շնորհակալություն եմ ուզում հայտնել տիկին Սիսյանին և տիկին Գևորգյանին, որ կարդացել են աշխատանքը, մանրամասն ուսումնասիրել են այն և շատ ճիշտ դիտողություններ են արել, որոնք ուղղված են միայն աշխատանքն առավել լավը դարձնելուն։ Ես էլ եմ կարծում, որ շատ բաներ կային աշխատանքում, որոնք չներկայացվեցին և Ձեր խնդիրն է՝ ներկայացնել Ձեր արածը, իսկ մնացածի առնչությամբ թող Ձեզ հարցեր տան։ Իսկ ես վստահ եմ, որ եթե Ձեզ հարց տան, ապա դուք կկարողանաք Ձեր տեսակետը գոնե ասել, բայց խորհուրդ կտամ նաև մերթընդմերթ ասել, որ դա իմ տեսակետն է կամ ես հարգում եմ Ձեր կարծիքը, սակայն ես այլ կարծիքի եմ։ Դա ամոթ չէ, փոխարենը կմեղմի իրավիճակը։

Այսպիսով, ելնելով ատենախոս Վ.Մկրտչյանի պաշտպանական խոսքից, ընդդիմախոսների և մյուս ելույթ ունեցողների կարծիքներից և առաջարկություններից, իրեն տրված հարցերին ատենախոսի պատասխաններից՝ կարող ենք նշել, որ ատենախոսությունը կուռ, ամբողջական գիտական հետազոտություն է, որն ունի գիտատեսական և գործնական մանկավարժական արժեք։ Հետազոտության տվյալները հավաստի են, հեղինակի հրատարակած հոդվածներում լիարժեք ընդգրկված են հետազոտության արդյունքները, ուստի առաջարկում եմ ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

ՈՐՈՇԵՑԻՆ

3. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում» խորագրով թեկնածուական ատենախոսությունը ավարտուն, ամբողջական, գիտագործնական նշանակություն ունեցող աշխատանք է, համապատասխանում է ՀՀ Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին։
4. Այն երաշխավորել հրապարակային պաշտպանության։

/Կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

03.06.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2021-2022 ուս. տարվա բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ամփոփիչ ատեստավորումների արդյունքների մասին:
2. Առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները վերանայելու մասին:

3. ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսի նախապատրաստման մասին:
4. Ընթացիկ հարցեր
   - Պրոֆմիութենական կազմակերպության ընտրությունների վերաբերյալ /զեկ. Գ. Եգանյան/
   - Ն. Մարտիրոսյանի և Ա. Դալլաքյանի դոցենտի կոչում ստանալու մասին:
   - Ամբիոնի մ.գ.թ., դասախոս Նարինե Ռուբիկի Մարկոսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորություն տալու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - 2021-2022 ուս. տարվա բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ամփոփիչ ատեստավորումների արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան - Ավարտվեցին բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները: Ընդհանուր առմամբ աշխատանքներն ամբողջական էին, սակայն կան առաջարկություններ և դիտարկումներ, որոնք նշված են ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում: Մասնավորապես.

- հետազոտական աշխատանքի իրականացման քայլաշարում թույլ է արտահայտված համեմատական-վերլուծական տարրը,
- ուսանողները դեռևս դժվարանում են հարցին պատասխանել ըստ էության, շատ են ծավալվում,
- ոչ բոլոր ուսանողներն են կարողանում տեղավորվել սահմանված ժամանակի տիրույթում,
- հետազոտություն իրականացնելու մեթոդները որոշ դեպքերում արհեստական էին և չէին նպաստում հետազոտության տրամաբանությանը,
- ուսումնասիրվող թեմայի նպատակի ձևակերպումները որոշ դեպքերում իրատեսական և չափելի չէին,
- կային հետազոտություններ, որոնց հավաքագրված տվյալները հավաստի չէին, որակական վերլուծությունների հնարավորություն չէին ստեղծում,
- որոշ ուսանողների շրջանում զգացվում էր հանրակրթության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի իմացության ոչ բավարար մակարդակ,

- ուսանողների կողմից կատարված մի քանի աշխատանքներ արդիականությունից զուրկ չէին, սակայն լրամշակման կարիք ունեին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաշվի առնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների դիտարկումները հաջորդ տարիների ավարտական աշխատանքները և թեզերը պատրաստելիս: 2. Ընտրել փոքր թեմաներ, որոնք կհամապատասխանեն բակալավրի և մագիստրոսի գիտելիքների և հմտությունների մակարդակին և նրանց առջև դրվող պահանջների կատարմանը: 3. Ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների և թեզերի կատարման ամբողջականության ապահովմանը և էմպիրիկ մեթոդներով անցկացված հետազոտությունների արդյունքների վերլուծությանը և դրանք աշխատանքի եզրակացությունների հիմքում դնելուն:

2. **ԼՍԵՑԻՆ** – ՄԿԾ-ների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները վերանայելու մասին:

Ա. Թոփուզյան – Ինչպես գիտեք համալսարանում իրականացվում է ՄԿԾ-ների վերանայման գործընթաց: Մենք ձեզ ուղարկել ենք «Մանկավարժություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը և մեթոդական նյութեր, որոնք պետք է հաշվի առնեք ՄԿԾ-ների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները վերանայելիս: Խնդրում եմ ուսումնասիրեք նաև առարկայական չափորոշիչներն ու դրանց վերջնարդյունքները և կախված այն հանգամանքից, թե որ ֆակուլտետում և որ մասնագիտությամբ կուրսերում եք դասավանդելու առարկան, Ձեր ՄԿԾ-ում առնվազն 4 ժամ /2 ժամ տեսական և 2 ժամ գործնական/ հատկացրեք տվյալ հանրակրթական առարկայի չափորոշչին: Հանրակրթության վերջին չափորոշիչները և ընդհանրապես դպրոցում ամբողջ աշխատանքը գնում է 3 հիմնական ուղղություններով՝ սովորողների կոմպետենտային ուսուցում, նախագծային ուսուցում և արժեքային համակարգի ձևավորում: Ուստի խնդրում եմ, որ Ձեր ՄԿԾ-ներում, ցանկացած առարկայի դասավանդման ընթացքում, 1 կամ 2 գործնական աշխատանքի միջոցով ապագա ուսուցիչներին սովորեցնեք նախագծի անցկացման եղանակը՝ որպես տեխնոլոգիա և նախագծի թեման ընտրելիս հաշվի առնեք տվյալ առարկայի գծով հանրակրթական չափորոշչի բովանդակությունը՝ ընտրելով նախագծի համապատասխան թեմա: Օրինակ, պատմության ֆակուլտետում նախագծի թեման կարող է լինել 8-րդ դասարանում դասավանդվող ՛՛Երեխաների իրավունքների մասին՛՛:

Պատվեր ենք ստացել «Մանկավարժություն» առարկայի ծրագրում ներառել ՀՀ կրթության օրենսդրության մասին թեմաներ: Այն ֆակուլտետներում, որտեղ առարկան դասավանդվում է 2 կիսամյակով, օրենսդրությանը պետք է հատկացնել 10 ժամ, իսկ 1 կիսամյակի դեպքում՝ 5 ժամ: Որպեսզի առարկայի ծրագիրը շատ չծանրաբեռնեք, խորհուրդ եմ տալիս օրենսդրությանը վերաբերող որոշ ժամաքանակ ներառել ինքնուրույն աշխատանքի բաժնում՝ գնահատվող առաջադրանքների ձևով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյանը, Ս. Սիսյանը, Ս. Ջանիկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Վերանայել ՄԿԾ-ները և կատարել համապատասխան լրամշակումներ՝ դրանք ՄԿԾ-ների վերջնարդյունքներին, ՛՛Մանկավարժություն՛՛ որակավորման ոլորտային շրջանակի բնութագրերին և հանրակրթության չափորոշիչներին համապատասխանեցնելու առումով:

3. **ԼՍԵՑԻՆ** - ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսի նախապատրաստման մասին:

Ա. Թոփուզյան – Հիշեցնում եմ, որ մեր համալսարանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետն այսօր է, իսկ հոդվածները ներկայացնելու վերջնաժամկետը 15.07.2022թ.: Խնդրում եմ սահմանված ժամկետներում ուղարկել հայտերն ու հոդվածները, քանի որ մեր ամբիոնի բոլոր դասախոսները պետք է պարտադիր մասնակցեն գիտաժողովին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Դալլաքյանը, Լ. Նազարյանը, Ն. Մարտիրոսյանը

4. Ընթացիկ հարցեր

- **ԼՍԵՑԻՆ** – Պրոֆմիութենական կազմակերպության ընտրությունների վերաբերյալ:

Գ. Եգանյան – Պրոֆմիությունը 5-րդ համաժողովին ընդառաջ նախատեսում է 4-րդ համաժողովի որոշումների իրականացման ամփոփում, որն ընդգրկում է 2017-2022թթ. պրոֆբյուրոյի հաշվետվությունը: Հաշվետվությունը հասանելի է բոլորիդ համար, մենք ունեցել ենք միջոցառումների շրջանակ այդ 5 տարիների ընթացքում, ունեցել ենք առողջապահության նպատակներով բժշկական ծառայության համար նախատեսված ֆինանսական աջակցություն, ունեցել ենք ամանորյա նվերներ, կանանց տոների առիթով նվերներ, 3-9 տարեկան երեխա ունեցողների համար միջոցառումների տոմսեր և ամանորյա նվերներ: Հաջորդ հարցը, որը քննարկվելու է պրոֆբյուրոյի կազմի ընտրությունն է: Նախկինում ամբիոնի պրոֆբյուրոյի

նախագահը եղել է Գ. Եգանյանը, անդամները՝ Գ. Հարությունյանը և Ն. Մարկոսյանը: Այժմ պրոֆբյուրոն պետք է վերակազմավորվի, ուստի խնդրում եմ արտահայտել ձեր կարծիքները և առաջարկությունները ամբիոնի պրոֆբյուրոյի կազմի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Աղուզումցյանը, Ի. Բաբայանը

ՈՐՈՇԵՑԻՆ – **1.** Մանկավարժության ամբիոնի արհմբյուրոն վերընտրել հետևյալ կազմով.

- ✓ Եգանյան Գայանե Գագիկի – մ.գ.թ., դոցենտ
- ✓ Հարությունյան Գայանե Նորիկի - մ.գ.թ., դոցենտ
- ✓ Ջանիկյան Սուսաննա Ռոբերտի - մ.գ.թ., դոցենտ

2. Ամբիոնի արհմբյուրոյի նախագահ վերընտրել ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գայանե Գագիկի Եգանյանին:

3. ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպության 5-րդ համաժողովի պատվիրակ ընտրել Մանկավարժության ամբիոնի արհմբյուրոյի նախագահ՝ դոցենտ Գայանե Եգանյանին և Մանկավարժության ամբիոնի դոցենտ Սուսաննա Սիսյանին:

- **ԼՍԵՑԻՆ** - Ն. Մարտիրոսյանի և Ա. Դալլաքյանի դոցենտի կոչում ստանալու մասին:

Ա. Թոփուզյան – Ցանկանում եմ բոլորիս անունից շնորհավորել տիկին Ն. Մարտիրոսյանին և Ա. Դալլաքյանին դոցենտի գիտական կոչում ստանալու կապակցությամբ: Վստահ եմ, որ այս կոչմամբ վերջակետ չի դրվում, այլ ավելի մեծ եռանդով և նվիրվածությամբ տիկին Մարտիրոսյանը և Դալլաքյանը կզբաղվեն մանկավարժական գործունեությամբ և մանկավարժական գիտահետազոտական աշխատանքով:

- **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի մ.գ.թ., դասախոս Նարինե Ռուբիկի Մարկոսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորություն տալու մասին:

Ա. Թոփուզյան – Ն.Մարկոսյանը 2005-2012թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մանկավարժության միջֆակուլտետային ամբիոնում որպես դասախոս, այնուհետև՝ 2012–2019թթ. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս: 2019թ.-ից մինչ օրս հանդիսանում է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մանկավարժության ամբիոնի դասախոս:

2014թ.-ին «Մանկավարժություն-020» մասնագիտական խորհրդի որոշմամբ Ն.Մարկոսյանին շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (մասնագիտությունը՝ ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»):

Նա 7 ուսումնամեթոդական ձեռնարկների համահեղինակ է, 21 գիտական հոդվածների հեղինակ, որոնցից 11-ը տպագրվել են թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո, դրանցից էլ 4-ը տպագրված են ցիտման «РИНЦ» համակարգում ընդգրկված ամսագրերում: 2022թ.-ին Ն.Մարկոսյանը հրատարակել է նաև «Մանկավարժի պրակտիկ աշխատանքի տեղեկատու» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը:

Ատենախոսության պաշտպանությունից հետո նա ղեկավարել է 12 մագիստրոսական հետազոտական աշխատանք և 7 ավարտական աշխատանք «Սոցիալական մանկավարժություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների գծով: Ղեկավարել և հիմա էլ ղեկավարում է բակալավրի կրթական ծրագրի շրջանակում կուրսային աշխատանքներ, ինչպես նաև բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանակներում մանկավարժական, ուսումնաճանաչողական և հետազոտական պրակտիկաներ:

Մասնակցել է մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման շուրջ մեկ տասնյակ դասընթացների, հանրապետական և միջազգային երկու տասնյակ գիտագործնական մասնագիտական համաժողովների և վեբինարների:

Ներգրավված է եղել ամբիոնի կողմից կազմակերպված գիտաժողովներում և այլ գիտական ու գիտաուսումնական ծրագրերում: Իրականացրել է ուղղորդիչ-քարոզչական աշխատանքներ՝ ներկայացնելով ՀՊՄՀ-ի վերջին տարիների նշանակալի ձեռքբերումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյանը, Ա. Հովհաննիսյանը, Ի. Բաբայանը

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ-ի գիտական խորհուրդ ներկայացնել մ.գ.թ., դասախոս Նարինե Ռուբիկի Մարկոսյանի թեկնածությունը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

01.07.2022р.